



ԶԱՄԻԱԾԻՆ





Ի Ը
ՏԱՐԻ





ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Կ. Գ. Ի. Ի.

1971



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ

ԵԹՈՎՊԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐԷԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՀԱՄԱՅՆ ԵԹՈՎՊԻՈՅ ՈՒՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐԷ՝ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԱՔՈՒՆԱ ԹԷՈՖԻԼՈՍԻՆ, ՄԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՂԱՅՐԱԿԱՆ Ի ՀԱՄԱՐՈՅՐ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԱՅԻՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ

Ադիս-Աբեբա

Աստուծոյ ողորմութեամբ ուրախ սրտով կ'ողջունենք բարի լուրը Ձեր ընտրութեան իբրև Պատրիարք Եթովպական պատմական սուրբ Եկեղեցոյ:

Հայաստանեայց առաքելական սուրբ Եկեղեցին և անոր բազմադարեան կեդրոնը սուրբ Էջմիածին, միշտ ամենաջերմ գգացումներ տածած են դէպի ձեր սուրբ Եկեղեցին, որ առաքելական ժամանակներէն սկսեալ, բազում դարեր հանդիսացած է, և մեր օրերուն ալ կը հանդիսանայ, լուսատւ սիւն մը քրիստոնէական հաւատքի, ամուր հաստատուած եթովպական նուիրական հողին վրայ և Եթովպիոյ աստուածաւեր ժողովուրդի սրտին մէջ:

Մենք յոյժ երջանիկ ենք որ այժմ, եթովպական մեր քոյր Եկեղեցին, սուրբ Հոգւոյ ներշնչմամբ, Ձեզ ընտրած է գլուխ և առաջնորդ Եկեղեցոյ՝ իբրև արժանատրագոյն և ամենահեղինակաւոր հոգևոր դէմքը ձեր նուիրապետութեան:

Եղբայրօրէն հոգևին կը հրճուինք Ձեր ընտրութեան և գահակալութեան անտիսով և կ'աղօթենք որ Տէրը Ձեզի պարգևէ երկար տարիներ, երջանիկ հովուապետութեամբ ու փայլուն իրագործումներով:

Թող Աստուած յաւիտ անասան պահպանէ ձեր մեծ Եկեղեցին և ձեր ժողովուրդը, Ձեր բարի և իմաստուն առաջնորդութեամբ:

Թող Աստուած յաւիտ խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահէ ձեր քրիստոսապաշտ երկիրը՝ Եթովպիան, Նորին Կայսերական Մեծութիւն՝ Հայիլէ Սելասիէի փառապանծ հովանիին ներքոյ, որ մեր օրերու աշխարհին մէջ, կը հանդիսանայ խաչապսակ պաշտպանը քրիստոնէական հաւատքի, խաղաղութեան դատի և ժողովուրդներու եղբայրութեան, ինչպէս և հարազատ բարեկամը հայ Եկեղեցոյ և ժողովուրդի:

Ընդունեցէք, սիրեցեալ Եղբայր, Մեր սէրը և Մեր ջերմագին մաղթանքները Ձեր նուիրական առաքելութեան յաջողութեան և ձեր սուրբ Եկեղեցոյ ծաղկումին համար:

«Ինքն Աստուած և Հայր մեր և Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ողղեսցէ զանապարհս մեր առ ձեզ»։ ամէն:

Տուա կոնդակս ի 29-ը ապրիլի
1971 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԺԹ,
ի մայրավանս ս. Էջմիածնի
ՀՄՐ. 703

ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ ՓՐԿՉԻ
ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

(1971 թ. ապրիլի 11)

«Յանուն Հօր և Ռդույ և Հոգւոյն սրբոյ». ամեն:

Սիրեցալ հավատացալ ժողովուրդ մեր,

«Յարեաւ Քրիստոս ի մեռելոց»:

Այդ պատահեցաւ երկու հազար տարիներ առաջ...

Մեծագոյն դէպքը մարդկային ոգեկանության պատմության մեջ, կան-
խազագցված աշխարհի կրօններու կողմէ, բայց մանավանդ կանխագուշակ-
ված ու ծանուցված Հին Ուխտով:

Հիսուս՝ կատարումն օրինաց և մարգարեից:

Հիսուս՝ արեգակ արդարության և իշխան խաղաղության:

Հիսուս՝ մխիթարիչ հալածյալներու, գրկւալներու, վշտահարներու, սգա-
վորներու:

Հիսուս՝ ճանապարհ փրկության և հավիտենական կյանքի:

Եվ Հիսուս, մեղքի այս աշխարհին մեջ, ցմրուր ըմպելէ հետո բաժակը
բոլոր դառնություններու, խաչը հանվեցաւ անիրավներու ձեռքով և մեռավ:

Երկինքը խավարեցաւ: Հույսի աստղերը մարեցան: Արդարները լացին:

Ուշ ատեն, աշակերտները առին մարմինը Հիսուսի և թաղեցին փորված
ժայռին մը մեջ, ծածկելով այն ծանր քարով:

Խաչյալ Վարդապետի աշակերտներէն՝ Մատթէոս, ժամանակակից վկա,
իր Ավետարանին մեջ կ'պատմէ՝ «Երբ միաշաբաթը կ'ուսանար, Մարիամ
Մագդաղենացին և մյուս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու: Եվ ահա մեծ
երկրաշարժ եղավ, Տիրոջ հրեշտակը երկինքէն իջնելով՝ մոտեցաւ գերեզմա-
նին, դռան վեճը մեկ կողմ գլորեց և նստավ վրան: Անոր տեսքը փայլակի

նման էր ու անոր զգեստը՝ սպիտակ ինչպես ձյուն: Վախեն, պահապանները խոռվեցան և մեռելներու պես եղան: Հրեշտակը խոսեցավ և ըսավ կիներուն. «Դուք մի վախճաք, գիտեմ թե կփնտրեք Հիսուս որ խաչվեցավ, այստեղ չէ ան, քանզի հարություն առավ, ինչպես ինք ըսած էր: Եկեք-տեսեք այն տեղը ուր պառկած էր: Եվ իսկույն գացեք ու ըսեք անոր աշակերտներուն թե յարություն առավ»:

Հիսուսի գերեզմանը դատարկ էր:

Շաբաթ գիշեր դեպի լույս միաշաբաթ, երբ հեռու հորիզոնին վրա լույսի առաջին ճառագայթները պիտի արձակվեին, կատարվեցավ մեծ դեպքը, հրաշքը: Հիսուսի մարմինը հոգի և շունչ առավ, գլորեց ծանր քարը գերեզմանին, և բարձրացավ երկինք դեպի անհունը կապույտին ու լուսին: «Յարևաւ Բրիստոս ի մեռելոց»:

Ոչ մեկ մահկանացու տեսավ անոր հարությունը: Միակ նյութական վկան դատարկ գերեզմանը եղավ: Բայց վկայեցին հոգիները. հոգիները Վարդապետի աշակերտներուն, հոգիները խոնարհ բազմություններուն: Վկայեցին դարերը և սերունդները բոլոր: Եվ այսօր ալ կվկայեն հավատավոր ազգեր, ժողովուրդներ, հորիզոնն հորիզոն:

Շատեր հարց տվին և տակավին կու տան՝ թե ինչպե՞ս բացատրել այս վկայությունը, քանի որ հարության հրաշքը բնության օրենքներով կարելի չէ բացատրել: Բայց կխորհինք թե ավելի ուղիղ և գիտական պիտի ըլլար ըսել, թե հարության հրաշքը բացատրելի չէ ա՛յո՝ գիտության ցարդ հայտնի օրենքներով: Արդարև, անոնք գուցե չնչին մասը կկազմեն օրենքներու այն ամբողջին, որոցմով գո է և կդեկավարվի անծայրածիր ու անվախճան տիեզերքը համայն: Ո՛վ գիտե, տակավին քանի դարեր, մարդիկ պիտի տքնին հայտնաբերելու համար բազում օրենքներ ու գիտելիքներ ցայժմ անծանոթ: Եվ արդյոք, երբևիցե մարդ պիտի հասնի՝ տիեզերքի օրենքներու ամբողջին հայտնագործության, քանի որ իր իմացականությունը սահմանավորված է ի բնե, ըստ նորագույն գիտական հաստատումներու:

Եվ հետևաբար, գուցե միայն մարդու հոգին թռիչքն է, որ ազատ ամեն սահմանավորումն, պիտի մնա ճշմարիտ հայտնագործողը և վկայողը հարության հրաշքին:

Բնական իմացությամբ անմատչելին, իմանալի ու ճանաչելի կդառնա՝ հայտնությամբ:

Եվ տակավին կխորհինք ու հարց կու տանք՝ արդյոք նյութական բնության իսկ մեջ, կա՞ կյանք առանց հարության: Արդյոք, ինքը կյանքը, արգասիքը չէ՞ հարության հրաշքին: Ապրող ու մեռնող բջիջին մեջ իսկ, չկա՞ խորհուրդը նոր կյանք ստեղծող հրաշագործ մղումին: Ակներև կթվի թե բնության ծոցին մեջ իսկ, կյանքի ու մահվան և հարության երևույթներու միջև՝ կա օրինաչափ խորհրդավոր հարաբերություն մը:

«Եթե ո՛չ հատն ցորենոյ անկեալ չերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթե մեռանիցի բազում արդիւնս առնէ» (Յովհ. ԺԲ 24—25):

Եվ տակավին, Հիսուսի հարությունը, մեզի քրիստոնյաներու համար ունի փրկչագործական խորհուրդ և բարոյական իմաստ:

Հիսուս, Որդին Աստուծո և Մարդո, խաչվեցավ և մահը ճաշակեց մարդոց մեղքերուն համար, և խափանելով արմատները չարին, մեղքին՝ հաղթեց մահվան և հարություն առավ, բանալով ճանապարհը մարդու փրկության: Հիսուս «Մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իյրով մեզ զկեանս պարգեւեաց»:

Հիսուսի հարությունը ոչ միայն հաղթությունն է կյանքին՝ ընդդեմ մահվան, այլ նաև բարին՝ ընդդեմ չարին: Մահվան հետ՝ մեղքը խափանվեցավ հարության հաղթանակով, զի մահը մեղքն իսկ է: Ինչպես նյութական աշխարհի մեջ, մշտանորոգ անվախճան կյանք կա, մահեն դեպի վերածնունդ տանող խորհրդավոր օրինաչափությամբ մը՝ այնպես ալ մարդու հոգեկան աշխարհին մեջ, նույնքան խորհրդավոր օրինաչափությամբ, հավիտենական կյանքի հույսը կա, մեղքի կապանքներեն ազատագրումով:

«Զի թոշակն մեղաց մահ է, այլ շնորհքն Աստուծոյ կեանք յափտենական ի Քրիստոս Յիսուս» (Հռոմ. Զ 23):

Ուրեմն մեր մեղքերուն խափանումը, մեր հաղթությունը չարին դեմ, ճշմարիտ ճանապարհը կհանդիսանա դեպի հավիտենական կյանք: Այս է քրիստոնեական բարոյականության հիմքը, խարսխված Հիսուսի հարության փրկչագործ տնտեսության վրա:

Միրելի ժողովուրդ, այսօր ալ տակավին, կյանքը, աշխարհը լեցուն են մեղքերով, չարին որոգայքներով ու ավերումներով:

Մոլություններ ու վատառողջ կիրքեր, ազահություն ու նախանձ, զոռություն ու ատելավառ ոգի, այնքան ավերումներ կգործեն մարդկային ընտանեկան և հասարակական կյանքին մեջ: Բայց մանավանդ ընկերային ու քաղաքական անիրավություններ ու բռնություններ, ազգամիջյան թշնամություններ, ցեղային խտրականություններ և արյունահեղ պատերազմներ, մեր օրերու աշխարհը կդարձնեն թատերաբեմը բազում դժբախտություններու, տառապանքներու, կործանումներու և հազար-հազար մարդկային անմեղ զոհերու:

Ի տես այս ողբերգական պատկերին, մենք մեր հալացքը կբարձրացնենք դեպի երկինք, հալցելով ողորմություն և օգնականություն, որպեսզի մեր Փրկչին հրաշափառ հարության շնորհները լուսավորեն մարդոց և ժողովուրդներու գիտակցությունը և ճանապարհը ցույց տան հաշտության, մարդասիրության և խաղաղության:

Մենք՝ քրիստոնյաներս, պարտինք սիրով ու համբերատարությամբ մեր հոգևոր նպաստը, մեր անսակարկ ծառայությունը մատուցել, որպեսզի մեր օրերու մարդկության տկարացած բարոյական խիղճը զորանա ու պայծառանա, Ավետարանական բարոյականի անկորնչելի պատգամներով: Այս առաքելության ճանապարհին, մեր հզորագույն զենքը պիտի հանդիսանա՝ Հիսուսի հարության շնորհներով ամուր վահան դարձած՝ հաղթության մեր հավատքը՝ ընդդեմ մահվան, ընդդեմ մեղքին ու չարին:

Միրելի հավատացյալ ժողովուրդ որ ի Հալաստան և ի սփյուռս աշխարհի, Մենք ձեր Հայրապետը և առաջին սպասավորը մեր սուրբ եկեղեցվո, ա՛յս հավատքով և ա՛յս լավատեսությամբ կողջունենք ձեզ բոլորդ՝ Քրիստոսի լույս հարության ավետիսով, և Փրկչի Իջման սուրբ սեղանեն և հալոց վերածնած ու խաղաղ աշխարհեն, կհղենք ձեզի մեր հայրական օրհնությունը, բարի մեր մաղթանքներով հանդերձ, որ Տերը ձեզ բոլորդ պահպանե ամբողջ ու անխռով, անփորձ ու անվտանգ, եղբայրական սիրով միաբան, ձեր բոլոր եկեղեցաշեն ու հայրենանվեր գործոց լիակատար հաջողությամբ:

Կմնանք նաև միշտ անձանձրույթ աղոթող՝ որ դադարին պատերազմները, խափանվին թշնամությունները, վերանան անիրավությունները, ու աշխարհի վրա տիրե խաղաղություն և արդարություն և ժողովուրդներու միջև եղբայրություն ու շինարար գործակցություն:

Այս է նաև դարավոր իղձը մեր ազգին, որ անցյալի մեջ քանի-քանի անգամներ մահվան դուռը հասավ, բայց ապրելու և հաղթելու հավատքով գրահված, նոր կյանքի լուսաբացը ողջունեց, և որ ահա ավելի քան կես դարե ի վեր նույն հավատքով բոցավառ, վերաշինեց իր քանդված երկիրը, մեր օրերուն ծաղկող խաղաղ ու ապահով աշխարհը Հայաստան:


Մեզի՝ բոլոր հայերուս համար ինչքան մխիթարական է, և ինչքան հուսադրիչ, Քրիստոսի հարության ավետիսով ողջունել՝ մեռելներեն հարություն առած մեր հարազատ ժողովուրդը որ մայր հողի վրա օրավուր կանի, կգորանա և իր ոսկի ապագան կդարբեն լույս տեսիլքներով:

Մեր հոգին կվկայե թե այսօր, աշխարհի բոլոր հայերը, անխտիր, իրենց հոգիներու հայացքը կուղղեն սուրբ գրական Արարատին և սրբազնասուրբ Էջմիածնին և փառք կու տան Արարչին որ ճշմարտապես հարություն առած է Մայր Հայաստանը հավիտենական:

Ողջո՛ւյն և օրհնություն՝ մեր վերածնած սուրբ հայրենիքին և համայն ժողովուրդին մեր արդար:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:





ՓԻԿԶԻ ՀՐԱԾԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ
ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթողիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Սրբություն
ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻՆ (Հոռմ),
Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
ԱԹԵՆԱԳՈՐԱՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարքական տեղապահ,
Նորին Գերաշնորհություն միտրոպոլիտ ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն
ՆԻԿՈՂԱՅՈՍ Զ - ԻՆ (Ալեքսանդրիա),
Ղպտի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲՈՒՆԱ ԿՅՈՒՐԵՂ Զ - ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց պատրիարք, Նորին Սրբություն
ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻՆ (Երուսաղեմ),
Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ԷԼԻԱՍ Դ - ԻՆ (Դամասկոս),
Անտիոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄՈՍ Ե - ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի սիրիական կաթողիկ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ Ա ՀԱՅԵԿ Բ - ԻՆ (Բեյրութ),

Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի պատրիարք,

Նորին Սրբություն Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Հ Ա Կ Ո Ր Գ - Ի Ն (Դամասկոս),
Համայն Եթովպիայի պատրիարք, Նորին Սրբություն

Ա Բ Ո Ի Ն Ա Թ Ե Ո Ֆ Ի Լ Ո Ս Ի Ն (Ադիս-Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն

Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ո Ի Կ Ե Ն Ա - Ի Ն (Քոթայամ),
Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն

Ե Փ Ր Ե Մ Բ - Ի Ն (Թբիլիսի),
Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն

Ժ Ո Ի Ս Տ Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),
Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարքական տեղապահ,

Նորին Գերաշնորհություն միտրոպոլիտ Պ Ի Մ Ե Ն Ի Ն (Սոֆիա),
Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Սրբություն

Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Զ Ի Ա Դ Ե Ի Ն (Բելյուրթ),
Քենտրբերիի արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և

միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Մ Ա Յ Ք Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն
(Լոնդոն),

Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
Հ Ե Ր Ո Ն Ի Մ Ո Ս Ի Ն (Աթենք),

Սերբիայի և համայն Հարավսլավիայի պատրիարք, Նորին Սրբություն
Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),

Վարչավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
Ս Տ Ե Ֆ Ա Ն Ի Ն (Վարչավա),

Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհու-
թյուն Դ Ո Ր Ո Ֆ Ե Ի Ն (Պրագա),

Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Զ Պ Ա Թ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Բելյուրթ),

Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Նիկոզիա),

Նորին Գերազանցություն կարդինալ
Ա Ղ Ա Զ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
դոկտ. Է. Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),

Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
կարդինալ Ֆ Ր Ա Ն Յ Գ Յ Ո Ն Ի Գ Ի Ն (Վիեննա),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Յ. Պ. Մ Ա Տ Ո Ի Լ Ի Ս Ի Ն (Ռիգա),

Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Ա Լ Ֆ Ր Ե Դ Տ Ո Ո Մ Ի Ն Գ Ի Ն (Տալլին),

Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ն Յ Ա Ն Ի Ն (Բելյուրթ),

Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ
Ն. Է Ր Մ Ի Ն Ի Ո Ռ Ո Ն Կ Ա Ր Ի Ի Ն (Երուսաղեմ),

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների Ազգային խորհրդի ընդհանուր քարտու-
ղար, Գերապատիվ հայր Է Ր Ո Ի Ի Ն Է Ս Փ Ի Ի Ն (Նյու-Յորք),

Մոնակոյի եպիսկոպոս, Գերաշնորհ Ժ Ա Ն Ռ Յ Ո Ի Պ Ի Ն (Մոնակո),
Մխիթարյան ուխտի արքաահայր, Գերապայծառ

հայր Պ Ո Ղ Ո Ս վարդապետ Ա Ն Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վենետիկ)

Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապալժառ

հայր ՄԵՍՐՈՊ վարդապետ ՀԱՊՈԶԱՆԻՆ (Վիեննա),
Վերապատվելի ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԾՅԱՆԻՆ (Մարսել):

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Հայոց քրիստոնեական հավատքի բազմադարյան կեդրոն սուրբ Էջմիածնեն, ուրախ սրտով կողջունենք Ձերո՛ր Սրբությունը մեր Տիրոջ և Փրկչի Հիսուսի Քրիստոսի հարության մեծ ավետիսով:

Կաղոթենք որ Տերը Ձերո՛ր Սրբության պարգևե լիակատար քաջատողջություն և երկնառաք ներշնչումներ որպեսզի շարունակեք Ձեր սքանչելի առաքելությունը Աստուծո՛ւ փառքին և աշխարհի խաղաղության ու ազգերու համերաշխ գործակցության համար:

Թող հարուցյալ Փրկչին շնորհները առատապես տարածվին նաև Իր անունով ապրող ու գործող բոլոր եկեղեցիներուն և հավատացյալներուն վրա առավել ամրապնդելու համար տիեզերական եղբայրությունը քրիստոնյա աշխարհին, Աստուծո՛ւ ժողովուրդին:

Եղբայրական հարգալից սիրով և ամենաբարի մաղթանքներով՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Ս. Է. Զ. ՄԻԱՇԻՆ

*
*
*

Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են բույր եկեղեցիների հոգևոր պետերի՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պալժատորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության էկումենիկ ոգին բույր եկեղեցիների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹՎ ,
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ,
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ
ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ՎԻՒԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ

Տ. Տ. ԽՈՐԵՆ ԱՒՆ (Ամթիլիսս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ

Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐԻՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ

Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵՆՆԱՄ ԲՈՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Այսօր երբ մեր եկեղեցիներու զանգերը հաղթական կհնչեն, ավետելու համար աշխարհին, հրաշափառ հարությունը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի, Մենք բերկրյալ սրտով կու գանք Ձեզի, բերելու Մեր սրտաբուխ շնորհավորանքը և ամենաբարի մաղթանքները, առատ օրհնություններով հանդերձ աստվածակառույց սուրբ Էջմիածնեն:

Թող կենարար շնորհները հարուցյալ Փրկչին՝ անշարժ ու ծաղկյալ պահեն մեր առաքելական սուրբ եկեղեցին և համայն ժողովուրդը հայոց որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Թող Տերը անասան պահպանե ձեր պատմական Աթոռը իր քրիստոսական միաբանությամբ ու ժողովուրդով, մեր մայր եկեղեցվո սիրո և եղբայրության նվիրական ընտանիքին մեջ մեկ ու անբաժան, և Ձերդ Սրբազնության պարգևե բազում տարիներ քաջատոգչությամբ ու խաղաղությամբ:

Թող լույսը սուրբ Հարության լուսավորե նաև մարդկային կյանքի ողին և առաջնորդե պատմությունը դեպի նավահանգիստը արդարության և խաղաղության:

Ծնորհք, սեր և խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ: Ամէն:

Սիրո ողջունիվ՝

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Արգարյան Ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բելրուք), Վարդանանց ապետներին (Ուոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*
* *

Ծնորհագարդ Եղբայր ի Քրիստոս,

Աստվածորդվույն ս. Հարության հրաշափառ տոնին առթիվ կփութանք Ձեր Վեհափառ եղբայրության ներկայացնել Մեր սրտալից շնորհավորություններն ու ամենաջերմ զգացումները:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ ամենաբարին Աստված ս. Հարության շունչով գորացնե Ձերդ սիրեցյալ եղբայրությունը և պարգևե Ձեզի մշտատև առողջություն և գործոց բարյաց հաջողություն:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

Խ Ո Ր Ե Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

ԱՆԹԻՆԻԱՍ

*
* *

Մեր Տիրոջ ս. Հարության ուրախ առթիվ Ձերդ Սրբության կներկայացնեմ իմ, միաբանության և ժողովրդին սրտագին շնորհավորությունները՝ ցան-

կանալով Ձերդ Սրբության քաջատողջություն և երջանկություն, բարգավաճություն՝ Մայր Աթոռին:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

*
* *

Սրտանց կշնորհավորենք Վեհափառությանդ ա. Զատկի հրաշափառ տոնին առիթով և կմաղթենք Ձեզի երկար կյանք, երջանիկ օրեր, և առավել արդյունավորություն Ձեր շինարար գործերուն:

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԷՈՒ

ՍՏԱՄԲՈՒԼ

*
* *

Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ
ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

**Ապրիլի 11-ին, կիրակի.—Զատիկ. Յա-
րութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Օրը սովորականից պայծառ է, անամպ
ու տաք: Դեռ վաղ առավոտյան ժամերից
սկսած հավատացյալների և ուխտավորների
հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարը և
նրա շրջակայքը, ներկա լինելով առավոտ-
յան ժամերգությանը:

Ժամը 11-ին ուրախ դողանցում են Մայր
տաճարի զանգերը: Վեհափառ Հայրապետը,
Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ,
հանդիսավորապես Վեհարանից առաջնորդ-
վում է Մայր տաճար՝ գատկական սուրբ
պատարագ մատուցելու:

Սկսվում է սուրբ պատարագը, որի երգե-
ցողությունը կատարում է Մայր տաճարի
երգչախումբը:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Զատիկի առի-
թով, Վեհափառ Հայրապետը խոսում է կրո-
նաշունչ և հայրենաբույր մի քարոզ, որը
հաջորդ երեկոյան, ժամը 11.30-ին, ձայնա-
սփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրե-
վել է «Էջմիածին» ամսագրի սույն համա-
րում (էջ 5):

Ս. պատարագին ներկա է լինում ուխտա-
վորաբար մայր հայրենիքում գտնվող ե-
գիպտահայերի մի մեծ խումբ:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ
Հայրապետը եկեղեցական թափոքով ա-
ռաջնորդվում է Վեհարանի գահասրահ:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և
ներկա գտնվող ողջ հավատացյալների, Մայր
տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն
արքեպ. Արքանախանը շնորհավորում է
Ն. Ս. Օծության Զատիկը, ցանկանում Նրան
երկար ու երջանիկ օրեր՝ ի փառս Մայր Ա-
թոռի պայծառության:

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ
Հայրապետը, շնորհավորում ողջ հայ ժողո-
վրդի այս մեծ տոնը, օրհնում է մեր եկեղե-
ցին, ազգը՝ հայրենիքում և ի սփյուռս աշ-
խարհի, ցանկանում նրան խաղաղ ու քար-
գավառ օրեր:

Ներկաները հերթով համբուրում են Վե-
հափառի ս. Աջը և շնորհավորում Նրա Զա-
տիկը:

Զատկական հանդիսությունը վերջանում
է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Այնուհետև Ն. Ս. Օծությունը քարեհանում
է ընդունել եգիպտահայ ուխտավորներից,
հայրական մտերիմ գրույց ունենում նրանց
հետ, հետաքրքրվում է եգիպտահայ ազգա-
յին-եկեղեցական կյանքով: Վերջում իր
պանդուխտ զավակներին տալիս է հայրա-
կան իր օրհնությունը, ցանկանում նրանց
քաջատոջություն և երջանիկ օրեր:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Ապրիլի 4-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և ավանդական հանդիսությամբ, կատարվում է «Դռնբացէք»-ի սրտառույշ արարողությունը:

* *

Ապրիլի 8-ին, Աւագ հինգշաբթի.—Յիշատակ ընթերցեց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում միջօրեի ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննէս քհն. Մարությանը: «Հայր մեր»-ից առաջ քեմից Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը ընթերցում է օրվա մեծ տոնի առիթով գրված ս. Բարսեղ Հայրապետի մեծ աղոթքը:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է «գկարգ Ունկուային», իսկ «ի գիշերին» հսկումն է: Հսկումի արարողությանը նախագահում է Վեհափառ Հայրապետը և ընթերցում առաջին Ավետարանը:

Հսկումի արարողության ժամանակ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը «Փառք

ի բարձունս»-ից առաջ քարոզում է՝ «Ո՛վ Յուդա, համբուրելո՛վ մատնես զվարդապետըն» բնաբանով՝ բացատրելով մատնության և խաչելության խորհրդի հոգևոր, փրկարար նշանակությունը:

Եկեղեցին լիքն էր հավատացյալների բազմությամբ, որոնք մինչև գիշերվա ժամը 23-ը երկյուղած բարեպաշտությամբ հետևում էին սրբազան ու սրտառույշ արարողությանը:

* *

Ապրիլի 9-ին, Աւագ ուրբաթ.—Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Առավոտյան ժամը 10-ին Մայր տաճարում կատարվում է չարչարանաց և խաչելության կարգը ըստ Տոնացույցի, ողջ միաբանության և ուսանողության մասնակցությամբ:

Երեկոյան ժամերգությանը Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է թաղման կարգը և ապա Մայր տաճարի շուրջ՝ եռադարձ «Թափօր թաղմանն», հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ:

* * *

Ապրիլի 10-ին, Աւագ շաբաթ.—Ճրագալոց Չատկի.

Առավոտյան ժամերգությունը պաշտվում է Մայր տաճարում:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը նախագահում է Մայր տաճարում Զատիկի Ծրագալույցի արարողությանը և ընթերցում Արարչագործության պատմությունը Ծննդոց գրքից:

Հոգևոր ճեմարանի ուսանողները ա. սեղանի քնից ընթերցում են «Դանիել»-ը:

Ծրագալույցի հանդիսավոր ա. պատարագը մատուցում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է Զատիկի նախատոնակը և Մայր տաճարի կամարների տակ հնչում է հաղթական «Այսօր յարեաւ» հոգեգմայլ շարականը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր օրհնում է միաբանությունը:

*
* *

Ապրիլի 12-ին, երկուշաբթի.—Յիշատակ մենեղոց.

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Խորեն վրդ. Էլշունյանը: Հավարտ ա. պատարագի տեղի է ունենում «հոգեհանգիստ» վասն համօրէն ննջեցեղոց:

*
* *

Ապրիլի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հին տոմարով Զատիկի սրբազան արարողություններին մասնակցելու համար Օրջոնիկիձե մեկնեցին տ. Գևորգ վրդ. Սերադյանը և Արարատ սրկ. Գալստյանը, Կիրովաբադ՝ տ. Նշան քնն. Բեյլեյանը և Արտաշես սրկ. Մուշեղյանը, իսկ Զաղթ (Հյուսիսային Կովկաս)՝ տ. Կարապետ քնն. Հովնակյանը և Շավարշ սրկ. Աշուրյանը:

*
* *

Ապրիլի 18-ին, կիրակի.—Կրկնագատիկ. Նոր կիրակի.

Այսօր Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Օշին վրդ. Նիկողյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Քրիստոսի հարության հոգևոր, փրկագործ նշանակության մասին:

Հավարտ ա. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ «ի յիշատակ բիրատուր նահատակացն մերոց համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմաց»:

Ապրիլի 24-ին, շաբաթ.—Յիշատակ բիրատուր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի.

Ապրիլյան եղեռնի 56-րդ տարեդարձի առիթով Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա են նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսները, ուխտավորներ, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորությունը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ սրբազանը՝ «Ո՛ր տայր զգլուխ իմ ջուր, եւ զաչս իմ աղբերս արտատաց, եւ լայի զժողովորդս զայս՝ զտի եւ զգիշեր եւ զվիրատրեայս դատեր ժողովըրդեան իմոյ» (Երեմ. Թ՝ 1) քնաբանով, ոգեկոչում է հիշատակը Ապրիլյան եղեռնի մեծ նահատակների, որոնք ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» անհավասար մարտում:

Քարոզիչ սրբազանը իր խոսքի մեջ շեշտում է այն միտքը, թե հայ ժողովուրդը կարողացավ դիմանալ մեծ փոթորկին իր հավատքի շնորհիվ, կարողացավ իր նահատակությունը վերածել հաղթանակի, և այսօրվա մեր վերածնած հայրենիքը հավերժական հուշարձանն է մեր նահատակներին:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճարի հյուսիսային կողմում կանգնեցված նահատակաց հուշարձանը, որը ծածկված էր թարմ ծաղիկներով, և նախագահում հոգեհանգստյան հանդիսավոր արարողությանը, որին ներկա է լինում նաև հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը երկյուղած բարեպաշտությամբ և հարգանքով:

Ժամը 15-ին Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Ծիծեռնակաբերդ՝ Ապրիլյան նահատակների հուշարձան, և կատարում հոգեհանգիստի արարողություն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով մեր նահատակների խնկելի հիշատակին:

*
* *

Ապրիլի 25-ին, կիրակի.—Աշխարհամատրան. Կանաչ կիրակի.

Մայր տաճարում ա. պատարագ է մատուցում տ. Հակոբ քնն. Հակոբյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է

Մայր տանար՝ ԱՄՆ-ից, Արգենտինայից, Եգիպտոսից, Լիբանանից ժամանած ուխտավոր հավատացյալների ողեկությամբ։

Վանքի շրջափակը և Մայր տանարը լիքն են հավատացյալ ու խոտներամ բազմությամբ, որոնք խանդավառորեն և երկյուղած բարեպաշտությամբ ողջունում են Հայոց Հայրապետին։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակիի խորհրդի և հոգեվոր նշանակության մասին՝ շեշտելով առաքելական դարում քրիստոնեության հաղթական տարածումը հին աշխարհում, ինչպես նաև Հայաստանում՝ ս. Թադեոս և ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզությամբ և նահատակությամբ։

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել՝ ԱՄՆ-ից՝ Հ. Բ. Ը. Միության երբեմնի վարիչ-քարտուղար Գրիգոր Կիրակոսյանին, ԱՄՆ-ի Այնթապցիների հայրենակցական միության վարչության ատենապետ Կարապետ Սյուլահյանին և Կահիրեի «Ջահակիր»

շաբաթաթերթի խմբագիր Ս. Պալալանին, որոնք ուխտավորաբար գտնվում էին ս. Էջմիածնում և մայր հայրենիքում։


* *

Ապրիլի 26-ին, երկուշաբթի.—Այսօր, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է՝ Հայաստանի նկարչի տան սրահում բացված սփյուռքահայ անվանի նկարիչ Սարգիս Խաչատուրյանի ստեղծագործությունների ցուցահանդես։

Ցուցահանդեսում տեղ էին գրավել Հրնդկաստանի և Ցեյլոնի վեց ժայռափոր տաճարների և այլ մենաստանների որմնանդակարների վավերական պատճենները։

Հանգուցյալ արվեստագետի սույն ստեղծագործությունների պատճենները 1937 թվականից ի վեր տասնյակ տարիներ պահպանվելուց հետո Հայաստան է բերել արվեստագետի այրին՝ ամերիկահայ նկարչուհի Վալա Խաչատուրյանը։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին տ. Հուսիկ եպս. Սանթրոսյանը և Հակոբ սրկ. Գյուկչյանը։





ՀԱՏԸՆՏԻՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ ԱՎԱԳ ԸՆԲԱԹՎԱ ԸՆՐԱԿԱՆՆԵՐԻՑ

ԸՆՐԱԿԱՆ ԾԱՂԿԱԶԱՐԻ

Թագաւոր գոլով քո յաշխարհ,
Մըտեր ի քաղաքն Երուսաղէմ,
Նստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի,
Կոչել զհեթանոսս յերկրպագութիւն:

Ծերքն ոստովք ձիթենեօք
Եւ տղայքն ոստովք արմաւենեօք,
Եւ երամ երամ դասովքն աղաղակէին,
Ովսաննա՝ օրհնեալ եկեալ ի յանունըն
Տեսուն:

Ցընծացաւ սուրբ Սիոն.
Բերկրեցան սուրբ եկեղեցիք,
Եւ խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ.
Օրհնէին զգալուստ քո Փրկիչ յաշխարհ:

Յորժամ եկըն Յիսուս լերուսաղէմ ի
քաղաքն,
Ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք,
Եւ զԱստուածորդին փառատրէին:

Ի լեռնէն ձիթենեաց տարածանէին
Մանկունք զհանդերձս իրեանց.
Եւ ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին
Աստուածորդոյն՝ սուրբ Թագաւորին:

Ոստովք և տերևեալ ձիթենեօք
Եբրայեցոց մանկունքն օրհնէին.
Ուրախ լէ՛ր, Երուսաղէմ քաղաք,
Եւ ցնծա՛ Սիոն, Մայր եկեղեցի:

ԸՆՐԱԿԱՆ ԴՌՆԲԱՑԷՔԻ

Շնորհեա՛ մեզ, Տէ՛ր, արթնութիւն ընդ իմաստուն կուսանացն.
Եւ զհոգոց մերոց լապտերըս պայծառացո՛ւ:

Երկնչիմք ի քէն, Տէ՛ր, զարհուրեալք ի պատասխանոյն,
Զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ ըզձեզ:

Յորժամ գաս փառօք Հօր դատել զտիեզերս ամենայն,
Շնորհեա՛ և մեզ, Տէ՛ր, կալ ի յաջմէ քումմէ:

Բացցի մեզ դուռն ողորմութեան երկնաւոր Փեսային,
 Եւ մտցուք ի յառազաստ ընդ իմաստուն կուսանսն:
 Ժամանեցուք ընդ առաջ Փեսային և մըտցուք ի յառազաստ նորա,
 Զի մի' մնացուք արտաքս, որպէս զյիմար կուսանսն:
 Պայծառասցին լապտերք հոգւոց մերոց և բազմեցուցես ըզմեզ
 Ընդ հրաւիրեալսն ի կոշումն արքայութեանն երկնից:

ՇԱՐԱԿԱՆ ՈՏՆԼՈՒԱՅԻ

Այսօր կանգնեցաւ առաջան մկրտութեան
 Ի թողութիւն մեղաց մերոց:
 Այսօր Տէրըն մեր լրանայր զոտս աշակերտացն
 Եւ պատուիրէր զայս ասելով.
 Մի ոմն ի ձեռք, եղբարք, մատնելոց է զիս ի մահ,
 Եւ որոշի յաշակերտացդ:
 Զայն լրեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս՝
 Հարցանել թէ ո՞վ իցէ:
 Բանըն զոր ասաց Յիսուս՝ տըրտմեցոյց զհօր զաշակերտսն.
 Եւ խոովեցան ամենեքեան:

ԳԱՆՁ ՈՏՆԼՈՒԱՅԻ

Այս խորհուրդ լըցաւ.
 Անդ գուշակեցաւ.
 Աստ կատարեցաւ:
 Աստուած մարդացաւ.
 Ընդ օրինօք մըտաւ.
 Քահանայացաւ:

Նոր խորհուրդ բացաւ.
 Որ ի ծունկս անկաւ.
 Ղենջակ ըստիածաւ:

*
 * *

Սիրտ իմ սասանի.
 Սարսափ զիս ունի.
 Վասըն Յուդայի:

Նա ո՛չ ամաչէ,
 Եւ ո՛չ զարհուրի,

Սիրողն արծաթի:
 Նոր սեղան դընի.
 Եւ հաց բաղարջի.
 Եւ անապակ գինի:

*
 * *

Տէր իմ, արծանի
 Արա՛ ըզմեզ հացի,
 Քո սուրբ սեղանի:

Աստուածն ամենի, Միածին Որդի,
 Կամաւ Հօր Հոգւոյն ճշմարտի, յերկիր
 խոնարհի:

Յընծացուք հոգւով, զնոյն ճաշակե-
 լով.

Փառք Հօրըն տացուք, և Հոգւոյն,
 Միածնի մարմնով:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ

ԿԱՆՈՐՆ ՄԵԾԻ ՇԱԲԱԹՈՒՆ ԹԱՂՄԱՆ ՏԵԱՌՆ ՅԻՍՈՒՍԻ

Պարգևատուն ամենեցուն, այսօր խընդրի պարգևս ի Պիղատոսէ.
 Եւ արկողն ըզլոյս որպէս զօթոց հաւանի պատիլ ի Յովսէփայ:
 Կենդանատուն ամենեցուն, այսօր դընի ի նոր գերեզմանի.
 Եւ գանձն անմահութեան կընքի մատանեաւ քահանայիցն:
 Արարածոց փրկութիւն Քրիստոս, այսօր եղաւ ի նորափոր վիմի.
 Զոր օրհնեն զօրք երկնից՝ երգով պահպանի ի զինուորացն:

Կենդանին յախտեցից Քրիստոս, այսօր խընդրի սրպէս մեռեալ ի Պի-
ղատոսէ.
Եւ մերկութեան ծածկոյթն Ադամայ յանձն առնու պատիլ ի Յովսէփայ:
Անմահութեանց տուող Քրիստոս, այսօր ի հող մահու խոնարհեցաւ.
Եւ բնակեալն ի լոյս անմատոյց, թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի:
Արեգակն արդարութեան Քրիստոս, այսօր եղաւ ի գրի ստուերականի.
Եւ փառացըն Հօր ճառագայթ, ծածկեցաւ վիմով ի մէջ երկրի:
Կուսածին մարմնով Քրիստոս, այսօր դընի ի կոյս գերեզմանի.
Եւ լուծիչն երկանց դժոխաց, մատանեաւ կընքի քահանայիցն:
Արթուն բնութեամբ Արարիչն ամենեցուն, այսօր նընջէ ի մէջ մահացելոց.
Որ պահէն զԻսրայէլ անթուն՝ պահպանի ի զինուորացն:

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅ ԶԱՏԿԻՆ

Այսօր յարեաւ ի մեռելոց Փեսայն անմահ և երկնաւոր.
Քեզ աւետիք խնդութեան, հարսն ի յերկրէ եկեղեցի.
Օրհնեա՛ ի ձայն ցընծութեան, զԱստուած քո Սիոն:
Այսօր անճառ լոյսն ի լուսոյ, լուսաւորեաց զմանկունքս քո.
Լուսաւորեա՛ Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս.
Օրհնեա՛ ի ձայն ցընծութեան, զԱստուած քո Սիոն:
Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն.
Եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մեռելոց Քրիստոս.
Օրհնեա՛ ի ձայն ցընծութեան, զԱստուած քո Սիոն:
Այսօր Զատիկ մեր գեւմամբ Քրիստոսի
Արասցոյք Տօն ցընծութեամբ,
Նորոգեալքս ի հնութենէ մեղաց ասելով.
Քրիստոս յարեա՛ ի մեռելոց:
Այսօր հրեշտակըն լուսափայլ ի յերկնից իջեալ
Զարհուրեցոյց զպահապանսն.
Եւ սուրբ կանանցըն քարոզէր ասելով.
Քրիստոս յարեա՛ ի մեռելոց:

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Գովեա՛, Երուսաղէմ, ըզՏէր:	ալէ՛լուիա:
Յարեա՛ Քրիստոս ի մեռելոց, ալէ՛լուիա:	Յարուցելոյն ի մեռելոց, ալէ՛լուիա,
Եկայք ծողովորոյք, երգեցէք Տեառն,	Որ զաշխարհըս լուսաւորեաց, ալէ՛լուիա:

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Ի գերեզման յարուցելոյն Անմահին, Այսօր գոչէ հրեշտակն երկնային, Յարեա՛ Քրիստոս, զարթեա՛ Քրիստոս, Ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն: Պահապանքըն զարհուրեցան ի յահէն. Քանզի ի կոյս ի նորափոր տապանէն,	Յարեա՛ Քրիստոս, զարթեա՛ Քրիստոս, Ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն: Առ սուրբ վիմին նստեալ գոչէր հրաշալին, Ի յաբերքն քարոզելով ծաղկէին, Յարեա՛ Քրիստոս, զարթեա՛ Քրիստոս, Ի կոյս գերեզմանէն, ի լոյս գերեզմանէն:
---	---

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Սալլն այն իջանէր ի լեռնէն ի Մասեաց,
 և ի վերայ նորա աթոռք են կարգեալ,
 և ի վերայ նորա գահոյք ոսկեղէնք,
 և ի վերայ նորա բեհեզք ծիրանիք,
 և ի վերայ նորա որդի արքայի,
 և յաջմէ նորա վեցթեան սերովքէքն,
 յախեկէ նորա բազմաչեայ քերովքէքն,
 առաջի նորա մանկունք գեղեցիկ,
 ի գիրկս նոցա խաչն տէրունական,
 ի ձեռին նոցա սաղմոսարան և քնար,
 որք երգէին և ասէին՝

Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան:

Ածեալ են ածեալ զսալիկն,

ածեալ են կացուցեալ.

և ահա չշարժէր սալիկն այն,

և ահա չխաղայր անին այն:

Եթէ հարիր բարդ խորձան, վեց կորնկան,

մին մանուշակ խրձադիգեալ.

ի Մասեաց յաջ կողմանէն

սալիկն ածեալ են կացուցեալ,

և ահա չշարժէր սալիկն այն,

և ահա չխաղայր անին այն:

Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,

և սամոտիքն սպրիշիմի.

փոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ.

և ահա չշարժէր սալիկն այն,

և ահա չխաղայր անին այն:

Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,

ոռամիջակ, հաստաբազուկ,

լայնաթիկունք, խարտիշագեղ, անեղագոչ,

նա ձայն ածէր եզնամոլին,

կանչին առնէր աթոռակին:

Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ,

ծաղկախաչտուցք, արագաքայլք, ընթացականք,

եղջիրն ամէն խաչանման,

և մազն ամէն հոյլ մարգարիտ.

և ահա չշարժէր սալիկն այն,

և ահա չխաղայր անին այն:

Ի յառեղէն առեալ շարժումն կործն սալին,

նա ձայն ածէր եզնամոլին:

Սալլն ի Սինեայ երկրորդ օրէնքն էր Մովսէսի.

Եւ այն հարիր բարդ խորձանն՝

այն նահապետքն են՝ մարգարէք.

Եւ այն վեց բարդ կորնկանն՝

վեցօրեայ գործքն Աստուծոյ.
 Եւ այն մին մանուշակ՝
 միատրեալ Երրորդութիւնն:
 Եւ այն մանուկ խարտիշագեղն՝
 այն Յովհաննէսն էր Սկրտիչն.
 Եւ այն չորս կուրծն սալիկն՝
 Աւետարանն էր Քրիստոսին:
 Ի գիւ գայր ի գիւ, սալիկն ի գիւ
 ի Մասեաց յաջ կողմանէն՝
 սալիկն ի գիւ գայր ի գիւ
 և ճոնչալով գայր մտանէր յԵրուսաղէմ,
 և որդիք նոր Սիովնի նոր երգէին զայս ասելով.
 Փառք Քրիստոսի ամենագոր յարութեան:





ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

(Հոգևոր հովիվ հայոց Միլանի)

ԶԱՏԻԿԻ ՏՈՆԸ ԸՍՏ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆՑ

Զատիկը տոնն է Քրիստոսի հրաշալի Հարության, որուն հետ կապված են բնականաբար Փրկչին Բեթանիայեն Երուսաղեմ կատարած հաղթական մուտքը՝ ծանոթ Ծառգարդար, Ծաղկագարդ ժողովրդական կոչումով, Վերջին ընթրիքը, չարչարանքը, խաչելությունն ու թաղումը, Ավագ շաբաթը և հինանց հիսնյակը:

Զատիկը քրիստոնեական եկեղեցւոյ ամենն կարևոր, ամենն մեծ և ամենն հին տոնն է, հավիտենական խորհուրդ մը անհասանելի, որուն եկեղեցիին լրությունը հաղորդ կլինի իր իսկ կենսունակությունը հավերժացնող երեք եղելություններով:

Առաջինն է միաշաբաթին բացարձակապես Տեր Հիսուս Քրիստոսի հարության հիշատակին ճկիւղմը որպէս Կյուրակէ, Տիրոջ օրը: Կիրակին պետք է անխափան պահով մանավանդ եկեղեցիէն ներսը Քրիստոսի սուրբ Հարության պանծացումը հռչակող հանդիսական օրհներգներով, ավետարանական ընթերցվածներով, քարոզությանը և սուրբ պատարագի մատուցմամբ, որուն մասնակցությունը հրամայական և պարտավորիչ է յուրաքանչյուր հավատացյալի համար. քանի որ «Ծնա մեզ վերստին ի յոյսն կենդանի ի ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց» (Ա. Պետ. Ա. 3):

Երկրորդն է Քրիստոսի մահվան և հարության խորհուրդով կատարվող յուրաքանչյուր մկրտություն, որուն շնորհիվ քրիստոնյա եղողը մահվանէն դէպի կյանք կվերածնի, Աստուծոյ արքայությունը ժառանգելու և Քրիստոսի հետ հաւիտենապես ապրելու իրավունքով. «Զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք. թաղեցաք ընդ նմին մկրտու-

թեամբն ի մահ. զի որպէս յարեալ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջեցուք» (Հով. Զ. 3—4):

Երրորդը՝ տոն մարտիրոսներու և սուրբերու, որոնք Աստուծոյ ողորմությամբ արդեն տիրացած են հավիտենական փրկության և երկինքի մեջ միշտ զԱստված կփառավորեն և մեզ համար կբարեխոսեն:

Եկեղեցին սուրբերու հիշատակը կոգելոյն առհասարակ անոնց մահվան կապակցությամբ, քանի որ անոնք իրենց երկրավոր կյանքի մեջ ամեն տեսակ տանջանքի տուկալով և ճշմարտության սիրովն նահատակվելով այժմ փառակից են Քրիստոսի: Սուրբերը հավատացյալներու աչքին օրինակ են կատարելության և միջնորդ. Աստուծոյն խնդրվող շնորհներուն արժանանալու: Այսուամենայնիվ մոռնալու չէ որ սուրբ Հարության և կիրակիներու տոնակատարությունը միշտ նախապատիվ, գերազանց է բոլոր մյուս տոներէն որոնք կդասավորվին եկեղեցական տարվան մեջ, համաձայն եկեղեցւոյ տոմարի այս հիմնական կանոնին:

*
* *

Հստակ չէ թե նախնական եկեղեցին առաջին դարուն ինչպէս կհաստատեր և ինչպէս կկատարեր Զատիկը:

Ա. Ավետարանէն գիտենք թե մեր Տիրոջ վերջին փրկական տնօրինությունները կը կատարվին հրեական պատեքի (զատիկի) տոնին:

Տրված լինելով որ նախնի քրիստոնյաներուն առաջինները ծագումով՝ և ավանդույթով հրեա էին՝ մանավանդ Արևելքի մեջ, հավանական է որ սկիզբէն անոնք իրենց

ազգակիցներուն հետ մեկտեղ նախ տոնին հրեական պատեքը Նիսան 14-ին, և ապա առանձնապես անոր կցեին նաև Բրիստոսի չարչարանքներուն, խաչելության և հարության հիշատակին կատարումը Նիսան 14-ին:

Ասկե անտարակույս «Չորեքտասանայք» (Quartodecimane) անվանումը այն քրիստոնյաներուն՝ որոնք անպայման Նիսան 14-ին կտոնեին Բրիստոսի սուրբ Հարության Զատիկը՝ ըստ Հովհաննոս և Փիլիպպոսի ալմանդության:

Մյուս կողմն, սկիզբեն իսկ քրիստոնյաներն ունանք, մանավանդ հեթանոսութենէ դարձի եկողները նկատի ունենալով Փրկչին հարության հրաշքին միաշաբթի օր տեղի ունեցած լինելը, քրիստոնեական Զատիկը կտոնեին Նիսան 14-ին հետևող միաշաբթին օրը, զայն Կյուրակէ, այսինքն տերունի կամ տիրոջ օր կոչելով: Ասկե միաշաբթին Կիրակի—տերունական օր—անվանումը, և Զատիկը անպայման միմիայն կիրակի օր տանող նախնի քրիստոնյաներու մեկ հատվածին տրված «Կիրակեանք» (Dominicale) կոչումը:

Զատիկը սկիզբեն իսկ կիրակի օր կտոնեն Հոռոմ և Աղեքսանդրիա:

* *

Առաջին դարեն սկսյալ Զատիկի տոնին շուրջ կկազմվին երկու ալմանդություններ: Արևելյանը՝ ըստ Հովհաննոս և Փիլիպպոսյան ալմանդության, իսկ արևմտյանը՝ պետության ալմանդությանը:

Արևելքը կամ Ասիան, հատկապես Լաւոնդիկէ և Հիերոպոլիս, որոնց ժամանակակից են Ապպոլիսար և Մելիտոն, Զատիկը կը կատարեն բաղարջակերաց օրը հրեից պատեքին հետ, Նիսան 14—15-ին, ծոմը պահելով նախորդ իրիկվանէ. իսկ մյուս մասը՝ Հոռոմ, Աղեքսանդրիա և հետևորդներ՝ Զատիկը կտոնեն Նիսան 14-ին հետևող կիրակին¹:

Բրիստոսի վերջին ընթրիքին պատրաստության մասին Մատթեոսի Ավետարանին «Եւ յառաջնում ատոր բաղարջակերացն» (Մտք. ԻԶ 17) խոսքը, մեկնիչներն ունանք կկապեն Նիսան 14-ին, երբ Տերը սուրբ վերնադաշնի մեջ իր աշակերտներուն հետ զատկական զատնուկը կերավ և ապա Նի-

սան 15-ին բուն բաղարջակերաց կամ հրեից պատեքին օրը չարչարվեցավ և մեռավ խաչի վրա:

Հիերոպոլիս Մելիտոն եպիսկոպոսը կատարել է իսկ Նիսանի չարչարանքին և խաչելության համար Նիսանի 15-ը չի համապատասխանեցնում մովսիսական օրերին և չի կրնար պաշտպանվիլ առանց հակասություն մտցնելու համարտես Ավետարաններու (Նտք. ԻԶ 17, Մրկ. ԺԸ 12, Ղկա. ԻԲ 7) և Հովհաննոս Ավետարանին (ԺԳ 1, և ԺԺ 14) միջև, որ հատակորեն կվկայէ թէ Փրկչի լքման օրը գատկի ուրբաթ իրիկուն. «Էր ուրբաթն զատկի և էր ժամ իբրև վեցերորդ» (Յվն. ԺԺ 14)²:

Երկրորդ դարուն իսկ քրիստոնյաներուն միջև վեճ կծագի Զատիկի ճիշտ օրվան մասին: Վեճը փոքր չափով մը կշռապի նաև Զատիկի նախապատրաստության պահեցողությունը, որ տեղէ տեղ կտարբերի. ունանք մեկ օր կպահեն, ունանք երկու օր, ունանք ալ ալելի. իսկ ուրիշները քառասուն ժամ անընդհատ ծոմ կմնան, ըստ Լիոնի եպիսկոպոս Իրենեոսին առ Վիկտոր պապ գրած հաշտարար նամակին³:

Ըստ Եվսեբիոսի Նիսան 14-ին և անոր հետևող կիրակիին իրարմէ զատ երկու տարբեր օրեր Զատիկը տոնողներուն միջև եղած վեճը կրնար աղետալի դառնալ եկեղեցւոյ համար Վիկտոր պապին օրով (189—199), որ կապառնար Առաջալոր Ասիայի եպիսկոպոսները զրկել եկեղեցւոյ հարողակցութենէն: Իրենեոսի միջամտությամբ կիրկվի կացությունը:

² Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի «Էր ուրբաթն զատկի» ալմանարանական բնորոշումը կնշանակի «Այն օրը ուրբաթ և զատիկ էր... թէ նույն ուրբաթը Նիսանի 15 էր և զատիկի տոնին առաջին օրը»—«Համապատում», հոդ. 326, հմմտ. հոդ. 257: «Հինգշաբթիին, որուն երեկոյին ընթրիքը տեղի ունեցավ Նիսան 14 էր և հաջորդ ուրբաթը, հորում Հիսուս խաչվեցավ ու մեռավ Նիսան 15 էր, այսինքն է Զատիկի տոնին առաջին օրը»: Օրմանյան, անդ, հոդ. 257:

Ըստ Օրմանյանի Ավագ հինգշաբթվան և ուրբաթվան Նիսան 14-ը և 15-ը կհամապատասխանեն հունական տոմարի 783-ին և մեր թվականի 30-րդ տարին ապրիլ 6-ին և 7-ին և Հիսուսի կյանքի 34-րդ տարվան: Անդ, ըստ վերնույն:

³ Եվսեբիոս, Պատմություն եկեղեցւոյ, Ե, ԻԳ, և ԻԴ հմմտ. G. Fritz Paques. Les Controverses Pascales; Dictionnaire de theologie catholique, tom II, Paris, 1931, col. 1952.

¹ Եվսեբիոս, Պատմություն եկեղեցւոյ, Ե, ԻԳ, ԻԴ:



ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի)

ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԾԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

43. Գևորգ Ա. Բյուրականցի (792—795).— Արագածոտն գավառից: Պատմության մեջ հիշվում է որպես բյուրականցի. «թե նա ալ ծերացյալ հասակին մեջ կաթողիկոսական Աթոռ բարձրացած է, և խաղաղությամբ կյանքը կնքած է»⁷⁰ և թաղված Դվինում:

44. Հովսեփ Բ Փարպեցի (795—806).— Մականվանչալն Կարին. Արագածոտն գավառից էր: Խուզիմա ոստիկանից բռնվելով՝ Դվինի բանտի մեջ չարչարվել և մահացել և այնտեղ էլ թաղվել է. «Բայց հայրապետն Յովսեփ կալեալ զառաջնորդութիւնն ամս մետասան՝ վախճանի»⁷¹:

45. Դավիթ Բ Կակաղեցի (806—833).— Մաղազ գավառի Կակաղ գյուղից: Համաձայն Դրասխանակերտցու մահանում և թաղվում է Դվինում. «Իսկ ապա լցեալ հայրապետին զկէտ կենաց իրոց՝ վախճանի, կալեալ զառաջնորդութիւնն ամս ԻԷ»⁷²:

* Ծարունակված «Էջմիածին» ամսագրի 1971 թվականի №№ Ա և Գ-ից:

⁷⁰ «Ազգապատում», մասն Ա, էջ 913—914:

⁷¹ Դրասխանակերտցի, էջ 113:

⁷² Նույն տեղում, էջ 115:

46. Հովհաննես Դ Ովայեցի (Ավանցի) (833—855).—Կոտայք գավառի Ովայեց գյուղացի: Մահացել և թաղվել է Գեղարքունյաց Մաքինեցոց վանքում. «Աստուտոր ապա մեծ հայրապետն Յովհաննէս, վասն զի շրջէր ընդ վիճակեալ կողմանս գաւառին Գեղարքունոյ, լցեալ զկէտ կենաց իրոց՝ վախճանի ի մեծ ոխտի կրօնաւորական կալանին Մաքինացոց, և ի նմին ոխտի սրբոյ ի հանգիստ գնա փոխէին, որ կալա զառաջնորդութիւն ամս քսաներկու»⁷³: «Յայսմ դառնութեան ժամանակի կաթողիկոսն Յովհաննէս ոչ էր ի Դուին, այլ շրջէր լալ և այլ գաւառս յայցելութեան և ի քաջալերութիւն տառապեալ ժողովրդոց. և ունէր իր կալան հանգստի ի գեղարքունիսն ի վանս Մաքեւնոցաց. յորում և հիւանդացեալ ի բազում ցաւոց սրտի իրոյ՝ վախճանեցաւ յամի տեառն 854 և ի թոին հալոց լգ, և թաղեցաւ յայն վանսն, կացեալ ի կաթողիկոսութեան ամս իբր ԻԲ»⁷⁴: Պատմաբան կաթողի-

⁷³ Դրասխանակերտցի, էջ 126—127:

⁷⁴ Հ. Մ. Չափյան, «Պատմութիւն հայոց», Վեներիկ, 1785, Բ. Բ, էջ 450:

կոսին կրկնում են Չամչյանը և Ծախաթունյանը. «Վախճանի ի Գեղարքունի ի վանսն Մաքենցաց» և ամփոփի մարմին նորա անդեն»⁷⁵:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը, նույնպես մեջբերելով Դրասխանակերտցու վկայությունը, տալիս է հետևյալ ծանոթությունը. «Հովհաննես Ե կաթողիկոսի գերեզմանն հայտնապես արձանագրությամբ չէ երևացել, բայց վերջին վանահայր Հովհաննես վարդապետը ցույց է տալիս տաճարի արևելյան կողման մի քայքայված մատուռի մեջ լինել. և ես կարծեմ: Նույն վանահոր ասելով՝ Մաքենցաց վանքի մոտ մի բլրակի միջից դուրս է եկել հնադարյան աղյուս գանազան նկարներով զարդարված. ափսոս, որ չհաջողվեց ինձ գնալ տեսնել, թեև հայտնել եմ գործակալ Կյուրեղ վարդապետին գտնել և ուղարկել»⁷⁶:

Մաքենցիվոց վանքը գտնվում է Սովետական Հայաստանի Վարդենիսի շրջանում: Տեղացիք այն անվանում են Դըզլ վանք, 2հշակլու գյուղի մեջ: Մենք անձամբ եղանք այնտեղ մի քանի անգամներ: Վանքը այսօր գտնվում է խարխուլ վիճակում, իսկ Հովհաննես կաթողիկոսի գերեզման-մատուռը կիսակործան վիճակում է, սակայն, երևում է գերեզմանատեղը այնպես, ինչպես այն նկարագրում է Սմբատյան արքագանը: Տեղացիք մատուռը կոչում են նաև կաթողիկոսի գերեզման: Դա էլ ապացույց է, որ կաթողիկոս է թաղվել այնտեղ:

47. **Զաքարիա Ա. Զագեցի (855—876).**— Կոտայքի գավառի Զագ գյուղից: Ծախաթունյանի ժողովում ընտրվում է կաթողիկոս աշխարհական վիճակում և մի օրվա մեջ բոլոր կրոնական աստիճանները ստանալով, հաջորդում է Հովհաննես Դ Ովաչեցուն: Ունի գրած ճառեր, որոնք դեռ անտիպ են⁷⁷:

Թաղման վայրը՝ Դվին: «Իսկ մեծ և սուրբ հայրապետն Զաքարիայ իբրև եկաց յառաջ-նորոգեալն անդ իբրև ամս քսաներկու՝ վախճանեալ դին ի քնարանի հարցն սրբոց»⁷⁸: «Կացեալ Զաքարիայ կաթողիկոսի ի հայրապետութեան ամս ԻԱ և ամիս իբր 8-ի Դուին քաղաքի վախճանեցաւ»⁷⁹:

Օրմանյան արքագանը «Ի քնարանի հարցն սրբոց»-ը հասկանում է «Դվնա կաթողիկեին

կից կաթողիկոսներուն կից դամբարաններուն վրա, վասնզի հայրապետանցն ալ կը-շարունակեր մնալ նույն ուստանի մեջ»⁸⁰: Մի այլ գիտակ ևս վկայում է, որ Զաքարիան «վախճանի ի Դուին քաղաքի»⁸¹: «Իսկ ինքն վախճանեցալ ի 876 իբր քսաներկու տարի նստալ ի Դվին»⁸²:

48. **Գևորգ Բ. Գառնեցի (877—897).**— Թաղվել է Վասպուրականի Չորո վանքում: «Յայսմ տեղ վախճանել մեծ հայրապետն Գևորգ ի գաւառն Վասպուրական. զոր տարեալ համախումբ քանանայիցն և իշխանաց աշխարհին՝ եղին գնա ի քնարանի Չորո վանաց, որ ի Տոսք, մերձ յեկեղեցին»⁸³: «Գնաց ի կողմանս Վասպուրականի, որ հիւանդացեալ զկնի սակաւ միջոցի՝ վախճանեցաւ ի 897 նույն ամի. և գմարմինն տարեալ թաղեցին ի գերեզմանի Չորո վանացն Տոսք գաւառի մերձ յեկեղեցին»⁸⁴: «Վախճանեցալ քսանմեկ տարի կաթողիկոսություն ընկելն ետև, զոր թաղեցին ի Չորո վանքը»⁸⁵: «Իսկ կաթողիկոսն Գևորգ տեսեալ զքազմադիմի աղէտս աշխարհին հաչոց՝ գնաց ի կողմանս Վասպուրական աշխարհի, և անդ մնացեալ զժամանակ ինչ՝ հիւանդացաւ և մեռաւ»⁸⁶:

49. **Մաշտոց Ա. Եղիվարդեցի (897—898).**— Երբեմն նաև Սևանցի: Եղիվարդի Գրիգոր քանահայի որդին էր: Գահակալում է 7 ամիս: Վախճանվում է 899 թվին և թաղվում Գառնիում. «Մաշտոց, այր Աստուծոյ, կացեալ ամ մի հայրապետութեան՝ փոխի առ Աստուած և նշխարք ոսկերաց նորա հանգուցեալ եղեն ի Գառնի, մերձ առ հովանոցին Խոսրոդխոտ, զոր էր շինեալ Տըր-դաստայ հաչոց արքայի»⁸⁷:

Տրդատի հովոցի արևմտյան կողմի, Մաշտոցի գերեզմանի փոքրիկ մատարան մասին Գանձակեցին գրում է. «Տէր Մաշտոց... հանգեալ ի Քրիստոս փառաւորապէս»: Եւ եղաւ մարմինն նորա ի գերեզմանի ի Գառնի հուպ առ զարմանալի թախտն Տրդատայ, և

⁸⁰ «Ազգապատում», մասն Ա, էջ 980:

⁸¹ Ծախաթունյանց, էջ 190:

⁸² Լ. Մ. վարդապետ Բժշկյանց, «Համաժողով նկարագիր վարդոց երեւելի արանց», Վենետիկ, 1850, էջ 321:

⁸³ Դրասխանակերտցի, էջ 181:

⁸⁴ Ծախաթունյանց, ռ. Ա, էջ 191:

⁸⁵ Լ. Մ. վարդապետ Բժշկյանց, «Համաժողով նկարագիր վարդոց երեւելի արանց», Վենետիկ, 1850, էջ 212:

⁸⁶ Լ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հաչոց», Վենետիկ, 1785, ռ. Բ, էջ 723:

⁸⁷ Մտեփանոսի Տարօնեցոյ Ասողկան, «Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 160:

⁷⁵ Ծախաթունյանց, ռ. Ա, էջ 190:

⁷⁶ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարո գաւառի...՝ Վաղարշապատ, 1896, էջ 575:

⁷⁷ Լ. Աճառյան, «Հաչոց անձնանունների քառասուն», ռ. Բ, Երևան, 1944, էջ 179:

⁷⁸ Դրասխանակերտցի, էջ 137:

⁷⁹ Լ. Մ. Չամչյան, «Հաչոց պատմութիւն», Վենետիկ, 1785, ռ. Բ, էջ 702:

շինեցին ի վերայ նորա եկեղեցի վայելույն⁸³։ «Եւ ինքն երանելին Մաշտոց նստեալ յաթոռ հայրապետութեան զկնի Գեորգեայ ամիսս եօթն՝ հանգեալ ի Քրիստոս և թաղեցաւ ի Գառնի ի հովանոց արքային Տրդատայ։ և շինեցին ի վերայ նորա վայելույն եկեղեցի»⁸⁴։ Այսօր գոյություն ունի հիշատակած շիրիմը. հասարակ, կիսաջարդ բազալտից, որի վրա գրված է։

Յ. Խ. Զ. Թվ. Ի ՔԱ. փոխց ՏՐ ՄԱՇԴ.:

Այս տապանաքարը մինչև 1909 թիվը անհայտ էր։ Երբ հայտնի հայագետ Ն. Մառը Գառնիում պեղումներ կատարեց, հայտնաբերեց նաև Մաշտոց կաթողիկոսի շիրիմը տապանաքարով և արձանագրությամբ⁸⁵։

50. **Հովհաննես Ե Դրասխանակերտցի (898—929)**.—Կոչվում է պատմաբան։ Հայրապետական Աթոռը Դվինից փոխադրում է Աղթամար (Վասպուրական), Գագիկ Արծրունի թագավորի հրավերով 927 թվին, ուր և կնքում է իր մահկանացուն, 929 թվին և թաղվում է Չորավանքում. «Եվ ինքն Յովհաննես կաթողիկոս կեցեալ զկնի աշտրիկ այլևս փոքր ինչ ժամանակ ցաւալից ոգով՝ վախճանեցաւ մոտ ի ծերութիւն, յամի տեառն 929 և ի թուին հայոց ՅՀԴ կալեալ զաթոռ հայրապետութեան վշտագին կենօք զամս ԻԷ և ամիսս իբր 8 և թաղեցաւ ի Վասպուրական»⁸⁶։ «Վախճանի անդ ի Վասպուրական աշխարհի»⁸⁷։ Ե. Լալայանը Հովհաննես Զ կաթողիկոսի գերեզմանատեղը մատնանշում է Աղթամարում. «Կղզու արեւելահայտնաւիցն ծայրում, լեզվածն հրվանդանի վրա, ուր դեռևս մնում են Գագիկի շինած աշտարակի կիսավեր պարիսպները, կա նաև մի փոքրիկ մատուռ, որ ավանդորբն համարվում է Գագիկի ամուսին՝ Թամար թագուհու աղոթատեղին, ուր և, ասում է, թե ամփոփված է Հովհաննես Զ Դրասխանակերտցի պատմաբան կաթողիկոսի մարմինը»⁸⁸։

51. **Ստեփաննոս Բ Ռշտունի (929—930)**.—«Ստեփաննոս երկրորդ՝ հաւանու-

թեամբ Աշոտոյ արքայի, Գագկայ Արծրունու, և նստաւ լԱղթամար. այլ ոչ յերկրեալ տրաւ յաթոռն՝ մեռաւ զկնի տարւոյ միոյ»⁸⁴։ Նույնը կրկնում է Ծախաթունյանը⁸⁵։

52. **Թեոդորոս Ա Ռշտունի (930—941)**.—«Տէր Թեոդորոս ամս ժԱ. ի լԱղթամար. Տէր Թեոդորոս թաղած է լԱստուածածնի ժամատան՝ ի սուրբ խաչի շինեալ սա կաթողիկոս»⁸⁶։ «Թեոդորոս Ա յաջորդէ զաթոռ հայրապետութեան անդ ի կղզին Աղթամար, և կացեալ անդէն զամս տասն և ամիսս իբր չորս՝ վախճանի և ամփոփի մարմինն ի ժամատան եկեղեցոյ ս. Աստուածածնի անդ լԱղթամար»⁸⁷։ «Յաջորդեաց զիշխանութիւն կաթողիկոսութեան տէր Թեոդորոս ատաշինն ի նոյն կղզոյ»⁸⁸։

53. **Եղիշե Ա Ռշտունի (941—946)**.—Եղբայր և հաջորդ Թեոդորոս Ա-ի։ «Եղիշեի մահվան հանգամանքներն ու գերեզմանն ալ անհայտ կը մնան մեզի»⁸⁹։

54. **Անանիա Ա Մոկացի (946—968)**.—Վախճանվել և թաղվել է Արգինայում. «Ապա հասանէ վախճան կաթողիկոսին հայոց Անանիայի. փոխեն զնա ի հանգիստ ի վանսն Արգինայի»⁹⁰։ «Իսկ Անանիա կաթողիկոս կացեալ յաթոռ հայրապետութեան ամս իբ. ամս Ե. լԱղթամար և ամս ժԷ ի Վարագ և լԱնի. վախճանեցաւ և թաղեցաւ ի գիւղաքաղաքն Արգինայ մօտ լԱնի»⁹¹։ Նույնն է վկայում Ծախաթունյանը. «Անանիա ի Մոկաց յառաջնորդութենէ ուխտին Վարագայ... կացեալ ի կաթողիկոսութիւն զամս քսան և երկու՝ հինգ ամ լԱղթամար, և տասն և եօթն ամ ի Վարագ և լԱնի՝ վախճանի. որոյ մարմինն դնի ի տապանի ի գիւղաքաղաքն Արգինա՝ մերձ լԱնի»⁹²։ Օրմանյան արբազանը Աստղիկի և Օրբելյանի հաղորդածները հաջորդաբար քննարկելով Անանիա Ա Մոկացու մահվան և թաղման մանրամասնություններին մասին գրում է. «Պարզ բացատրությամբ մը քալած է, թե հասանէ վախճան կաթողիկոսին տեառն Ա-

⁸³ Կիրակոս Գանձակեցի, «Պատմություն հայոց», աշխատախորությամբ Կ. Ա. Մ. Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 81։

⁸⁴ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Վենետիկ, 1785, Բ. Բ, էջ 725։

⁸⁵ «Ոստան», 1911 թ., էջ 562, «Արարատ», 1909, էջ 179, «Ազգապատում», մասն Ա, էջ 1012։

⁸⁶ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Բ. Բ, էջ 816։

⁸⁷ Ծախաթունյան, Բ. Ա, էջ 192. «Ազգապատում», մասն Ա, էջ 1018—1070։

⁸⁸ «Ազգագրական հանդես» գիրք 20-րդ, 1910, № 2, էջ 208։

⁸⁹ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Բ. Բ, էջ 816։

⁹⁰ Ծախաթունյան, Բ. Ա, էջ 192։

⁹¹ Մամվել Անեցի, էջ 99։

⁹² Նույն տեղում, էջ 193։ «Ազգապատում», մասն Ա, էջ 1080։

⁹³ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Բ. Բ, էջ 816։

⁹⁴ «Ազգապատում», Ա, էջ 1084։

⁹⁵ Ստեփաննոս արքեպիսկոպոս Օրբելյան, «Պատմություն հայոց», Թիֆլիս, 1910, էջ 288։

⁹⁶ Հ. Մ. Չամչյան, «Պատմություն հայոց», Բ. Բ, էջ 840։

⁹⁷ Ծախաթունյան, Բ. Ա, էջ 193։

ճանհայի, որ ընթացքը ավարտած խաղաղական հանգիստի իմաստն ունի: Բայց ավելի հայտնի ալ ըսված է, թե լցեալ զատուրս **իւր բարութք ծերութեամբ վախճանեցաւ**: Իսկ թաղումը եղած է ի **Վանան Արգինայի: Փոխեն զճա ի հանգիստ** բացատրությունը ցույց կուտա, թե մահը Արգինայե դուրս տեղի ունեցած է: Անիի կամ Ծիրակավանի մեջ, և մարմինը փոխադրված է Արգինա, որ Անանիայի առժամյա հայրապետանոցն էր եղած, և որ նշանավոր վանք մըն ալ կար առաջեն¹⁰³:

55. Վահան Ա. Սյունի (968—969).—«Վահան. Զանաշէրի որդի... կոչեցալ յեպիսկոպոսութիւն Սինեաց... և անտի յես ի ծայրագոյն փասս՝ ի կաթողիկոսութիւն Հայոց, որ զկնի Տեառն Անանիայի Մոկացուն: Եւ կացեալ ի կաթողիկոսութեան ամս 5. վախճանի ի Վասպուրական աշխարհի ի Տոսպ գավառի: ի Զորոյ վանքն որ է մերձ Բերկրոյ և դնի ի դրան քաւարանին... Վահան եղաւ անդէն ի վանսն Զորոյ, առ դրան եկեղեցուն ընդ այլ կաթողիկոսութիւն որք կային անդ»¹⁰⁴: Նոյնն է հաստատում Ծախաթունյանը. «Մեռանի և թաղի ի Զորոյ վանս»¹⁰⁵: «Վահան կաթողիկոս... թաղեցաւ Զորոյ վանքին մէջ»¹⁰⁶: «Վահան թաղվեցաւ Զորովանքը, Գևորգ և Հովհաննէսի գերեզմաններուն քովը»¹⁰⁷:

56. Ստեփաննոս Գ. Սևանցի (969—972).—Կրօնական վեճերի առիթով զնաց Վասպուրական: Արուսառլ իշխանը ձերբակալեց նրան և բանտարկեց Կոտորոց բերդում, որ և մեռաւ 972 թվին. «Եղաւ յարգեղանս ի բերդն Կոտորոց և անդ մնացեալ ամիսս ինչ մեռանի»¹⁰⁸: «Արուսառլ... Ստեփաննոս կաթողիկոս ետ վարել ի Կոտորոց բերդն... իսկ Ստեփաննոս կաթողիկոսն կեցեալ ամիսս ինչ ի բերդի անդ մեռաւ, յետ կայոյ իշխանութեան ամս Բ»¹⁰⁹:

57. Խաչիկ Ա. Արշարունի (973—992).—Համաձայն Ասողիկի թաղվել է Արգինայում. «Յաղագս մահուան տեսաւ Խաչկայ... սա լցեալ ատուրք, կատարեալ ժամանակաւ ի բարութք ծերութեան փոխի յաշխարհէս և դնի յիւրում հանգստարանին ըստ հիսիսայ

կուսէ եկեղեցուն Արգինայի, զոր ինքն շինեալ էր ի ՆԼԹ թուականին հայոց»¹¹⁰: Ասողիկին հետևելով Ծախաթունյանը «992... վախճանի և մարմինն նորա ամփոփեցաւ ի հիսիսայ կողմանէ եկեղեցուն Արգինայի՝ զոր իւր էր շինեալ»¹¹¹, և Օրմանյան՝ «Խաչիկի մարմինը կը թաղվի Արգինայի կաթողիկէին հիսիսասկողմը»¹¹²:

58. Սարգիս Ա. Սևանցի (992—1019).—Համաձայն Լաստիվերցու թաղվել է Հոռոմոսի վանքում. «Ի այն ժամանակս փոխի յաշխարհէ սուրբ և արժանատի հայրապետն տէր Սարգիս, և է գերեզմանն նորա ի Հոռոմոսի վանքն»¹¹³: «Կացեալ Սարգիս կաթողիկոսի ի հայրապետութեան ամս ԻԷ, ձեռնադրեաց յԱնի քաղաք փոխանակ իւր կաթողիկոս Հայոց զտէր Պետրոս առաջին՝ գեղբայր Խաչիկ կաթողիկոսի, և ինքն կեցեալ այլ ևս ամս քանի մի՝ վախճանեցաւ, և թաղեցաւ ի Հոռոմոսի վանքն»¹¹⁴: Նոյնն է վկայում Ծախաթունյանը. «և մարմին ամփոփի ի վանսն Հոռոմոսի»¹¹⁵:

59. Պետրոս Ա. Գետադարձ (1019—1058).—Խաչիկ կաթողիկոսի եղբայրն էր և Անանիա կաթողիկոսի քեռորդին:

Հեղինակ է բազմաթիվ շարականների՝ «Մարտիրոսաց և հանգստեան», և հատուկ «մանկունք»-ներից շատերը իրեն եմ վերագրվում¹¹⁶:

Համաձայն պատմիչների՝ «Վախճանի ի Սերաստիա. ի ս. Նշան վանսն, որսնոր ամփոփի և մարմինն»¹¹⁷, «Յայսմ ամի մեռանէր ամենագովելին տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց, որ գլուխ էր մարմնոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցոյ: Սա կացեալ յաթոռ Հայրապետութեան զամս քառասուն և երկու և յաւելաւ առ հարս իւր... եւ թաղեցին զտէր Պետրոսն ի քաղաքն, որ կոչի Սերաստիա, ի վանք սրբոյ Նշանին, հանդերձ բազմութեամբ»¹¹⁸: «Եւ հրամայեաց

¹¹⁰ Ասողիկ, էջ 258:

¹¹¹ Ծախաթունյանց, և. Ա, էջ 194:

¹¹² «Ազգապատում», և. Բ, էջ 1143:

¹¹³ «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերցու», աշխատ. Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 32:

¹¹⁴ Հ. Մ. Զամչյան, «Պատմութիւն հայոց, և. Բ, էջ 896:

¹¹⁵ Ծախաթունյանց, և. Ա, էջ 195:

¹¹⁶ Մահակ վարդապետ Ամատունի, «Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ», Վաղարշապատ, 1911, էջ 64—65, նաև 176-րդ էջերը նվիրված են Գետադարձի շարականներին:

¹¹⁷ Լաստիվերցու, էջ 82, Ծախաթունյանց, և. Ա, էջ 197:

¹¹⁸ Մատթէոս Ռոմանցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 127—128:

¹⁰³ Օրմանյան, «Ազգապատում», և. Բ, էջ 1110:

¹⁰⁴ Ստ. Օրբելյան, «Պատմութիւն հայոց», էջ 241 և 290:

¹⁰⁵ Ծախաթունյանց, և. Ա, էջ 194:

¹⁰⁶ Հ. Մ. վարդապետ Բժշկյանց, «Համառոտ նկարագիր երևելի արանց», Վենետիկ, 1850, էջ 821:

¹⁰⁷ Օրմանյան, «Ազգապատում», և. Ա, էջ 1122:

¹⁰⁸ Ասողիկ, գ. ք. Ծախաթունյանց, և. Ա, էջ 194:

¹⁰⁹ Հ. Մ. Զամչյան, «Պատմութիւն հայոց», և. Բ, էջ 841:

կայարն հայրապետին դնել զաթոռ իւր ի Սեբաստիա և անտի հովուել զգօտ իւր: Եւ անդ եկաց հայրապետն մինչև ցվախճան իւր. և եղաւ անդէն ի Սեբաստիա՝ կացեալ կաթողիկոս ամս երեսուն և ինն»¹¹⁹:

Գետադարձի գերեզմանի վրա եղել է հետեւյալ տապանագրութիւնը.

«ԳԵՐԵԶՄԱՆ

ԳԵՏԱԴԱՐԶ ՊԵՏՐՈՍ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ»

Տաճարին երկու կողմը պատկերազարդ դնելով երկու փոքրիկ պահարաններ շինուած են յարեւելս կոյս, յորս ըստ սովորութեան Սեղաններ չիկան տակաին: Այդ Պալատ Տաճարին սալալատակը զարդարուած է կապտագոյն չիմիներով, որք առ ոչ զգոշութեան խարխաւած են: Տաճարի աջ կողմը Գետադարձ Պետրոս հոգեւոյն հայրապետին գերեզմանն է՝ որ յառաջ վանքէն դուրս է եղեր, սակայն յետոյ հանգուցեալ Հովհաննէս եպիսկոպոսի օրով ներս աւերուել է: Մարմարինեայ շիրիմը խիստ փառավոր է և պատուական, որուն վրայ փայտաշէն երեք գմբէթներով չորս սիւնի վրա կանգնեալ Կաթողիկէ մը գետեղուած է համակ ոսկեգօծ և շքեղ: Հոգեւոյն Հայրապետի նկարէն պատկերը այն Կաթողիկէի տակը ամփոփուած է, սև տախտակի մը վրայ դամբանականը գրուած, որոյ օրինակն է հետեւեալը.

ՆԵՐՔՈՂ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐԶ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Պանծայի պսակ Ազգիս Արամեան
Գետադարձ Պետրոս վեհա Աստուածաճան,

Երկունս ճգանց և փշոտ անձանց
Եռանդեամբ կրէ յանձին գերագանց,
Տանջեալ շրջիւր տեղի ի տեղեաց
Տայր արգել գետոց ջորցն հոսանաց.
Բեհային ջրիւք զազգ մեր զարդարել
Ազնիւ պերճ երգովք գրան մեծարել.
Ողբաճեմ հրաշիւք զինքն շողշողէր
Դրուագ ճոխ բանից տալ ամա ճահրէր.
Սիրալի զկեանս աստէն վնարել
Աճապար յերկնից կայարան չուէր
Սահէր քառավտակ առանց պետութեան
Բամիրս ա. մարմնով ի վայրս հանգստեան
Արդ փոխադրի յայս չքնաղ դամբան
Զեզ լինի միջնորդ առ Տէր անխափան
Վախճանի յամի Տեառն 1058

Փոխադրեն զՍ. Նշխարս նորին յամի
1827»¹²⁰:

¹¹⁹ Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն հայոց», Երևան, 1961, էջ 95:

¹²⁰ Նաթանյան Պ., «Տեղեկագիր ընդհանուր վիճակին Սեբաստիոյ», Կ. Պոլիս, 1877, էջ 48:

Կ. Կոստանյանցն, որն գրել է Գետադարձի գիտական կենսագրութիւնը, ասում է. «Սեբաստիոյ ա. Նշան վանքում ա. Աստվածածնի տաճարի մեջ մի հույական մարմարինյա շիրիմի տակ հանգչում են այսօր Գետադարձ Պետրոս Ա. կաթողիկոսի նըշխարները»¹²¹:

60. Խաչիկ Բ Անեցի (1058—1065).— Պետրոս Գետադարձի քեռորդին էր: Մահանում է Փոքր Հայքի Թալբլոր ավանում, ուր մի որոշ ժամանակով փոխադրվել էր Հայրապետական Աթոռը. «Իսկ յետ երից ամաց արձակեցաւ տէր Խաչիկ ի թագաւորանիստ քաղաքէն, և եկեալ ի սահմանս երկրորդ հայոց՝ ի գաւառն որ կոչի Տարընտայ, անդ դադարեաց, քանզի անդ հրամայեցին նմա տեղի բնակութեան»¹²²: «Խաչիկ կաթողիկոս երկրորդ... գնալ ի փոքրն հայս՝ ի գաւառն Զանան, ի սահմանս Տարանդայ՝ յաւանն կոչեցեալ Թալբլոր՝ մերձ ի Կոկիսոն. և ետ նմա երկու վանս Տարանդայ: Հետ կալոյ Խաչկայ անդ ի Թալբլոր ամիսս իբր վեց՝ առեալ զլոր կոտորածի քաղաքին Անույ, ուր էր նախ հայրապետական և թագաւորական աթոռն, սուգ էառ ի վերս նորս. և հիւանդացեալ ի ցաւոց սրտին՝ միանգամայն և բազում տառապանաց, զորս կրեաց ի լոմաց. վախճանեցաւ յետ ամսոյ միոյ, և կացեալ ի հայրապետութեան ամս Զ»^{123—124}:

61. Գրիգոր Բ Վկայասեր (1066—1105).—Գրիգոր Մագիստրոս իշխանի որդին էր: Աշխարհական անունը՝ Վահրամ: Ծամնդավի ժողովում, 1066 թվին, կաթողիկոս է ընտրվում:

Վախճանվում է 1105 թվականին: Գերեզմանատեղն է Քեսունի Կարմիր վանքը. «Յաւոր շաբաթու վախճանեցաւ սուրբ հայրապետն տէր Գրիգորիս և թաղեցաւ մեծաւ հանդիսի ի Կարմիր վանքն մերձ ի Քեսուն և տէր Ստեփաննոս հայր վանացն արար ժողով ի վերայ գերեզմանին նորս կրօնատրաց և քահանայից՝ և հայրապետական պատուով յուղարկեաց գնաւ ընդ տէրքն, և իշխանն հայոց Վասիլն և այլ ազատագունդքն հայոց արարին կոծ ի վերայ նորս և դառնակոծ արտասուոք լային առհասարակ ի վերայ նորս, վասնզի գրկեալ եղեն յայն-

¹²¹ Կ. Կոստանյան, «Տէր Պետրոս Ա. Գետադարձ», Վաղարշապատ, 1897, էջ 3:

¹²² Արիստակես Լաստիվերցի, «Պատմութիւն», Երևան, 1963, էջ 82:

¹²³ Հ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», հ. Բ, էջ 988:

¹²⁴ Ծախաթունյանց, էջ 197—198, «Ազգապատում», մասն Ա, էջ 1266:

պիսի սուրբ Հայրապետէն, և նուրա յիշեալ լային տունն հայոց և լային զանոթրանայն իրեանց ի յօտար աշխարհ և գելանելն ի հայրենի տանէն իրեանց»¹²⁵: «Իսկ Գրիգոր վկայասէր մեծն հասեալ բարոյք ծերութիւն էլ և գնաց ի Ռապան մերձ ի Քեւուն քաղաք. զի իշխանն գող Վասիլ և տիկինն նորա քազում թախանձանօք խնդրէին զնա զալ առ ինքեան: ...Եւ յետ կալոյ նորա անդէն ամիսս ինչ ի Կարմիր վանս, որ մօտ էր ի Քեւուն քաղաք, իբրև գիտաց զմերձեմալ ատուրց վախճանի իրոյ, ետ կոչել առ ինքն ի վանս անդ գհարսեղ կաթողիկոս, և ի զալ նորա՝ կոչեաց և զգող Վասիլ... և պատուիրեաց նոցա, զի զկնի մահուան նորին իսկ Բարսեղի՝ ԳԳրիգոր կացուցեն կաթողիկոս Հայոց: Եւ ինքն օրհնեալ զնոսա, և առեալ զյետին թշակ փրկութեան, վախճանեցաւ ի թոլին հայոց ԾԾԴ. յամսեանն տրէ. այն է նոյեմբեր. ի յաւոր շաբաթու. կացեալ ի կաթողիկոսութիւն ընդ ամեմայն ամս Խ. և ամիսս իբր 8 և թաղեցաւ ի նոյն Կարմիր վանս: Յայնժամ և Ստեփաննոս առաքինահրաշ առաջնորդ վանացն, ժողովեալ զկրօնաւորս՝ ասաց զարձանական նորա, այսինքն է ողբ ներքողական գովեստիւք ի վերայ գերեզմանի նորին»¹²⁶: Ծանխաթունյանց նոյնն է վկայում. «Զմարմինն նորա ամփոփեցին ի նոյն Կարմիր վանսն»¹²⁷: «Քաշվեց Կարմիր վանքը, ուր և մեռաւ 1105»¹²⁸: «Վկայասերը թաղվեցաւ Քեւունի Կարմիր վանքը, ուր վախճանեցաւ»¹²⁹:

62. Բարսեղ Ա. Անեցի (1105—1113).—

Մ. Ուռնայեցին մանրամասնորեն պատմում է Բարսեղ Ա. Անեցու մահական պարա-

գաները. «Յայսմ ամի՝ յամսեանն Տրէի յատուր հիկեղերորդի՝ մեռանէր հայրապետն Հայոց Տէր Բարսեղ. այս ինչ պատահեալ նմա ի չարին ազդեցութենէ, վասնզի յաւոր միում ելանէր ի վերայ տանեացն ի գեղն, որ կոչի Վարդաների, որ էր մերձ յանձանօք ի սահմանս Պեհեանոյ՝ աշակերտօքն հանդերձ և կայր յաղօթս քահանայիւք և եպիսկոպոսօք. և յանկարծակի անկաւ և կործանեցաւ տունն. և ոչ ումեք վնաս՝ քայց միայն Տեառն Բարսեղի. վասնզի հարաւ ողն նորա ընդ պարիսպ տանն և բեկաւ և ապրեալ եղև զաւորս երիս և տայր տանել զինքն ի վանքն իւր, որ կոչի Ծուղր. և ի կենդանութեանն իւր տայր զաթոռ Հայրապետութեանն իւր և զքօղն ի Տէր Գրիգորիս որդի Ապիրատին, մեռաւ Տէր Բարսեղն և թաղեցաւ ի Ծուղրն մեծաւ հանդիսիս և հայրապետական փառօք եղաւ ի գերեզմանի»¹³⁰: «Բարսեղ կաթողիկոս... եւ մինչև մեռեալ էր, հրամայեաց տանել զինքն փութով ի Ծուղր անապատ ի Սեաւ լեւոն... և ինքն մեռաւ ի թոլին հայոց ԾԿԲ. յեօթնէրորդ ատուր տրէ ամսոյ, այսինքն ի նոյեմբերի 13, թէպէտ Վարդան ղնէ յաւորս վարդափառի. և թաղեցաւ ի Ծուղր»¹³¹: Նոյնն է վկայում նաև Ծանխաթունյանը. «Անկաւ և ինքն Բարսեղ հայրապետ, և դիպեալ ողն նորա զքարի բեկաւ. ուստի փութացոյց տանել զինքն ի Սեաւ լեւոն ի Ծուղր անապատ, ուր անդ... յետ ատուրց ինչ վախճանեցաւ ի 13 ատուր ամսեանն նոյեմբերի 1113 թ., կացեալ ի հայրապետութեանն ընդ ամեմայն զամս երեսուն և մի»¹³²: «Բարսեղի մարմինը թաղվեցաւ Ծուղրի Կարմիր վանքին մեջ Վկայասերին գերեզմանին մօտը»¹³³:

(Ծարմնակնի)

¹²⁵ Մատթեոս Ուռնայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 300:

¹²⁶ Լ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», Վենետիկ, 1786, Բ. Գ, էջ 25—26:

¹²⁷ Ծանխաթունյանց, Բ. Ա, էջ 200:

¹²⁸ Լ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Բ. Ա, Երևան, 1942, էջ 554:


¹²⁹ Օրմանյան, «Ազգապատում», Բ. Ա, էջ 1330:

¹³⁰ Մ. Ուռնայեցի, էջ 329:

¹³¹ Լ. Մ. Չամչյան, «Պատմութիւն հայոց», Բ. Գ, էջ 35:

¹³² Ծանխաթունյանց, Բ. Ա, էջ 201—202:

¹³³ Օրմանյան, «Ազգապատում», Բ. Ա, էջ 1346:



ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈՒՅԱՆ

(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ (420—491)

Մանդակունի կաթողիկոսը ծնվել է Արշամունյաց գավառի Ծախնոտ գյուղում։ Ժամանակակից է Վահան Մամիկոնյանին։

485 թվականին Հայրապետական Աթոռը Վաղարշապատից տեղափոխեց Դվին։ Ինքն է հիմնել Տեկորի հոշակավոր վանքը։ Վախճանվել է 491 թվականին։ Թաղված է Վահանո գավառի Բերնա կամ Բեռնոս գյուղում։

Հ. Մանդակունու գործերն են՝ «Չարթուցեալքս», «Չքէն գոհանամք», «Արթուն մտօք», «Միաբան ամենեքեան» նշանավոր քարոզները, «Չգեցո մեզ, Տէր» աղոթքը, «Սուրբ սրտի», «Տէր զօրութեանց» օրհնությունները և հայտնի «Լոյս զուարթ» երգը (վերջինը թարգմանել է հունարենից)։

«Մաշտոց» ծիսարանի մեջ Մանդակունու են վերագրվում՝ եկեղեցույ հիմնարկութեան, Նստակատեաց, Աւագանի, Խաչ Օրհնելոյ, Մկրտութեան և Պսակի կանոնները։ Ունի նաև մի քանի ճառեր՝ Յաղագս պահոց, Վասն պահոց պնդութեան և Տնտեսի առակի մեկնությունը։ Գրել է Ապացոյց կոչվող ճառը, քաղկեդոնի ժողովի դեմ և Խրատք ճգնադրացը՝ հոգևորականների համար։ Խմբագրել է հայ եկեղեցու ծիսարանը, Տոնացույցը և Ժամագիրքը։ Ունի նաև մի քանի կանոն շարականների՝ գրեթե բոլորն էլ ժամակարգության մեջ ընդունված։

Այս գիտնական, աստվածաբան կաթողիկոսը հայտնի է նաև իբրև եկեղեցական

քանաստեղծ, ժամակարգության կանոնավորող և բարեկարգիչ։ Մեր Շարակնոցների, Ժամագրքերի և շատ ծիսարանների սկզբի էջերը զարդարված են Ս. Պարթևի, ա. Մեսրոպի, Հ. Մանդակունու և Ն. Շնորհալու անուններով, իբրև այդ գրքերի կանոնավորողներ և խմբագիրներ։

Մանդակունին համարվում է 5-րդ դարի նշանավոր մատենագիրներից ու հայրապետներից մեկը (480—491)։ Սա եղել է Սահակ Մեսրոպյան կրտսեր աշակերտներից։ Հավանաբար ծնվել է 420—425-ական թվերին և վախճանվել 491-ին։ Որպես կաթողիկոս նա անձամբ մասնակցեց 484 թվականին Վահանյանց ապստամբությանը, վիրավորվեց Խոսրովակերտի պատերազմում։ Պատերազմական տարիներին (481—484) նա չկարողացավ գրական գործերով զբաղվել։ Սակայն 484-ից հետո, իբրև հայրապետ, ունեցավ բեղմնավոր գործունեություն։ Եռանդուն կերպով զբաղվեց հայ եկեղեցու ժամակարգությամբ։

Մանդակունու անունով վեցնետիկում հրատարակված է մի ժողովածու՝ (ճառերի)՝ բարոյակրթական բովանդակությամբ։ Սակայն հետագայում Կարապետ եպիսկոպոսը մի ուսումնասիրությամբ² պարզեց, որ այդ ճառերը պատկանում են ոչ թե Հ. Մանդակունուն, այլ Հովհան Մայրազունեցուն։

¹ Տեսնել Յովհաննու Մանդակունու Հայոց Հայրապետի Ճառք, Վեցնետիկ, 1860 թ.։

² «Ծողական», Վաղարշապատ, 1913 թ., էջ 84—113։

Մի գեղեցիկ ճառ էլ Մանդակունին խոսել է Վահան Մամիկոնյանի մարգարանությունն ստանալու առիթով՝ Դվինի Մալր եկեղեցում, որը լրիվ իր պատմության մեջ է բերում Վազար Փարպեցին:

Վերջապես Մանդակունին գրել է նաև հոգևոր երգեր՝ նվիրված Վարդավաթի, Թարգմանիչների և Հռիփսիմյանց տոներին: Վարդավաթի տոնի առաջին օրվա կանոնի (կամ պատկերի) մեջ մտնում են «Որ ի լերինն այլակերպեալ» Օրհնությունը, «Երևի երբեմն աշակերտաց» Օրհնության լրացումը, «Չանճատելի խորհուրդ» Հարցը, «Չանճատելի լոյս» Մեծացուցեն, «Ի թաքօր լերինն» Ողորմեան, «Քրիստոս Աստուած մեր» և «Այսօր գխորհուրդ քո» Տերհերկնիցները, «Լերինք ցնծացեն» Մանկունքը, «Ուրախացիր պսակ կուսից» Ճաշուն և «Այսօր ի լերինն Թաքօր» Համբարձին: Այդ կանոնում՝ ընդամենը 10 շարական: Թարգմանչաց տոնի կանոնի մեջ Մանդակունին գրել է «Ցնծացէք այսօր» պարականոն Ճաշուն, «Արանջելագործ Աստուած» Հարցը, «Անճատելի շնորհօք լցեալ» Տերհերկնիցը, «Նմանեալ Մովսէսի» Մանկունքը և «Որք զարդարեցին» Օրհնությունը, ուրեմն այս կանոնում էլ՝ 5 շարական:

Հռիփսիմյանց տոնի կանոնի մեջ ունի մի շարական «Անսկիզբն բանն Աստուած» Համբարձին: Այսպիսով Հովհան Մանդակունին գրել է ընդամենը 16 շարական:

Վարդավաթի առաջին օրվա կանոնի մեջ գլխավորը «Որ ի լերինն այլակերպեալ» Օրհնությունն է, որտեղ պարզ լեզվով և համառոտ կերպով տրվում է Քրիստոսի պայծառակերպությունը: Ծարականի հիմնական գաղափարն այն է, որ Քրիստոսն իր աշակերտների հետ բարձրանում է Թաքօր լեռը, հանկարծ նրա կերպարանքն անճանաչելի կերպով պայծառանում է: Կատարված հրաշքից աշակերտներն ապշում են: Ծարականի երեք տներում էլ հեղինակը պատմում է այդ հրաշքի մասին՝

«Որ ի լերինն այլակերպեալ՝
Յուցեր զաստուածային քո զօրհնությիւնը»³:

Մյուս տան մեջ բանաստեղծը խոսակցությունը շարունակում է Հիսուսի հետ, թե ինչպես է Նա պայծառակերպվել, տեսքը նման է եղել արեգակի, և մարդիկ լույսի ճառագայթների ուժեղության պատճառով չեն կարողացել նայել Նրա դեմքին.

«Որ զճառագայթ փառաց քոց ցուցեր,
Արեգակնակերպ փայլմամբ զարարածս լուսաորեցեր»⁴:

Երրորդ տան մեջ տրված է, թե ինչպես Քրիստոսի աշակերտները այդ գերանրաշերտայից զարհուրել և թմրել են.

«Որ անագին տալեամբ զարհուրեցուցեր զքո աշակերտսն,
Ի թմրութիւն հրաշիցն ի սեր աստուածային փառաց քոց»⁵:

Քրիստոսի այլակերպությանը ակնհայտեստաբայակները տեսնելով Աստվածության («Գերբեակ միութեան») այդ հզոր լույսը, չկարողացան դիմանալ, ցնցող երկյուղից ուշաթափվեցին և նման եղան մեռածներին: Այդ սաստիկ տագնապը ըստ շարականի թեև մահ կարող էր բերել, բայց ստաբայներն իսկապես մահացած չէին, այլ շրացել և թմրել էին: Օրհնության վերջին տան մեջ շարականը երգում է՝

«Արացուք երիս տաղաարս Տեան և Մովսէսի և Եղիայի»⁶:

Խոսքը Մովսէս և Եղիա մարգարեների մասին է: Քրիստոսի այլակերպությունը շարականի մեջ դիտվում է որպես Երրորդության խորհուրդ, որը կանխորոշված է եղել և անհրաժեշտ էր ցույց տալ աշակերտներին այդ հրաշքը: Ահա հիմնականում այս միտքն է անցնում այդ կանոնի «Չանճատելի խորհուրդ» Հարցի բոլոր տների միջով.

«Չանճատելի խորհուրդ սուրբ Երրորդութեանդ,
Այսօր ի լերինն երևեցուցեր աշակերտաց քոց»⁷:

«Երրորդության խորհուրդը» Հարցի երկրորդ տան մեջ ավելի է խորանում տարբեր ձևերով: Այլակերպության ժամին փառաբանվող անձինք դարձյալ երեքն էին՝ Քրիստոսը, Մովսէսը և Եղիան: Աշակերտները նույնպես երեքն էին Թաքօր լեռան վրա: Սրանցից Պետրոսն առաջարկում է ստեղծել երեք տաղավար, մեկը՝ Հիսուսի, մյուսը՝ Մովսէսի, և երրորդը՝ Եղիայի համար:

«Մովսէսի հիացմամբ զայլակերպութիւն քո Տէր,

Այսօր տեսեալ առաքելոցն յօրինէին քեզ տաղաար»⁸:

Այդ բոլորից հետո, Թաքօր լեռան վրա կատարվում է մի ուրիշ հրաշք ևս, այն է՝

«Հովանացեալ ի վերայ լուսեղէն ամպոյն,
Եւ ձայն ի լերկնից հայրական, որ ասէ՝

Դա է Որդի իմ սիրելի, Աստուած հարցրն մերոց»⁹:

Գործառնումը ամբողջապես գովերգ ու փառաբանություն է՝ ուղղված Քրիստոսին.

⁵ Անդ, էջ 596—597:

⁶ Անդ, էջ 597:

⁷ Անդ, էջ 597:

⁸ Անդ, էջ 597—598:

⁹ Անդ, էջ 598:

³ «Ծարակնց», էջ 596:

⁴ Անդ:

«Գովեցէք զարփիական զլոյսն երևեալ ի Թաքոր լերինն, Բարեբանեցէք զաստուածութեան երևումն աշակերտաց, Չտէր օրհնեցէք, և բարձր արարէք զնա յաւիտեան»¹⁰:

Ապա գալիս է կանոնի «Չանճատելի զլոյս աստուածութեանն» Մեծացուցեն: Այստեղ բանաստեղծը իր բարեբանական խոսքն ուղղում է Տիրամորը: Ըստ շարականի, այն լույսը, որն անճատելի, անպարփակ է և ավելի մեծ է ու գորեղ, քան արեգակը, սուրբ կույսը կարողացել է «տնօրինաբար կրել ի յորովայնի»... որի համար էլ արժանի է նա փառաբանության ու գովասանքի:

Եթե Թաքոր լեռան վրա առաքյալներին հովանի եղալ լուսեղեն ամպը, ապա սուրբ կույսի համար երկնային սուրբ Հոգին հովանիացաւ, որն անհամեմատելի էր իր գերազանց գործությամբ: Հետևյալը «Ի Թաքոր լերինն ձևացուցեր» Ողորմյան է, որն, ի տարբերություն այդ տեսակի սովորական շարականների, բաղկացած է ոչ թե երեք, այլ չորս տնից և նույնպես ուղղված է Հիսուսին: Այստեղ օրվա դեպքի կապակցությամբ շոշափվում են գլխավորապես աստվածաբանական հարցեր.

«Ի Թաքոր լերինն ձևացուցեր զքո բնութիւնը»

Անտանելի գոյացութեամբ, ընդ որս և մեք, Յնծութեամբ երգենք զքեզ, Ողորմեա մեզ...»¹¹:

Առաքյալները տեսնելով Փրկչի հետ կատարված հրաշքը, Նրա ամենակարող ուժը, կորցրին իրենց, տագնապի մեջ ընկան և անկապ, անհիմաստ բաներ էին խոսում¹²: Եվ այդ բոլորը կատարվում էր նպատակով, որպեսզի՝

«Աքանջելի մեծ խորհուրդ գերբորոգութեանն քոց սրբոց

Առաքելոցն ծանուցեր բարեբար...»¹³:

Թաքոր լեռան վրա առաքյալներն ակա՛նատես եղան Տիրոջ պաշտօնակերպությանը, Երրորդության անապատում՝ գործությանը: Ապա ուշքի գալով, նրանք խնդրում են Տիրոջը, որ թույլ տա ստեղծելու երեք տաղավար: Այդ տաղավարներն ունեն նաև փոխաբերական նշանակություն, որը պարզ երևում է հետևյալ «Քրիստոս Աստուած մեր» Տերհերկնից շարականում.

«Համբարձցես զմեզ, Տէր, առաւել քան զգալի զԹաքորական զեառն...»

Վասն որոյ և մեք զբակտելիս մեր հարմարեցուք քեզ, Հոգևորական տաղավար, որպէս միայնով մարդասիրի և Փրկչի»¹⁴:

«Այսօր գխորհուրդ քո» երկրորդ Տերհերկնիցի մեջ շարականագիրը առաջին տան մեջ ակնարկում է, որ Թաքոր լեռան վրա կատարված երևույթի խորհուրդներից մեկն էլ այն է, որ Քրիստոսը դրանով «գխորհուրդ կրկնակի գալստեանն աշակերտաց յայտնեցեր»¹⁵: Իսկ երկրորդ տան՝

«Այսօր զփրկական քո վասն աշխարհի զմահ վկայեալ.

Քեզ երևեցան Մովսէս և Եղիա»¹⁶ տողերով, բանաստեղծը նկատի ունի Նոր Կտակարանի հետևյալ խոսքերը՝ «Եւ խօսէին զեղիցն նորա, զոր կատարելոց էր լծրուսաղէմ»¹⁷: Այստեղ «եղք» բառով հեղինակն ակնարկում է Քրիստոսի չարչարանքն ու մահը:

«Ի Թաքոր լերինն» Ողորմյայի մեջ շարականի երգած «սքանչելի մեծ խորհուրդ»-ի պարզաբանմանը հանդիպում ենք «Հերինք ցնծացեն» Մանկունքի մեջ, թե որն էր այդ խորհրդի նշանակությունը:

«Հերինք ցնծացեն ատաջի քո Տէր, Որ երևեցար, ի փառս Աստուծոյ՝ քո Հօր, Միս անգամ գուշակելով զգալուստն...»¹⁸:

Կանոնի նախավերջին շարականը Ծաշու է: Ըստ արվեստի ու կազմության Ծաշու այս շարականը քնարական է և տաղաչափական ձևով էլ Մանդակունու շարականների մեջ աչքի է ընկնում որպէս չափածո.

«Ուրախացի՛ր, պսակ կուսից՝ Տիրամայր, Այսօր Որդին քո զհայրենին փայլեաց զփառս,

Նըմա յաւե՛ծ յանձն արա՛ զանձինս մեր»¹⁹:

Ապա շարականագիրը շարունակում է, որ Փրկչին վաղուց սպասում են մարմնով երկինք տեղափոխված մարգարեները, և դրա համար էլ ցնծում են Տիրոջ այլակերպումը տեսնող երկու նշանավոր լեռներն անգամ:

«Նըմա Մովսէս և Հեղիաս սպասեն, Յանուն նորա ցընձան Թաքոր և Հերմոն, Նըմա յաւե՛ծ յանձն արա՛ զանձինս մեր»²⁰:

Այստեղ միաժամանակ Մանդակունին վերոհիշյալ երկու խոշոր մարգարեների հիշատակմամբ ուզում է ցույց տալ, որ դրանք սպասավորում են Քրիստոսին մեծարանքով ու պատկառանքով: Այստեղ Մանդակունին

¹⁴ Անդ, էջ 600:

¹⁵ Անդ, էջ 600:

¹⁶ Անդ, էջ 600:

¹⁷ Նոր Կտակարան, Դուկասի Ավետ. գլ. Թ, 31:

¹⁸ «Ծարակնոց», էջ 601:

¹⁹ Անդ, էջ 602:

²⁰ Անդ, էջ 602:

¹⁰ Անդ, էջ 598:

¹¹ Անդ, էջ 599:

¹² Անդ, էջ 599:

¹³ Անդ, էջ 599:

ցույց է տալիս, որ հիմա Թաքոր լեռան վրա Մովսեսը երկրորդաժողովրդային կանգնած է Քրիստոսի աջ կողմը «տախտակն մատնահորշմի ի ձեռին» և «աղերսէր զկատարումն փրկագործ տնօրէնութեանն»: Փրկչի ձախ կողմը կանգնած է «սոյնպէս Եղիաս հրաբերանն» մաշկազգեցիկ թաւարծին՝ տեսնալ զհինաւորացն մանկութեան, ի միտ առնողը, — ասէ Վանական, — զՀիշումն ջրահրոյն, զոր արկ սեղանովն, ի խորհուրդ առաջանին»²¹:

Հասկանալի է, որ այս կարգի շարականները 5-րդ դարում բացի բարեպաշտություն տարածելուց, ունեին նաև վարդապետական, աստվածաբանական նշանակություն:

Այս կանոնի վերջին շարականն է «Այսօր ի լերինն Թաքոր» Համբարձին: Սրա էությունն է՝ արդեն մեզ ծանոթ փառաբանությունն ու հրաշքը՝ տարբեր բառերով ու ձևերով:

Մանդակունին մեր Թարգմանիչներից նվիրել է 5 շարական, որից 4-ը՝ կանոնական, իսկ մեկը՝ պարականոն:

Ծարականների մասնագետ Ռ. Գ. Ավետիքյանն այս կանոնի շարականների պատկանելության մասին գրում է «Չշարական սրբոց թարգմանչաց (Որք զարդարեցին) Սահակայ և Մեսրոպայ և աշակերտաց նոցա, ասեն արարեալ մեծին Վարդանայ վարդապետի»²²: Սակայն մեծավաստակ գիտնականն իր հիմքն ու աղբյուրը չի ցույց տալիս, այլ միայն գրում է «ասեն»: Սա իհարկե գրվել է 1814 թվականին: Այնուհետև շարականների ուսումնասիրության մարզում բանասիրական նոր ու շատ կարելի գործեր կատարվեցին, նոր ձեռագրեր ու վավերաթղթեր գտնվեցին, որոնք խոշոր փոփոխություն առաջ բերեցին նաև շարականագիտության բնագավառում: Հ. Գ. Ավետիքյանից մոտ ութսուն տարի հետո Էջմիածնի միաբան, հմուտ շարականագետ Սահակ վարդապետ Ամատունին, երկար տարիներ զբաղվելով այդ գործով, համեմատելով 73 կարևոր ձեռագիր շարականները, նոր լույս տվեց մեր շարականների ժամանակի, կազմության և նրանց հեղինակների վրա: Գրեց մի բանի արժեքավոր հոդվածներ այդ մասին: 1894 թվականի «Արարատ»-ի համարներում, իսկ 1911 թվականին Վաղարշապատում հրատարակեց «Հին և Նոր պարականոն կամ անվավեր շարականներ» ժողովածուն՝ կազմված ըստ մեր Ծարակնոցի կառուցվածքի ու կանոնների: Այս գրքում Սահակ վրդ. Ամատունին, չհա-

մաձայնվելով Ռ. Գ. Ավետիքյանի վերևում արված անադրյուր հայտարարության հետ, փաստեր է բերում, որ Թարգմանչաց կանոնը գրել է ոչ թե Վարդան վարդապետը, այլ Հովհան Մանդակունին: Ս. վ. Ամատունին, թվելով Թարգմանչաց նվիրված շարականները, գրում է. «Սակայն այս բոլորը իբրև հին շարականներ, Սարգիս երեցի Ծարականի մեջ գրված են կրճատ գրությամբ և Սարգիս երեցը ընծայում է Հովհան Մանդակունուն»²³, այսպես մեջ է բերում Սարգիս երեցի հաղորդած փաստերը: Մենք միանգամայն համոզիչ համարելով Սարգիս երեցի և Սահակ վարդապետ Ամատունու հաղորդումները և մինչ այդ եղած ավանդությունը, ընդունում ենք, որ Թարգմանչաց կանոնում եղած վերոհիշյալ հինգ շարականները գրել է Հովհան Մանդակունի հայրապետը: Թարգմանիչների գլխավորները՝ ս. Սահակն ու ս. Մեսրոպը, հալոց գրերի գյուտով կրոնական և հոգեկան նոր կյանք ստեղծեցին:

«Որք զարդարեցին տնօրինաբար գիմաստս Անեղին, Հաստատելով յերկրի զգիր կենդանի, Հովուել ըզհօտ նոր Խարայելի, Երգով քաղցրութեամբ հնչմամբ զԱստուած օրհնեացոր»²⁴:

Թարգմանիչներն, ըստ շարականի, եղել են նվիրված, զաղափարական մարդիկ, որոնք առօրյա երկրային փառքն ու մեծությունը համարել են սին և անցողիկ՝ իրենց հույսը դնելով հոգեկան մեծության վրա: Մանդակունին ակնարկում է, որ հենց այդ հոգեկան կյանքի, կենդանի գրի համար էր, որ Սահակ Պարթևը արհամարհեց հայրենի պալատությունը, ընտրեց եկեղեցականը, հոգեկանին ծառայելու ասպարեզը, և փառավոր կերպով անմահացրեց իրեն: Այդ հոգեկան կյանքի համար էր, որ Մեսրոպ Մաշտոցն էլ հեռացավ աշխարհային, արքունի գործերից, առանձնացավ և դարձավ գրի ու գրականության հիմնադիր, հոգեկանի փառավոր ու անմահ ծառա:

«Որք զերկրաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին, Ապաիներելով ի յոյս անմահ փետային՝ Անճառ Բանին արժանի եղեն...»²⁵:

Այդ թարգմանիչները, լցված հոգեկան գորությամբ և իմաստությամբ, կարողացան Գրիգոր Լուսավորչի հիմնադրած Աթոռը ավելի հաստատուն, ամուր ու ազգային դարձնել՝ բազմաթիվ թարգմանություններով և

²¹ Հ. Գ. Ավետիքյան, Բացատրություն շարականաց, ի Վանեիկ, 1814 թ., էջ 472:

²² Հ. Գ. Ավետիքյան, Բացատրություն շարականաց, էջ 548:

²³ Սահակ վ. Ամատունի, նշվ. աշխատությունը, էջ 138—139:

²⁴ «Ծարակնոց», էջ 692:

²⁵ Անդ, էջ 692:

մայրենի լեզվի ժամերգությամբ: Ծարականը երգում է.

«Որք զօրհնությունս Զօր իմաստութեան
Էին անելի,

Հաստատեցին զԱթոռ սրբոյն Գրիգորի՝
Թարգմանութեամբ նշանագրութեան»²⁶:

Առաջ եկան նոր մտքեր՝ նոր, հասկանալի ու գեղեցիկ ձևերով: Թարգմանվեց ս. Գիրքը, որն իր բարերար ազդեցությամբ մի գործել ազդակ հանդիսացավ հայ հոգևոր կյանքի զարգացման համար: Նոր երգերով, բարոզներով ու աղոթքներով պայծառացավ հայ եկեղեցին: Այս նույն շարականի մյուս տունը երգում է.

«Որք նորափետուր բանի զարդարեալ
պայծառագեցան,

Եկեղեցիք Հայաստանեայց ի ձեռն սրբոյն
Սահակայ»²⁷:

Օրհնության երկրորդ մասն ավելի ջերմ ու քնարական է:

Այդ թարգմանիչները եղել են ոչ միայն հոգեկան մշակներ, այլև հոգևոր երգերի հիմնադիրներ, հոգեբույժ բանաստեղծներ: Սրանք հորինեցին սրտաբույժ, ջերմ հոգևոր երգեր՝ «գերագույն քան զգովասանական և զյաղթողական երգս թագաւորաց ազգաց»²⁸:

«Որք թագաւորաց ազգաց և ազանց,
Գերագոյն ցուցին արփիական գերզս հո-
գետրս»²⁹:

Հաջորդ տունը հատկապես նվիրված է Մեսրոպ Մաշտոցին, որպես կենդանի գրի ու գրականության ծնողի:

«Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փա-
ռաց Անեղին,

Նկարագրեցաւ մեզ գիր կենդանի, յար-
գանդ մաքուր մեծին Մեսրոպայ»³⁰:

Ծարականի մեջ թարգմանիչներն այնքան են մեծարվում, որ հավասարվում են մեծ մարգարեին՝ Մովսեսին: Թարգմանիչներն էլ իրենց հերթին ու ժամանակին աստվածային ծածուկ խորհուրդները տնօրինաբար վերածնել և հայտնել են մարդկությանը, ինչպես հնում՝ Մովսեսը:

«Որք ծածկեալ խորհուրդ աստուածգիտու-
թեան,

Տնօրինաբար յայտնեալ ծանուցին,
Հանգոյն սրբոյն մեծին Մովսէսի»³¹:

Թարգմանիչներն Հայաստանում այն դերն են կատարել, ինչ որ Քրիստոսի առաքյալ-

ներն աշխարհում: Թարգմանիչները հոգեկան լույս են պարգևել մեր ազգին.

«Որ յօրինակ ճշմարիտ սիրոյ սուրբ ա-
ռաքելոցն՝

Աղբերաբար ի ձեզ էացաւ հոգի շնորհաց՝
բոխտումն անսպառ...

Որ երկոքումքք սուրբ լուսաւորչօք տանս
Թորգոմայ

Հաստատեցեր գեկեղեցիս Հայաստանե-
այց...»³²:

Կանոնի «Սքանչելագործ» Հարցն ամբողջությամբ ու գործատնով հատկացված է Մեսրոպ Մաշտոց վարդապետին: Աստուծո գործությամբ «ի ձեռն երանելի վարդապետին արարեր ողորմութիւն ազգի մարդկան»: Նա է լուսավորել մեզ՝ իր գերմարդկային եռանդով ու շնորհքով:

«Հրեշտակ երևեցար ի յերկրի,
Եւ վարս ունէիր Աստուծոյ հաճոյական...

Ստացող եղեր պատուիրանաց սուրբ
Հոգոյն»³³:

Նույն ոգով ու ոճով գովերգվում է Մաշտոցը նաև «Անճառելի շնորհօք լցեալ» Տերհերկնիցի և «Նմանեալ Մովսէսի» Մանկունքի մեջ:

Եթե Օրհնության մեջ բոլոր թարգմանիչներն էին համեմատվում Մովսէսի հետ, ապա «Նմանեալ Մովսէսի» Մանկունքի մեջ Մովսէսի հետ ըստ ամենայնի չափվում է միայն Մեսրոպ Մաշտոցը.

«Նմանեալ Մովսէսի տէր վարդապետ,
Բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշ-
խարհ,

Որով լուսաւորեցան ազգ որդոց Թորգո-
մայ»³⁴:

Թարգմանիչների կանոնը վերջանում է Մեսրոպ Մաշտոցին ուղղված հետևյալ խնդրանքով՝

«Արդ աղաչեմք զքոյին հեզութիւնդ, տէ՛ր
վարդապետ,

Բարեխօսեա առ Հայր ի յերկինս՝ վասն
տօնողացս,

Քանզի քն լուսաւորեցան մանկունք սուրբ
եկեղեցոյ»³⁵:

Թարգմանիչներին նվիրված պարականոն «Ցնծացէք այսօր» ժաշուն վերաբերում է բոլոր թարգմանիչներին և ոչ թե որևէ անհատի, ինչպես կանոնական շարականներից շատերը: Բանաստեղծը կոչ է անում բոլորին, որ ցնծան թարգմանիչների տոնի առիթով և սրբությամբ պատվեն նրանց հիշատակը, քանի որ նրանք «պայծառացան լուսովն երկնային»:

Հոգեկան պատերազմի

²⁶ Անդ, էջ 693:

²⁷ Անդ, էջ 693:

²⁸ Լ. Գ. Ավետիսյան, Բացատրություն շարականաց, էջ 550:

²⁹ «Ծարակնոց», էջ 693:

³⁰ Անդ, էջ 693:

³¹ Անդ, էջ 693:

³² Անդ, էջ 693—694:

³³ Անդ, էջ 694—695:

³⁴ Անդ, էջ 697:

³⁵ Անդ, էջ 697:

մեջ այդ վարդապետները եղել են անհա-
մանջ, և խավարը՝ ամենամեծ թշնամին, ո-
չբնչացրել են.

«Յնծացեալ բերկրեցան ի փառս Աստու-
ծոյ,

Եղեն գօրատր ի պատեռազմի, զիշխանն
անօրէն ի միջոյ բարձին»³⁶:

Հովհան Մանդակունու գրած շարական-
ների մեջ լավագույններից մեկն է նաև «Ան-
սկիզբն Բանն Աստուած» Համբարձին: Այս
շարականը դրված է Հռիփսիմյանց կանոնի
մեջ, Կոմիտաս կաթողիկոսի հայտնի «Ան-
ձինք նուիրեալք» օրհնությունից հետո՝ իբրև
Համբարձի: Այս շարականը նույնպես նվիր-
ված է Հռիփսիմյանց կույսերին և դրա հա-
մար էլ ընդգրկված է այդ կանոնի մեջ:

Մանդակունու գրած այս շարականը
երևում է՝ գրված է այբբենական կարգով,
որը թերևս այս ձևի գրված շարականներից
առաջինն է, սակայն դարերի ընթացքում
այն կրճատվել, մնացել է միայն 10 տուն
(36-ի փոխարեն): Այդ կրճատումը կատար-
վել է եկեղեցու նշանավոր հայրերի և Ծա-
րակնոցը խմբագրողների ու կազմողների
ձեռքով՝ տասնհինգերորդ դարից հետո:

Անկապած, Կոմիտաս կաթողիկոսի
«Անձինքը» իր բովանդակությամբ ու ար-
վեստով շատ բարձր է Մանդակունու շա-
րականից, բնականաբար Հռիփսիմյանց կա-
նոնի օրհնությունը «Անձինքը» պիտի լի-
ներ: Միևնույն կանոնի մեջ երկու օրհնու-
թյուն դնելը անհարմար է համարվել, ուստի
Մանդակունու այդ լավ շարականը ժամա-
կարգությունից դուրս չլողցնելու համար
նույն կանոնի մեջ դրվել է որպես Համբար-
ձի: Սակայն շատ անհարմար էր նաև, որ
Համբարձին այդքան մեծ, 36 տնից բաղկա-
ցած լիներ: Այդպիսի մեծ Համբարձի մեր
Ծարակնոցում չկա: Ահա թե ինչու է Ման-
դակունու այս շարականը կրճատվել և բոլոր
ուպագիր շարականներում (և ձեռագրերից
շատերում) ունի ոչ թե 36, այլ միայն 10
տուն, որը որպես Համբարձի դարձյալ շատ
մեծ է իր ծավալով: Կոմիտասի «Անձինքի»
գրեթե բոլոր 36 տներում էլ Հռիփսիմյանց
կույսերը հիշատակվում են անունով ու շատ
որոշակի: Սակայն Մանդակունու «Անսկիզ-
բն Բանն Աստուած» շարականի ո՛չ մի
տան մեջ ո՛չ մի որոշակի բան կամ հիշա-
տակություն չկա Հռիփսիմյանց մասին, ո՛չ
ուպագրված 10 և ո՛չ էլ ձեռագիր 36 տնե-
րում:

³⁶ Ս. Վ. Ամատունի, նշված աշխատությունը, էջ
139:


Ամբողջ շարականի բովանդակության
էությունը կայանում է նրանում, որ բոլոր
հավատացյալներն ու հոգևորականները,
աշակերտաբար նմանվել են մարտիրոսնե-
րին, նահատակներին, վկաներին ու ճգնա-
վորներին: Մեր կարծիքով Հովհան Մանդա-
կունու այս շարականը նվիրված է ոչ թե
Հռիփսիմյանց, այլ ընդհանրապես մարտի-
րոսներին ու հավատի բոլոր զինվորներին:
Բազմավաստակ բանասերն Ռ. Գաբրիել Ավե-
տիքյանն այս կապակցությամբ գրում է.
«Յօրինող սորա (այսինքն՝ շարականի—Գ.
Հ.) ասելն զՅովհան Մանդակունի կաթողի-
կոս, թեպետ և զպատճառ յօրինմանն ան-
գիտեմանք ասել հաւաստի, վասն զի անո-
րոշաբար առ ամենայն մարտիրոսս ի դէպ
եղանեն բանքն. ի կարծիս լինիմք զուցե ա-
րարեալ իցէ ի պատճառս նահատակութեան
սրբոց Վարդանանց և Ղևոնդեանց»³⁷: Եվ
մեծ բանասերի այս կարծիքը շատ հավա-
նական է:

*
*

Հինգերորդ դարը հաջորդ դարերի սե-
րունդներին արդեն թողել էր հոգևոր բա-
նաստեղծության մի հարուստ ժառանգու-
թյուն: Այդ հոգևոր երգերն ունեն յուրա-
հատուկ ձև ու չափ, որոնք դեռ կարոտ են
լուրջ ուսումնասիրության:

Մեր հին դպրության այս պատկանելի
նյութի գրական և ազգային հատկություննե-
րին հարազատ մնալով՝ հետագա ժամա-
նակների հոգևոր երգիչները ավելի զար-
գացրին ու հարստացրին հայկական մշա-
կույթի այդ տեսակը, որն այժմ ամփոփվում
է մեր հին բանաստեղծական գանձարանի՝
Ծարական սուվար գրքի մեջ: Ինչպես մյուս,
այնպես էլ հոգևոր երգի բնագավառում Սա-
հակ-Մեսրոպի և սրանց աշակերտների նա-
խաձեռնած ու կատարած աշխատանքները
միայն կրոնական չեն եղել: Այս շարակա-
նագիրների ամբողջ գործունեությունն ունի
նաև ազգային և հայրենասիրական մեծ
նշանակություն: Սրանք հիմք դրեցին մեր
ազգային մշակույթին, հանդիսացան այդ
մշակույթի ոսկեփրանքները և դարբնեցին հո-
գեվոր այնպիսի մի գեներ, որը դարերի ըն-
թացքում թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես
փրկեց հայ ժողովրդին սպառնացող կոր-
ծալիցներից: Այս շարականագիրները ի-
րենց կրոնական-եկեղեցական գործունեու-
թյամբ միաժամանակ մեծ լուսավորիչներ ու
մեծ հայրենասերներ են եղել:

³⁷ Գ. Ավետիքյան, Բացատրություն շարականաց,
էջ 447—448:



ՀԱՍԱՐԱԿ ՕՐԵՐԻ ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽՆԵՐԸ

Հագիվ թե կարիք կա հիմնավորելու կանոնագրության կարևորությունը պաշտոններգության մեջ:

Գեղարվեստական առումով, դրանք, իրենց եղանակների խստաշունչ-առնական ելևէջներով, քրիստոնեական կուռ միավորված համայնքին հատուկ բարձր ապրումների ընդհանրացված արտահայտությամբ ու կերպարային բովանդակության խորհրդալիորեն ոգեղինացված բնույթով, աչքի են ընկնում որպես հիմնավոր գեղեցկության հազվագյուտ նմուշներ:

Գիտության համար դրանց նշանակությունն այն է, որ (մի քանի այլ նյութերի հետ միասին) ներկայացնում են հայկական ութ-ձայնի ինքնատիպ համակարգի մեղեդիական հնագույն (V դարասկզբին վերաբերող) բովանդակությունը¹:

Ամենից ավելի՝ վերջին կետն է կարոտ քննության: Հակիրճ կանգ առնենք դրա վրա:

Ինչպես գիտենք՝ Հայաստանում, հեթանոսության շրջանում, տեսության մեջ հաշվի առնված գլխավոր

ձայնեղանակները թվով չորսն են եղել²: Հայկանալի է, որ գործնականում կենցաղավարել են ավելի շատ ձայնեղանակներ: Ինչպես՝ կարող էին դրանք խմբավորված լինել չորս գլխավորների շուրջ: Ամենայն հավանականությամբ՝ ըստ դրանց վերջավորող հընչյունների: Հիրավի, հայ երաժշտության մեջ դիատոնիկ ձայնաշարի հիմնական քառյակի յուրաքանչյուր աստիճան մի քանի ձայնեղանակներում կարող է կատարել վերջավորող (կամ տոնիկական) հնչյունի պաշտոնը, այսպես. բենկորճը (F)³՝ դի դարձվածք և ստեղի տիպի ձայնեղանակներում, խտրովայինը (G)⁴՝ բձ, գձ, դձ, գկ, դկ տիպի ձայնեղանակներում, ներքնախաղը (A)⁵՝ աձ, ալ տիպի ձայնեղանակներում, պարուկը (B)⁶՝ գձ դարձվածք³ և դձ դարձվածք⁴ տիպի ձայնեղանակներում: Արդ, նշված խմբերում տարբերելով մեկական հիմնական, այն է՝

² Տես մեր հոդվածը՝ Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության (Ա.), ԳԱ, «Լրաբեր», 1970, № 10, էջ 26:

³ Գձ դարձվածքում պարուկը (B) որպես հիմնաձայն ընդունելու վառ օրինակ է ներկայացնում թաղման կանոնի՝ Կոմիտասի մշակած «Ըգբեզ օրհներ» հարցը (տես Կոմիտաս վարդապետ, Տաղք և աղելուք... Փարիզ, 1946, էջ 11):

⁴ Նկատի ունենք՝ B-ձ հենքով հայ ժողովրդական երգերը (տե՛ս մեր հոդվածը՝ «Կոմիտասի «Ծար Ակնա ժողովրդական երգերի» ժողովածուն պատմաքննական լույսի տակ», ԳԱ «Լրաբեր», 1969, № 11, էջ 13:

¹ Հանգամանք, որ նշանակալից ու շահեկան է մաս առհասարակ քրիստոնեական ութ-ձայնի պատմական զարգացման ուսումնասիրության տեսանկյունից, և որը, ցավոք, հայ երաժշտության մեջ լուսաբանված չլինելով, միջազգային երաժշտագիտության էջերում ևս անտեսվում է ցայժմ: Տես, օրինակ, G. Reese, Music in the Middle Ages, New York, 1940, էջ 71—75 (ուր ութ-ձայնի ծագմանը վերաբերող հնագույն փաստերից ստաջ բերված ու քննարկված են լոկ մինչև VI դարասկիզբը հասնող տվյալներ):

քննադատական ու գործածական եղանակ, մյուսները (դատելով տեսական հնագույն մտածելակերպի դրույթներով), հնարավոր է հավաքել հիշյալ հիմնականների շուրջ:

Թեև ձայնեղանակների ինչպիսի համակարգ էր վավերացրել հայ եկեղեցին IV դարում, ասենք՝ Ներսես Մեծի օրոք, բնավ չգիտենք: Այլ գոնե սա կարող ենք հաստատել, ինչպես նշել ենք ուրիշ անգամ էլ⁵, թե հիշյալ հարյուրամյակում հայ պաշտոնական եկեղեցու ներկայացուցիչները պաշտամունքային արարողությունը առիաված կատարելով օտար լեզուներով, անարկայականորեն այն ծառայությունը մատուցած եղան, որ Հայաստանը մի ամբողջ դար անմիջականորեն հաղորդակցվեց ասորական և հունական հոգևոր երգարվեստի փորձին:

Բայց Հայաստանում IV դարում գոյություն ուներ մանև դպրոցավարտ եկեղեցականների կողմից բանավոր կերպով հայերեն թարգմանվող քրիստոնեական պաշտամունքային քննադրերի, և, առաջին հերթին, սաղմոսների եղանակավորման հայկական ազգային մի ուղղություն, որ ծագելով ձևավորվել էր լայն զանգվածների ընդերքում⁶: Ժողովուրդը հայերեն սաղմոսները անգիր էր անում և երգում, բնականաբար՝ հենվելով այլազան խոսքեր եղանակավորելու երաժշտական սեփական դարավոր փորձի վրա:

Սրան անհրաժեշտ է ավելացնել, որ, ըստ բոլոր տվյալների, IV դարի հիշյալ թարգմանիչների ու սաղմոսող ժողովրդի ընդհանուր ջանքերով ստեղծվել էին որոշ «կցուրդ» երգեր ևս, որոնք ավելի ուշ վերագրվեցին սկանալոր հեղինակներին⁷: Այնպես որ հայ իրականության մեջ քրիստոնեական պաշտամունքային երաժշտության ասպարեզում մինչև V դարասկիզբը մեղեդիական զգալի հարստություններ էին կուտակվել արդեն, երբ, գրեթե գլուխից հետո, ս. Սահակ և ս. Մեսրոպ ձեռնարկելով դրանց

կարգավորությունը, վավերացրին ուս-ձայնի հայկական հնագույն համակարգը:

Պետք է ասել՝ այս կամ այն չափով ազատ, յուրովի և տարբեր ժամանակներում տարբեր մտացմամբ մեկնաբանելով ուս-ձայնի դրությունը, նրա նշանաբանի ներքո հայ եկեղեցին մի քանի անգամ կարգավորել է (կանոնական է հռչակել) հոգևոր չափամուշ եղանակների (կամ ձայնեղանակների) տարբեր միակցություններ: V դարում (սահակ-մեսրոպյան շրջանում)⁸ ուս-կանոն սաղմոսերգությունները, VIII դարում (Ստեփանոս Սյունեցու ջանքերով)⁹, ուս-ձայն շարականները, XII դարում (Ներսես Ընդհատ օրոք, և, ամենայն հավանականությամբ, նրա ցուցմունքով ու ղեկավարությամբ)¹⁰ մանրամասն ուս-ձայն երգաշարքերը, յուրաքանչյուր դեպքում կիրառելով մեղեդիական նյութի դասակարգման հետզհետե խորացվող մի սկզբունք, ձայնեղանակները հարաբերակցելով եկեղեցական օրվա ժամերի ու տարվա շրջանների հետ, այլև զանազանելով երաժշտական ձայն (չափամուշ եղանակ) և օրվա ձայն հասկացությունները:

Տվյալ դեպքում մեզ գրադեցնում է հիշյալ կարգավորումներից առաջինը:

Նրա իրագործման շրջանում թեև ծագել էր ու ծաղկում էր արդեն հայ հոգևոր ինքնուրույն երգարվեստը, այդուամենայնիվ, ս. Սահակ և ս. Մեսրոպ «կցուրդ» տիպի նորաստեղծ երգերի կատարումը պարտադիր չհամարելով, առաջին հերթին մտահոգվել են հայոց նախնական աղոթամատույցի ու դրան կապված ամենօրյա երգեցողության մասին:

Այդ աղոթամատույցը Սաղմոսարանն էր՝ հատկապես անջատված Հին Կտակարանից (Աստվածաշնչի թարգմանությունից անմիջապես հետո) ու բաժանված ուս «կանոնների», հետևյալ կերպ. Ա—ԺԷ, ԺԸ—ԼԵ, ԼԶ—ԾԴ, ԾԵ—ՀԱ, ՀԲ—ԶԲ, ԶԳ—ԾԵ, ԾԶ—ԾԺԸ և ԾԺԹ—ԾԺԷ (վերջում ԾԺԸ—ԾԺԹ սաղմոսների հավելվածով): Սույն կանոններից յուրաքանչյուրը կրոնական էր մարգարեական օրհնությամբ (և քարոզով ու աղոթքով, որ հորինվել էին Սահակ Պարթևը⁸ և Հովհան Մանգրակունին⁹):

Նման Սաղմոսարանը փաստորեն ժամագիրք էր մահ, քանի որ ներփակում էր «հասարակաց աղոթքի» գրեթե բոլոր բաղկացուցիչները¹⁰, և իր ութա-

⁵ Տե՛ս մեր հոդվածը՝ «Հնական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության (Բ), ԳԱ «Էրաբեր», 1971, № 1:

⁶ Տե՛ս մեր հոդվածը՝ Monodische Denkmäler Alt-Armeniens (Die Tradition der armenischen Psalmodie), «Beiträge zur Musik-wissenschaft», Berlin, 1970, Heft 1, s. 29.

⁷ Տակավին Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը նկատում էր, որ «հավանաբար ս. Մաշտոցին վերագրված շարականներից մի քանիսը, օր. ապաշխարության համբարձիները և դարից ավելի հին են և երգվել են սաղմոսների հետ, իբրև նոցա կցորդներ» (տե՛ս նրա՝ Հայոց եկեղեցվի պատմություն, մասն Ա, Վաղարշապատ, 1908, էջ 121): Միգուցե չափազանց կարական է արտահայտված այստեղ հեղինակի միտքը: Անկախ դրանից, ապաշխարության երգերի տարբեր շարքերը ընկնելու մեջք ևս առիթ ունեցել ենք դիտելու IV դարից եկող առանձին կտորներ: Այդպիսին է, օրինակ, «Իկ շարքի մանկունը»՝ «Է անուն Տեանն օրհնեալ», որ խոսքերով ու եղանակով հնագույն (և ոճով ու բովանդակությամբ էլ շրջապատից իսկույն տարբերվող) մոմշ է:

⁸ Տե՛ս Յովհաննու Իմաստասիրի Ասննցույ Մատենագրությունը, Վենետիկ, 1953, էջ 42:

⁹ Անդ, էջ 59: Նաև՝ Ստեփանոսի Տարոնեցու Աստվածաբանական Տեսությունից Տեսություն, 1885, էջ 81: Նկատարանի են «Օրհնություններ ցուցակի» հառաջ երեք տեղեկությունները ևս: Իսկ երկույն ժամու «Աղաչեսցուք» քարոզի մասին համոզիչ պարզաբանում տվեց Հ. Վ. Հացունին (տե՛ս նրա՝ Պատմություն հայոց աղոթամատույցին, Վենետիկ, 1965, էջ 166—167. «Նկատողություն մը»):

¹⁰ Ի բաց այդպիսի. Գրքի ընթերցվածներն ու իրենց գրական խոսքերով համաքրիստոնեական մի-երկու երգեր, ինչպես՝ առավոտյան ժամու «Փառք քի բարձուն»-ը և երեկոյան ժամու, «Լոյս զուրբ»-ը, որոնք

մասն կազմությամբ ներկայացնում ծիսական ինքնատիպ հայկական մի մատյան, ինչպես ցույց տվեց Վ. Հացունի¹¹, և ինչպես երևում է ժամագրքի ընդհանուր պատմությանը վերաբերող տվյալներից¹²:

Նրա ութ կանոններն (սկզբնապես) բաժանված են եղել եկեղեցական օրվա վեց ժամերի վրա ու կատարվել միաձայն, երկու դասերի մասնակցությամբ, փոխփոխ՝ երկուական կանոն գիշերային և առավոտյան ժամերին, և մեկական՝ Գ. Զ. Թ. ու երեկոյան ժամերին:

Քննարկվող մատյանը իսկական երգարան է եղել: Երգվել են և՛ սաղմոսականոցները, և՛ մարգարեական օրհնությունները (որոնք ունեցել են նույնիսկ ծանր ու հանդիսավոր եղանակներ)¹³, և՛ թե քարոզները: Մատյանիս հիմքը սակայն, ոչ միայն կառուցողական, այլև երաժշտական առումով, ներկայացրել են նրա ութ սաղմոսականոցները: Վերակարգավորելով հայոց ձայնեղանակները, Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը ութ խմբի են բաժանել դրանք՝ ըստ ութ սաղմոսականոցների¹⁴:

Այն, որ ութ սաղմոսականոցներից յուրաքանչյուրին համապատասխանեցված է եղել մեկ-մեկ ձայնեղանակ՝ երևում է ինչպես մի շարք գրչագիր սաղմոսարանների լուսանցքներում հին սովորությամբ հարստեան ձայնային նշումներից¹⁵, այնպես էլ երաժշտա-տեսական բովանդակության հետևյալ տիպի հնագույն պատառիկներից. «Աձ. առաջի ձայն է՝ Երանեայ, Ակ. առաջի կողմ է՝ Երկինք պատմեն, Բձ. երկրորդ է՝ Մի նախանձիր, Բկ. առաջ կողմ է՝ Ողորման է, Գձ. երրորդ է՝ Իբրև գի բարի է, Գկ. վատ է՝ Տեր ապաւեն, Դձ. չորրորդ է՝ Խոստովան, Դկ. վերջ՝ Ի ներութեան»¹⁶:

Ջուտ երաժշտական տեսակետով կուտակված մեղեդիական հարստությունները ութ խմբի բաժանելիս հայ եկեղեցու հայերը ևս հաշվի են առել համաբարիստեանական արվեստին (նույնիսկ վաղ միջնադարյան միաձայն ողջ երաժշտարվեստին) հատուկ մի սկզբունք (դա պարզվում է, նախ և առաջ, սաղմոսների կանոնագրությունների ու նաև շարականների վերլուծությունից). այն է՝ տվյալ եղանակը սկսելու, ծավալելու և ավարտելու տիպական դարձվածքները կամ պտույտները (մոտիվները), առանձնապես կառվարելով ավարտող դարձվածքները (վերջնահանգանքները), որ մի մեծ առաջընթաց քայլ է լույս ա-

հիշատակված կամ մեջբերված լինելով տակավին Առաքելական Սահմանադրությանց մեջ, հայ եկեղեցական կյանքում ևս կանուխան արմատացած են եղել՝ ազգային տոմսիկ եղանակներով:

¹¹ Վ. Հացունի, նշվ. աշխ.-ը, էջ 143—184:

¹² S. Baumer, Histoire du Bréviaire, Paris, 1905.

¹³ Վ. Հացունի, նշվ. աշխ.-ը, էջ 162:

¹⁴ Տե՛ս մեր հոդվածը՝ Կոմիտասը և հայկական խազերի վերծանության խնդիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 42—43:

¹⁵ Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1642 (էջ 1ա, 28ա, 59ա, 91ա, 118բ, 148բ, 174բ և 204ա):

¹⁶ Մատենադարան, ձեռ. № 7707, էջ 262բ:

վարտող ձայնատիճանները նկատի ունենալու վերը բացատրված ավելի հին սկզբունքի համեմատությամբ:

Յուրաքանչյուր սաղմոսականոց ամբողջությամբ կատարելով իրեն հատուկ ձայնեղանակում, հարակից սյուս նյութերը (օրհնությունները, քարոզները) անպայման նույն ձայնեղանակով չէ, որ երգել են հնում: Ապացույց՝ գիշերային (և նրա շարունակությունը հանդիսացող առավոտյան) ժամի սահակյան չորս քարոզները: Չորսն ևս զձ դարձվածքում են հասել մեզ¹⁷: Եվ դրանց ձայնեղանակային հիմքի նախնականությունը հաստատվում է նրանով, որ VII դարի հեղինակ Մովսես Բերթոյը զձ-ի մասին ասում է, թե «սովա յարիցեցան քարոզք տըընջեան և ի գիշերոյ»¹⁸:

Սահակյան հիշյալ քարոզները ուշադիր զննելիս բախվում ենք նաև հայոց ութ հնագույն ձայնեղանակների պայմանական նշման փաստին: Նախ ասենք, այս կապակցությամբ, որ հնում, գիշերային հսկման ժամանակ, երբ կատարվել են բոլոր ութ կանոնները, սահակյան չորս քարոզները կրկնվելով կցվել են երկուական (բայց ոչ հաջորդական) կանոնների¹⁹: Եվ այստեղից է դրանց հիշատակությունը ձեռագրերում՝ «Քարոզք Երանելոյ և Իբրև» ու նման ձևերով (այսինքն զույգ կանոնների սկզբնաբառերի մեջբերումով²⁰): Ըստ այդմ, աղավաղումներից ազատ գրչագրերում սաղմոսականոցները հիշատակվում են՝ 1—5, 2—6, 3—7 և 4—8 զուգորդումներով: Արդ, սաղմոսականոցները հայտնի են եղել ըստ իրենց ձայնեղանակների ևս, որով քննարկվող քարոզները հիշատակվել են նաև համապատասխան զույգ ձայնեղանակների նշումով, հետևյալ կերպ, ինչպես դա երևում է ձայնագրյալ ժամագրքից էլ. «Վասն ի վերուստ... թկ—դկ», «Վասն ի գիշերի... աձ—գձ», «Վասն ուղեկոյ... ալ—գլ», «Վասն գտանելոյ... թձ—դձ»²¹: Ձայնեղանակային սույն նշումներն, ահա, հանդիսանում են ոչ թե երաժշտական ձայների կամ

¹⁷ Տե՛ս Երգք Ձայնագրեալք ի Ժամագրոց Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1877, էջ 182—188 (Քարոզք ի պէտս հասարակ աւուրց): Այստեղ քարոզների հիմնաձայնն է՝ երկրորդ վերնախաղ կիավարը, որը շփոթության տեղիք պետք չէ տա: Բավական է ձայնագրությունը փոխադրել փոքր եղակ ցած, և այդ դեպքում հիմնաձայնը կդառնա երկրորդ փուլը: Կարևորը ձայների բացարձակ բարձրությունները չեն, այլ՝ դրանց հարաբերությունները:

¹⁸ Մովսիսի Քերթոդահարն Յաղագս կարգաց և կեղեցւոյ բացայայտութիւնք (տե՛ս «Անահիտ», Փարիզ, 1885, № 1—2, էջ 30—32):

¹⁹ Վ. Հացունի, նշվ. աշխ.-ը, էջ 156:

²⁰ Մատենադարան, ձեռ. № 594, էջ 23: Ն. Տաշյան,

Յուզակ..., էջ 517 և այլուր:

²¹ Սրանց հերթակարգն այսպես է նաև Հովհ. Օձնեցու վկայության համաձայն (տե՛ս նրա հիշատակված աշխ.-ը, էջ 42): Բայց որ «աձ—գձ» նշումը ի վերջո պիտի հատկացվեր ճիշտ և ճիշտ «Վասն ի գիշերի» քարոզին, հետևում է նաև Հացունու կազմած՝

օրվա ձայների ցուցիչներ, ինչպես կարծեցին երաժիշտներից շատերը²²։ այլ՝ համապատասխան սաղմոսականոցները խորհրդանշող պայմանական նշաններ։

Սաղմոսականոցները բավական ընդարձակ միավորներ են եղել, բաղկացած յոթական գութդայից (իսկ գութդաներից ամեն մեկը՝ 2—6 սաղմոսից, նախ՛ քանքն ծավալին, մեղեդիական մարմնավորման տեսակետից մի կարևոր տարբերացումով։ Յուրաքանչյուր կանոնի 7-րդ գութդան կոչվել է «կանոնագլուխ» ու երաժշտականորեն որոշակի սահմանագրվել մյուս (1—6) գութդաներից։ Վերջիններս ունենալով երաժշտական առավել պարզ կառուցվածք²³, կատարվել են բոլորովին անպաճույճ, սովորական-ընթացիկ կերպով, կարելի է ասել՝ թվերգի պես (quasi recitativo), հետևյալ օրինակին մոտիկ ձևերի մեջ²⁴ (Սաղմոս ԱԶ)։

Մինչդեռ կանոնագլուխները աչքի ընկնելով վատ մեղեդայնությամբ, պահանջել են նաև կատարողական համապատասխան ընդգծում։ «Արդ եօթն գութդայից կարգեալ է կանոն ըստ եօթն դարու կենցաղյա», գրում է Հովհանն Օձնեցիին, — և եօթն անգամ յառուրն օրինի Աստուած, և եօթն անգամ շուրջ գալն զԵրիքովի, և լետ վնցիցն կատարելոյ, յեօթներորդին հնչեաց զփողն և ուժգին աղաղակել ըստ հրամանին Յեսուայ՝ ի կործանումն Երիքովի. ըստ ալամ օրինակի և մեր վնցիք գութդայիք շուրջապատեմք զմեքենայիքն աստանայի, ըստ հրամանի մերոյն զօրավարի Յիսուսի, և եօթն գոչեմք գութդայա քարծրահնչին քարբառով զկանոնագլուխն ի բեկումն զօրութեան բանասարկոյին։ Եւ սպա գութերորդ ի խորհուրդ ութերորդին՝ զոր յալոց մարգարէիցն է կարգեալ, հանդերձ օրհնութեամբք ամենատեսաւ մատուցանեմք» (և այլն, ընդգծումը մերն է—Ն. Թ.)²⁵։

V դարասկզբում կանոնացված և հետո Հովհանն Մանդակունու ձեռքով բարդորված աղոթամատույցի (Սաղմոսարան-Ժապարրի) երաժշտական բովանդա-

V դարու պաշտամունքի պատկերից (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 183—184)։

²² Հմմտ.՝ Ե. Տնտեսյան, նկարագիր երգոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 80։

²³ Այն աստիճան, որ դրանք «ի թիւ» կատարված համարեց հ. Մ. Չամչյանը (տե՛ս նրա՝ Մեկնութիւն Սաղմոսաց, հ. Ա., Վեներտիկ, 1823, էջ 49), դրանց խազագրված չլինելու պատճառով։ Հիրավի, հին սաղմոսարանի գութդաներից միայն կանոնագլուխների խազագրությանն ենք հանդիպում գրչագրերում (հատկապես՝ խազգրքերում. տե՛ս օրինակ՝ Մատենադարան, ձեռ. № 591, էջ 6բ. «Կանոնագլուխն միահամուռ»)։ Սակայն, եկեղեցական որևէ բնագրի խազագրված չլինելը՝ նրա երգված չլինելուն, կամ թիվ ապավ լինելուն ապացույցը չի կարող հանդիսանալ երբևէ։

²⁴ Երգք Չայնագրեալք ի Ժամագրոց... էջ 146։

²⁵ Յովհաննու Իմաստասիրի Աձնեցւոյ Մատենագրութիւնը, նշվ. հրատ.-ը, էջ 130։

կառույցը, բնականաբար, իր ամբողջության մեջ ու բոլորովին անփոփոխ կերպով չէ, որ հասել է մինչև մեր օրերը։ Դատելով Ն. Թաշճյանի իրագործած և հայ եկեղեցու կողմից վավերացված ձայնագրություններից (որոնք ընդհանրապես առավել ամբողջականներն են), պատկերն, այստեղ, հետևյալն է։ Գրական խոսքերի առումով համաքրիստոնեական վերոհիշյալ երկու երգերից «Հոյս զուարթ»-ը երկար զարդորություններով է ճոխացվել²⁶, հավանաբար VII—VIII դարերում։ Ավելի մախնական (թեև ոչ սկզբնական) վիճակով է հարատևել «Փառք ի քարծուց»-ը, «մանավանդ, «Յորդոր» տարբերակի մեջ²⁷։ Քարոզներից լրիվ և ընդհանուր առմամբ հարազատ ոճով պահպանված են Սահակ Դարբեի հորինած չորսը²⁸։ Իսկ Հովհանն Մանդակունու ավելացրածներից ձայնագրված ունենք գիշերային ժամի նախադաս «Ջարթուցեալքս»-ը, երեք տարբերակով, որոնցից հնագույն դրոշմ է կրում երրորդը²⁹։ Բացակայում են՝ Գ. Զ. և Թ. ժամերի քարոզների («Միաբան ամենեքեան, «Արթուն մտօք» և «Սուրբ սրտիս») ու երեկոյան ժամի «Աղաչեսցուք»-ի եղանակները։ Մարգարեական օրհնությունների³⁰ երբեմնի եղանակներին նույնպես չենք հանդիպում։ Սաղմոսականոցների առաջին 6 գութդաների երգեցողության ոճի մասին մեզ գաղափար են տալիս որոշ թվով աձ³¹, գձ³² և գկ³³ սաղմոսներ միայն, որոնք վերլուծել ենք արդեն³⁴։ Առավել լրիվ պահպանված են կանոնագլուխները³⁵։ Հարկ է, որեւմ, ի մոտո ծանոթանալ դրանց։

²⁶ Երգք Չայնագրեալք ի Ժամագրոց... էջ 409—411։

²⁷ Հմմտ.՝ անդ, էջ 289—291 և 291—293։

²⁸ Անդ, էջ 182—188 (հասարակ օրերի համար) և 175—181 (տոնական օրերի համար՝ նույն եղանակով, թիվ ալվի ճոխացված)։

²⁹ Հմմտ.՝ անդ, էջ 25, 39 և 55։

³⁰ Դրանցից մի քանիսին՝ տուն առ տուն խազավորված խոսքերով հանդիպում ենք ճաշեցներում։ Տե՛ս օրինակ Հեթում Բ-ի հայտնի ճաշոցը։ Մատենադարան, ձեռ. № 979, էջ 15ա և 200բ՝ «Արհմեսցուք զՏէր, զի փառաք է փառատրեալ» ... [Մովսէսի և որդւոցն Իսրայէլի], էջ 20բ և 209բ՝ «Արհմեսցուք ևս դու (sic!) տէր Աստուած հարցն մերոց» ... [Դահիէլի Գ.], էջ 200ա՝ «ի նեղութեան իմոմ ևս առ Տէր կարդացի» ... [Յովնանու մարգարէին]։

³¹ Երգք Չայնագրեալք ի Ժամագրոց... էջ 146—157 (ի բաց աղյալ ակ պարունակող էջերը)։

³² Անդ, էջ 356—395։

³³ Անդ, էջ 334—356։

³⁴ Ե՛վ որպես հիշյալ գութդաների կատարման, և՛ թև որպես IV դարի սաղմոսերգության ոճը ներկայացնող նմուշներ (տե՛ս Monodische Denkmäler Alt-Armeniens)։

³⁵ Երգք Չայնագրեալք ի Ժամագրոց... էջ 88—105 (հասարակ օրերի համար), էջ 66—87 (հանդիսավոր օրերի համար), և էջ 106—112 (բուն քարեկենդանի, Նոր կիրակիի ու ավագ ուրբաթու համար և «Մահու դատեալ»-ն)։ Սրանց կապակցությամբ անա, Ե. Տըն-

Ստորև բերում ենք հասարակ օրերի կանոնագրությանը, բուն բարեկենդանի և ավագ ուրբաթու կտորների հետ միասին, փոխադրելով եվրոպական ձայնակների և դրանց կառուցվածքի մասին տալով անհրաժեշտ բացատրությունները:

Երաժշտականորեն՝ քննարկվող կանոնագրությունը համապատասխան ձայնեղանակների մյուս սաղմոսերգությանց ճոխացումն են ներկայացնում: Իրենց ծնունդով նույն այդ սաղմոսերգություններին են կապված, ինչպես գիտենք³⁶, «կցուրդ» կոչված հոգևոր ինքնուրույն սաղմոսատիպ երգերը ևս (որոնք ավելի ուշ անվանվել են շարականներ), միայն թե՛ երգչությանը սկզբունքի հետևողական կիրառմամբ՝ ժամանակի ընթացքում ավելի ևս զարգացած և ճյուղավորված: Այնպես որ, կանոնագրությունների եղանակները համեմատելի են, մի կողմից (և հիմնականում)՝ սաղմոսների, ու մյուս կողմից՝ (մասամբ) նաև շարականների հետ:

Կանոնագրություններում նույնպես (ինչպես և սովորական սաղմոսներում) երաժշտական ձևի հիմքում ընկած է գրական խոսքի ձևը: Կանոնագրությանի ողջ ձևը, գլխավոր գծերի մեջ, գոյանում է՝ մեղեդիական հարաբերականորեն ավարտուն և միատիպ կառուցումների շարահարումով. կառուցումներ, որոնք համապատասխանում են սաղմոսատանը, և որոնց ներքին բաժանումները (նախադասություններն ու ֆրազները) երաժշտական համարժեքներն են գրական նախադասության՝ կետադրության որևէ նշանով (ստորակետ, բութ, միջակետ) կամ որևէ շաղկապով անջատված քիչ թև շատ ծավալուն մասերի: Ի տարբերություն սակայն, սաղմոսների, կանոնագրությունում նախ՝ «Փոխ» կոչված մասերից ընդհանրապես տարբերակվում են հիշյալ կառուցումների ելևէջը, հանգանակն ու հորինվածքը. և հետո՝ այստեղ յուրաքանչյուր սաղմոսատան մեջ որպես «դարձ» օգտագործված է «ալելուիա» խոսքը: Վերջին կետը գեղարվեստական զգալի հետաքրքրություն է հաղորդում կանոնագրությունների սաղմոսատներից, մանավանդ որ նրանցում հիշյալ «դարձը» հանդես է գալիս երեք ձևով: Յուրաքանչյուր կանոնագրությանի առաջին սաղմոսատանը բաժանված է լինում երկու մոտավորապես հավասար մասերի, որոնցից ամեն մեկի վերջում հնչում է «դարձ»-ը (մեկական «ալելուիա»): Խիստ հավանաբար, գիտությանը «реponse pour une ne» անվամբ հայտնի³⁷ սաղմոսերգության մի տատանայանը խորաթափանց հայացքով նախ նկատում էր, թե հայոց «ուր» ձայն եղանակները ու Թարգմանչաց օրերին սկսած են, որոց ուրթ թիվերու բաժանումը հիմնված ըլլալու է հավանականաբար՝ ուրթ կանոն սաղմոսներու բաժանման վերա, և գտնում, որ «այսօրվա կանոնագրություններն ալ... նույն վաղեմի սաղմոսերգությանց մնացորդներն են» (նկարագիր երգող... էջ 115 և 81):

³⁶ Տե՛ս մեր հոդվածը՝ Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Հանքեր Մատենադարանի», 1964, № 7, էջ 201):

³⁷ Р. Грыбер, История музыкальной культуры, т. 1, ч. первая, М. Л, 1941, стр. 341—342.

բառեսակն է սա, երբ սաղմոսի խոսքերը երգում է տվյալ դասի մեներգիչը, իսկ խոմբը ոգևորված միանում է «ալելուիա»-ից կամ մի փոքր առաջ³⁸: Կանոնագրությանի հաջորդ կառուցումներում, մինչև «Փոխը», միայն սաղմոսատան վերջում է երևում «դարձը»՝ մեկ «ալելուիա»-ով³⁹: Իսկ «Փոխ»-ից սկսած՝ դարձյալ սաղմոսատան վերջում, բայց երկու հաջորդական «ալելուիա»-ներով⁴⁰: Ըստ որում այս «ալելուիա»-ները տարբեր ձայնեղանակներում զուգորդվում են մեղեդիական ցցուն դարձվածքների (մոտիվների) հետ, որոնք երբեմն միևնույն ձայնեղանակի միջում ևս (սկսած «Փոխ»-ից) տարբերակվում, իսկ կանոնագրությունների վերջին սաղմոսատան մեջ նաև հաճախ ուղղակի նորոգվում են: Եթե սրան ավելացնենք, որ այստեղ երաժշտական կառուցումների մնացած հատվածներում էլ ելևէջն ավելի հարուստ է ողորուն պտույտներով և կշռույթը՝ արտահայտիչ շեշտերով ու այլազան տևողություններով, ապա պարզ կլինի, որ կանոնագրությունների երաժշտությունը, սովորական սաղմոսների համեմատությամբ, ավելի երգային բնույթ ունի:

³⁸ Հ. Մ. Չամչյանը երկու մեներգիչների փոխասացությունը նախաձեռնում է նույնիսկ իր կարծիքով «ի թիվ» կատարված գուրդաների վրա: «Երկու ումանը կացեալ յառեմի ի թի վնարեի՞ն զիրաքանչիւր կանոնի զվեց գուրդայն,—գրում է նա,—և ի հասանել յեթներորդն՝ սկսանելին երգել զայն ստորոգի. այսինքն դաս է դաս քանի մը տուն. և ապա դարձեալ ի թի առին. և ի հասանել ի վերջին մասն այնր եթներորդ գուրդային՝ բարձրաձայն նուագելին զայն» (Մեկնութիւն Սաղմոսաց, Ա., էջ 49): «Ի թի»-ի գաղափարը հին դարերի համար դուրս թողնելու է, ինչպես բազմիցս շեշտեց Վ. Հացունին էլ (նշվ. աշխ.-ը, էջ 161): Իսկ «բարձրաձայն նուագ»-ը կանոնագրությանի «վերջին մասին» հատկացնելը մոտեն է տալիս: Արդյոք «Փոխ»-երն է ակնարկում:

³⁹ Այս դեպքում առավել ևս՝ յուրաքանչյուր դասի մեներգիչն խոմբը կարող էր միանալ ոչ անապաման «ալելուիա»-ից (այդքան ուշացումով), այլ՝ երաժշտական կառուցումի երկրորդ նախադասությունից (որպես «պատասխան» մեներգիչին): Մի խոսքով, եղած տվյալները հուշում են, որ հնում մեզ մոտ էլ բանեցվել է սաղմոսերգության երկու ձևն ևս. սաղմոսականոնների 1—6 գուրդաներում՝ դաս-դաս խմբական մեղմ ու ընթացիկ փոխերգեցողությունը (psa'modie ant'p'hon'que), և կանոնագրությունում՝ դարձյալ դաս-դաս՝ մեներգա-խմբային աշխույժ փոխերգեցողությունը (psa'modie resp'nsoriale): Վերջինիս շոշափելի ապացույցները մնացել են քննարկվող սաղմոսատների երաժշտական հորինվածքում: Ընդհանրապես սաձ, սաղմոսերգության սույն երկրորդ ձևն է (իբրև կատարման ձև!), որ դարերի ընթացքում ենթարկվել է զգալի փոփոխության (տե՛ս Th. Gérolle, Monodie et Lied, Encyclopédie de la Musique et Dictionnaire du conservatoire, fond. A. Lavignac, Deuxième Partie, 5, Paris, 1930, p. 2763):

⁴⁰ Բացառություն է կազմում լոկ Դձ կանոնագրությանի

Տնտեսական դարձվածքների (մոտիվների) կազմով կանոնադրությունները ետ չեն մնում անգամ իրենց ժամանակակից ստղծմաստիպ շարականներից (թեև վերջիններին առավելությունն այն է, որ սկզբից ենթադրված են եղել պատմական զարգացման ընթացքում ավելի ու ավելի լայն դրսևորվելու ընդունակ երգային սկզբունքի վրա)։ Ավելի կարևոր է դիտել, որ կանոնադրությունների ուժ ձայները, շարականի երաժշտության (նույնիսկ ստեղծի ու հարձակման տիպի ուժը երգերի) համեմատությամբ ընդհանրապես համեմատելի թերեկով լադային միևնույն հիմքը, ավելի ուշ (VIII դարում) կանոնացված ու «աձ», «բձ» և այլն նույն անուններով հայտնի համապատասխան ձայներ-դանակների հետ համախ չեն համընկնում և տարբերվում են մեղեդիական պտույտների (մոտիվների) վառ ինքնատիպ կազմով։

Այսպես, քննարկվող կանոնադրությունների աձ եղանակը մինչև «Փոխ»-ը բեկնորճի վրա հանգչող ստեղծի գույն (լադ) ունի. և «Փոխ»-ից սկսած միայն՝ ներքնախաղը հաստատող վերջնահանգաման։ Իսկ ելևելքի պտույտներով միանգամայն ինքնատիպ է։ Այլ եղանակը մինչև «Փոխ»-ը շարականի քլ և բձ երգերի գույնով է (խոսքովայինի վրա հանգչող բանաձևով)։ սկսած «Փոխ»-ից՝ վերջնահանգամանները հաստատում են պարույկ աստիճանը (կանոնադրության վերջին ստղծմաստնում բարձրանալով մինչև երկրորդ էկորճը և կանգնելով դրա վրա)⁴¹։ Ելևելքի պտույտները խիստ ինքնատիպ են։

Բձ եղանակը հասարակ օրերի կանոնադրություններում բոլորովին կորցրել է իր ուրույն դեմքը, նույնանալով գձ-ի հետ⁴²։ Բարեբախտաբար, սակայն, հին Բձ-ն առկա է՝ հանդիսավոր օրերի կանոնադրություններում, որով դրան կծանոթանանք իր տեղում։ Բձ-ն իր գույնով շատ մոտիկ է Աձ կանոնադրության մինչև «Փոխ»-ը ընկած եղանակին, բայց քառյակ բարձր, այսինքն պարույկի վրա հանգչող և ա՛յն հաստատող բանաձև-վերով։ Ելևելքի պտույտներն ևս սերվում են Աձ կանոնադրության հիշյալ հատվածի պտույտներից (մանավանդ «ալեյուրի»-ներում), որով նման չեն շարականի համեմուն ձայնին⁴³։

«Փոխ»-ը, որի առաջին և մնացած տների «դարձ»-երը իրենց տեղաբաշխումով կրկնում են մինչև «Փոխ»-ն ընկած մասի պատկերը։

⁴¹ Այս յուրահատուկ «վերջին» վերջավորությունների պաշտոնն է՝ կանոնադրությունները երաժշտականորեն կապել դրանց հաջորդող հանգչության շարականների հետ։ Եվ հատկանշական է, որ այն կանոնադրությունները (օրինակ՝ գձ), որոնց եղանակները համընկնում են շարականի համապատասխան ձայնին, նման «վերջին» վերջնահանգամաներ չունեն։

⁴² Կանոնադրության ամենավերջում միայն, հանգանակը բարձրանալով մինչև երկրորդ էկորճ, կանգ է առնում դրա վրա, որպեսզի ապահովվի անցումը դեպի հաջորդ բձ շարականը։

⁴³ Այդ պատճառով սույն կանոնադրության վերջում էլ հանգանակը դիմում է երկրորդ փուլին և երկրորդ վերնախաղ կիսվարով շրջադարձում այն։

Գձ և Գկ եղանակները համընկնում են շարականի նույն ձայների հետ, իրենց ելևելքներում հանդես բերելով թեև ոչ այնքան զգույն, բայց պարզ որսալի հնագույն պտույտներ⁴⁴։

Դձ եղանակը, սակայն, գույնով ու մասամբ նաև ելևելքի պտույտներով դարձյալ վերահարուցում է Աձ կանոնադրության՝ բեկնորճի վրա հանգչող ոլորտը, թեև սա ունի իրեն հատուկ ինքնատիպ պտույտներ ևս (առանձնապես «Փոխ»-ում)։ ու նրա վերջին հանգանակը իջնում է մինչև առաջին էկորճ և հաստատում այն։ Վերջապես՝ Դկ եղանակը լադային հիմքով համ գույնով գրեթե նույնանալով շարականի համեմուն ձայնին, տարբերվում է նրանից ելևելքի պտույտներով (մոտիվներով), որոնք մոտենում են Աձ կանոնադրության՝ պտույտներին։ Այս կարգի Դկ եղանակներ ունեն բուն բարեկենդանի և ավագ ուրբաթու կանոնադրությունները ևս, երկուսն էլ (ու առանձնապես երկրորդը) ելևելքի չափազանց յուրահատուկ, անկրկնելի պտույտներով։

Կատարված քննությունը ցույց է տալիս, որ կանոնադրությունների ուժ եղանակները շարականի համեմուն ձայներից տարբերելիս վճռական նշանակություն ունի առաջինների ելևելքային պտույտների կազմը։ Եվ այստեղից էլ պարզ է, որ այդ եղանակների կարգավորման (ուժ խմբի բաժանելու) սկզբունքն իսկ եղել է, առաջին հերթին, հիշյալ պտույտների (մոտիվների) տարբերացումը։

Ուժ ձայնադանակներում ընթացող կանոնադրությունները բաժանված էին եկեղեցական մեկ օրվա ժամերի վրա, ասացինք, որով հասկանալի է, թե ձայնադանակներից յուրաքանչյուրը որոշակի կերպով հարաբերվել է օրվա ժամերի հետ։ Այդ՝ տեսական որևէ բացատրություն չունի՝ սույն երևույթը ևս։ Թվում է՝ ունի, և հետևյալն է։ Հայտնի է, որ Արևելքում, հնագույն ժամանակներից՝ երաժշտության մոզական ուժի մասին նախնական պատկերացումների տիրապետության շրջանից, հավատք է եղել այն մասին, թե տրվյալ ձայնադանակը, մարդկանց ու բնության վրա լավագույն և առավելագույն չափով ներգործում է, օրվա որոշակի (իրեն հատուկ) ժամին կատարվելիս։

Հնդկական ձայնադանակներն, օրինակ, որոնք կոչվում են «ռագա» (ռճա՝ գույն, որակ և կիրք), հնուց ի վեր (ու այժմ էլ) բաժանված են նաև իրեն առա-

⁴⁴ Այս երկու ձայնադանակները մայ պաշտամունքային երաժշտության առավել կայուն իրողություններից են։ Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ դրանց՝ մեզ ծանոթ տիպական ելևելքները բյուրեղացած են եղել տակավին հեթանոսական պաշտամունքի մեջ։

⁴⁵ Աձ կանոնադրության եղանակն, այսպիսով (նրա՝ մինչև «Փոխ»-ն ընկած հատվածը), տեղափոխված էլեկով թե տարբերակված պտույտներով հայտնվելով նաև մի քանի այլ կանոնադրությունների մեղեդիներում, հայտնի հին Սաղմոսարան-ժամագրքի երաժշտության շրջանակներում ձևոր է բերում առանձնահատուկ կարևորություն։

վոտյան, կեսօրվան, երեկոյան, գիշերային և այլ պահերի հատկացված չափանմուշներ⁴⁶:

Մի քանի թեև կցկտուր, բայց հատկորոշ փաստեր խոսում են այն մասին, որ ձայնեղանակների գործության վերաբերյալ քիչ առաջ հիշատակված գաղափարները տարածված են եղել հեթանոսական Հայաստանում ևս⁴⁷: Եվ ահա, ամենայն հավանականությամբ, այդ գաղափարներն են, որ անդրադրվել են նաև հայոց ձայնեղանակների՝ V դարասկզբում իրա-

⁴⁶ Музыкальная эстетика стран Востока, Москва, 1967, стр. 56—57.

⁴⁷ Հիրավի, նույնիսկ ժողովրդագուսանական արվեստում մինչև մեր օրերը հարատևած հնագույն ավանդույթի համաձայն, հարսանյաց խնջույքի ժամանակ, օրինակ, լուսադեմին, հատուկ ձայնեղանակով մի առավուտերգ է նվագվում, որն ուշ միջնադարում սաբաֆի օտար անվանակոչությունն է ստացել:

գործված կանոնացման մեջ, ավելի ուշ (VIII հարյուրամյակից) կորցնելով իրենց ուժը:







Եզրափակելով նախընթացը, պետք է նշել սա ևս: Քանի որ կանոնագույնների եղանակների խազագրությունը վերծանված չէ դեռևս, ապա դրանց՝ շարականի ձայներից էլ (որոնք ավելի կայունացած են) տարբերվելու պայմաններում, ինչպե՞ս ենք կողմնորոշվում մեզ հասած երաժշտության նախնական հարազատության խնդիրներում: Սույն հարցին լուրջ ու համոզիչ պատասխան է տվել ժամանակին Ե. Տընտեպյանը: «Կանոնագլխոց եղանակներն՝ շարականի եղանակաց համաձայն չեղողներն ալ ամենուրեք միակերպ կերգվին այսօր,—գրել է նա, նկատի ունենալով մեղեդիական ոճն ընդհանրապես,—և այս և երբավական է ասոնց եղանակներուն հմությունը, վավերականությունը և ուրույն կազմությունը ցուցնել»⁴⁸:

⁴⁸ Նկարագիր երգոց, նշվ. հրատ.-ը, էջ 81:

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԻՔ Ի ՊԷՏԱ ՀԱՍԱՐԱԿ ԱԻՈՒՐՑ






Յորդոր Միջակ

ԱԶ



Յորդոր-միջակ

ԱԿ



Փոխ

Ջի ոչ գոյր Գո - ցա փո - խա - Գալ եւ ոչ եր -
կեան . յԱս - տու - ծոյ, ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա:

Յորդոր-Միջակ

ԲՁ

Ի քեզ Տէր յուսա - ցայ, մի ա - մա - չե - ցից յա -
ւի - տեան, ա - լէ - լու - իա.
յար - դա - ռու - թեան քում փըր-կեա եւ ապ - ըե - ցո զիս:
Ա - լէ - լու - իա:

Փոխ

եր - կիր պագ - ցեմ Եր - մա ա - մե Գայն թա - գա - տորք երկ - ըի
եւ ա - մե - Գայն ազգ ծա - ռա - յես - ցեմ Եր - մա,
ա լէ - լու իա ա - լէ - լու - իա:

Յորդոր-միջակ

Բ4

Ձո - դոր - մու - րիւ - ցըս քո Տէր յա - լի - տեան օրն - ցե - ցից.

ա - լէ - լու - իա.

յազ - գէ յազգ պատ - մե - ցից ըզ - ցըշ - մար - տու - րիւ - ցըս քո

բե - րա ցով ի - մով. ա - լէ - լու - իա:

Փոխ

Դար-ծու - ցեր զօգ-ցու-րիւն ի սրոյ ցո - րա.

եւ ոչ ըն - կա - լար ըզ ցա ի պա - տե - րազ - մի.

ա - լէ - լու - իա ա - լէ-լու-իա:

Յորդոր Միջակ

92




Խոս - տո - վան ե - դե - րուք տեա - ռըն զի քաղցր է.

ա - լէ - լու - իա.

զի յա - լի - տեան է ո - դոր - մու - րիւն ցո - րա:


Ա - լէ - լու - իա:

Փոխ






Յորդոր-միջակ

94



Փոխ



ԴԶ


Յորդոր-միջակ



Օրհ - ցեա աճճ իմ ըզ - Տէր,




օրհ-ցե-ցից ըզ-Տէր ի կեանս իմ. ա - լէ լու - իա.




սաղ-մոս ա - սա - ցից Աստու - ծոյ ի մոյ մից - չեւ եմ ես:

Ծմր.



ա - լէ - լու - իա:

Փոխ




Գո - վեա Ե - րու - սա - ղեմ ըզ - տէր.



ա - լէ-լու - իա.

Յորդոր-միջակ



եւ օրհ-ցեա զ Աստուած քո Սի - օն.



ա - լէ-լու-իա:

74

Յորդոր-միջակ




Սի-րե-ցից ըզ-քեզ Տէր զօ - թու - թիւն իմ, ա - լէ - լու - իա.



Տէր հաս-տա-տիչ իմ ա-պա-ւեց. իմ եւ փըր-կիչ իմ ա - լէ - լու - իա:


Փոխ



Զգե-ցու - ցեր ինձ զօ-րու-թիւն ի - պա - տե ըազ - մի




եւ զյա - թու - ցեալս ի վե - ըայ իմ ներ - քոյ իմ ա - ըա - ըեր.



ա - լէ - լու - իա ա - լէ - լու - իա:

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ

Ջափաւոր կամ միջակ ԵՒ ՆՈՐ ԿԻՒՐԱԿԷԻ



Օրհ-նե - ցից ըզ - քեզ գո - հու - թեամբ ի կեանս իմ.



սաղ - մոս ա - սա - ցից քեզ Քրիս - տոս թա - գա - տր.



յաղ թա կան նոր եր - գով օրհ-նու-թեամբ.

ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ ԱԻԱԳ ՈՒՐԲԱԹՈՒ

Չափաւոր



Իշ-խանք Բա - լա - ծե - ցից զիս ի Գա - ցիր.



ա - լե - լու - իա.




եւ ի բա - ցից քոց եր - կեաւ սիրտ իմ,



ա - լե - լու - իա ա - լե - լու - իա:

Փոխ



Մեր ձեռ - ցից խըն - դըր - ուածք իմ ա - ռա - ջի քո Տէր.




ըստ բա - ցի քում ի - մաս-տուն ա - ռա զիս,




ա - լե - լու - իա.


ա - լե - լու - իա,




ա - լե - լու - իա.




Տէր ով կաց - ցէ ի խո - րա - նի - քում



կամ ով բնա-կես - ցէ ի Լեա-ռըն սուրբ քո:




Որ գը - նայ աճ - բիծ. գոր ծէ զար-դա - րու. թիւն.



խօ - սի ըզ - նըշ-մար-տու - թիւն ի սըր տի լւ - րում:





Հ. ՀԱԿՈՒՅԱՆ

(Արվեստագիտության թեկնածու)

ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Հայկական մանրանկարչության դպրոցներից յուրաքանչյուրն ոճական-կատարողական առանձնահատկություններից բացի, առանձնացել է նաև պատկերագրական ուրույն ձևերի, նույնիսկ նկարաչարի որոշակի կարգի իր ընտրությամբ: Դա սերտորեն պայմանավորված է եղել տվյալ վայրի ինչպես պատմական, այնպես էլ գեղագիտական-գաղափարական ըմբռնումներով և, ըստ այդմ, արտահայտել տեղական նախասիրություններն: Այդ երևույթը բնութագրական է, մանավանդ, Վասպուրականի մանրանկարչության համար: Այստեղ ընդունված մոտիվներն ու ձևերը որոշակիորեն դրսևորում են հնամենի սովորույթները, կրոնական-ժխական արարողությունները և, մասամբ, նաև ժողովրդական հավատալիքներն ու պատկերացումները:

Ստորև, հոդվածի ընձեռած սեղմ շրջանակներում կանոնադատմանը Վասպուրականի գրչագիր մատյաններում հանդիպող

պատկերագրական յուրատիպ ձևերից մի քանիսին:

Ի տարբերություն հայ մանրանկարչության մյուս դպրոցների, Վասպուրականի 14—15-րդ դարերի ձեռագրերում տեղումնական նկարաչարը սկսվում է «Աքրահամի գոհաբերության» հին կտակարանային թեմայով: Այդ թեման 10—11-րդ դարերից հետո գրեթե դուրս էր եկել ավետարանական պատկերաչարից: Ոչ միայն հայկական, այլ նաև միջնադարյան մյուս ժողովուրդների 12—15-րդ դարերի արվեստում այն, սակավ բացառությամբ, չի հանդիպում: *

Բայց խնդիրը սույն թեմայի պահպանման մեջ չէ: Վասպուրականի մանրանկարիչների մեծ մասի կողմից նախընտրված սխեման կապվում է հայկական քանդակագործության վաղ շրջանի հուշարձանների հետ՝ Թալինի շրջանի Ադիյաման գյուղի կոթողը, Անիի միջնաբերդի բազիլիկան, Ադրամարի եկեղեցին (թեև 10—11-րդ դարերի

ձեռագրերում՝ Երուսաղեմի մատենադարան
№ 2555, Վիեննայի՝ № 697, Մաշտոցի ան-
վան Մատենադարան № 2374, այդ թեման
պատկերվել է ուրույն սխեմայով)։ Մեզ հա-



Նկար 1

մար հուշարձաններից առավել կարևորն Աղթամարի եկեղեցին է։ Վասպուրականի մանրանկարիչները գրեթե նույնությամբ վերցրել են այդ եկեղեցու «գոհաբերության» քանդակի սխեման, այն տարբերությամբ, միայն, որ ձեռագրում Իսահակի գլխից վեր պատկերվում է ման գոհասեղանը, իսկ քանդակում դա բացակայում է։ 10 և 14-րդ դարերի հուշարձանների մեջ պատկերագրական այդպիսի սերտ աղերս հազվադեպ կարելի է տեսնել։

«Աբրահամի գոհաբերության» մեզ հետաքրքրող ձևը (ման խոլը ծառից կախված, որը Ն. Մատի հաղորդման համաձայն արեւելյան ժողովուրդների մոտ ընդունված տավրույթ է եղել) հանդիպում է ման վրացական հուշարձաններում՝ Իմերեթիայի Լաշեն գյուղի եկեղեցու դռան փորագրությունները։ Բայց այդ դեպքում էլ ժամանակը 11-րդ դարից այս կողմը չի անցնում։

Պատկերագրական հին ձևի մեկ այլ բնորոշ օրինակ է Սիմեոն Արճիշեցու 1305 թվականի ձեռագրի «Խաչելություն»-ը¹ (նկ. 1)։ Մինչև 10-րդ դարը խաչելության նկարներում Հիսուսը մեծ մասամբ ներկայացվել է բաց աչքերով։ Չեն եղել նրա կողը խոցող և սպունգ մատուցող անձնավորությունները (բացառություն է կազմում Ռաբոյայի 586 թվ. սիրիական ավետարանի նկարը, որի կապակցությամբ, սակայն, Գ. արք. Հովսեփյանը տարակուսանք է հայտնել)²։ 11-րդ դարից հետո Հիսուսի դեմքին և մարմնին ցավի արտահայտություն է տրվում, ոտքերին ու ձեռքերին՝ ճկվածություն։ Պատկերվում է խոցված կողից թափվող արյունը. խաչափայտի ետևում երևում են այլաբանական կերպարներ։ Մեր մանրանկարում դեռևս չկան 11-րդ դարից հետո կատարված լրացումները։ Այդ տեսակետից Սիմեոնի աշխատանքը մերձեցնում է «Ծուրղութի» 974 թվականի և Մատենադարանի № 6201 (1038 թվ.) ավետարանների համանուն պատկերներին։ Կարելի է մատնանշել Աղթամարի եկեղեցու որմնանկարը ևս (10-րդ դար), թեև այնտեղ Հիսուսի հագին երկար անթեզանիք է, Սիմեոնի մոտ՝ կարճ ներքնագգեստ։ Ի դեպ, Սիմեոնի ձեռագրում առկա է մի հետաքրքրական մանրամասն, որը համանուն ծագում ունի և հազվադեպ է հանդիպում կանոնական պատկերների մեջ։ Հիսուսի կողը նիզակահարող Ղունկիանուսը, ըստ ավանդության, մի աչքանի է եղել (մյուս աչքը չէր տեսնում)։ Հիսուսի կողը խոցելու ժամանակ արյան մի կաթիլ ցայտում է նրա աչքի մեջ և կույր աչքը ապաքինում։ Հավանաբար, Սիմեոն Արճիշեցին քաջատեղյակ էր պարականոն այդ պատմությանը. Ղունկիանուսը այստեղ պատկերվել է գլուխը վեր, աչքը չուած, որպեսզի նրա մեջ արյուն ցայտի։

¹ Ձեռ. Մատ. № 2744: «Խաչելության» հնագույն օրինակը մեզանում Հավուց թառի փայտակերտն է՝ 1013 թվականից։ Այս հուշարձանի առիթով Գ. արք. Հովսեփյանը նշել է X—XI դարերի համար բնորոշ խաչված Հիսուսի պատկերագրության ձևերը. մարմնի ուղիղ դիրքը պատվանդանի վրա, փոքր-ինչ աջ խոնարհված գլուխը՝ խաչագարդ լուսապսակով, աչքերի փակ լինելը, դեմքի հանգստությունը, արյան հետքերի բացակայությունը խոցված տեղերում և այլն (տես «Հավուց թառի Ամենափրկիչը եւ նույնանուն լուշարձաններ հայ արուեստի մէջ», Երուսաղեմ, 1937, էջ 37)։ Ըստ որում, Սիմեոնի «Խաչելություն»-ը շատ կողմերով ընդհանրանում է այս պատկերի հետ, չնայած Հավուց թառում խաչից իջեցնելու պահն է ներկայացված։

² Նշված աշխատությունը, էջ 57։

Հետաքրքրական են նաև խաչափայտի ձախ և աջ կողմերում գտնվող արևի ու լուսնի մոտիվները: Անտոկոբ մեծ շրջանակների մեջ, որոնց մոտ գրված է «արեգակ» և «լուսին», տեսնում ենք երկու դիմապատկերներ



Նկար 2

(երևում է նրանց մարմնի վերին մասը՝ Bust): Արեգակի և լուսնի մոտիվները դեռևս 4-րդ դարից հանդիպում են «խաչելության» տեսարանում: «Նրանց երևույթը քրիստոնեական արվեստի մեջ, — գրում է Գ. արք. Հովսեփյանը, — առնված է ոչ միայն ավետարանական պատմության հետևանքով, այսինքն արևի խավարման, այլև հեթանոսական ազդեցությամբ. ուստի և, երբեմն դրանք երևան են եկել իբրև անձնավորյալ պատկերներ կամ հեթանոսական աստվածություններ»³: Արեգակի սկավառակի մեջ գտնվողը հանգիստ է, բայց նրա գլխի շուրջը լուսապսակ է նկարված:

Շրջանակների անհամեմատ մեծ լինելը և նրանց մեջ ոչ թե սխեմատիկ դիմագծերի (ինչպես դա սովորաբար լինում է), այլ կի-

³ Գարեգին արք. Հովսեփյան, նշված աշխատությունը, էջ 56:

սանդրիների պատկերումը, անտարակույ Գ. արք. Հովսեփյանի ակնարկած հերթանական մոտիվների ազդեցության հետևանքն է: Իրենց նմանակներն ունենալով հատկապես 10—11-րդ դարերի քրիստոնեական արվեստի հուշարձաններում, դրան հավաստում են Սիմեոնի մանրանկար պատկերազրույցի համաձայնի բնույթը: Որպես այդ կարգի օրինակներ կարելի է մասնակցել 5—6-րդ դարերի գերեզմանատների, 6—9-րդ դարերի փղոսկրյա կեղծված պատկերները, ինչպես նաև կապադովյա ժայռափոր եկեղեցիների որմնանկարներ (10—11-րդ դդ.)⁴:

Նշենք, որ այդ նույն մոտիվը պատկերված է նաև վրացական Ծիսգվինի եկեղեցի (11-րդ դար) բնի ճակատաքանդակում: Այդ կապակցությամբ արվեստաբան Դ. Ծմերիկցը այն միտքն է հայտնել, թե իբրև դրան զուգահեռ 11-րդ դարից հետո դժվար է գտնել ոչ միայն վրացական, այլ նաև բյուզանդական ու արևմտաեվրոպական միջնադարյան արվեստում⁵: Ուսումնասիրությունները սակայն մեզ քերում են այն եզրակացությանը, որ այդ կարգի մոտիվները սուր վրացական միջավայրով չեն սահմանափակվել: Մեր մանրանկարը դրա լավագույն վկայություններից մեկն է⁶:

Տեղական կրոնա-ժխտական սովորույթների հետ պետք է առնչել «Ռունկվա» թեմային լայն տեղ հատկացնելը՝ Վասպուրականում: Մեծավաստակ գիտնական պրոֆ. Սի. րարփի Տեր-Ներսեսյանը «Աղթամար» տաք խաչ եկեղեցին» գրքում նկատել է, որ միջնադարյան քրիստոնեական արվեստում տեղական նախասիրություններից ելնելով նկարիչները, երբեմն, գաղափարական ընդհանուր միտք արտահայտող որոշ թեմաներ զուգորդաբար համակցել են միմյանց, կամ՝ մեկը փոխարինել մյուսով: Աղթամարի որմնանկարներում, օրինակ, «Խորհրդավոր ընթրիքը» փոխարինված է Բեթանիայում Հիսուսի օծման տեսարանով՝ իսկ վերջինս իր հերթին ներառել է առարկայների ոտքերի լվացման պահը:

⁴ St'u L. Lermanion, Une nouvelle province de l'art Byzantin, les Eglises rupestres de Cappadoce, paris, 1928.

⁵ P. Օ. Шмерлинг, Малые формы в архитектуре средневековой Грузии, Тбилиси, 1961, стр. 141.

⁶ Փարիզի X—XI դարերի Ալորիայի խաչափայտի երկու կողմերում ևս արևի ու լուսնի սկավառակների մեջ պատկերված են նման կիսանդրիներ: Անշուշտ, դեռ լուրջ պարզաբանման է կարոտ այն հարցը, թե որ երկրում են հանդիպել դրանց առաջին օրինակները և նախապես ինչ խմբագրական բնույթ են ունեցել դրանք:

Ուտքերի լվացման արարողությունը հայկական եկեղեցիներում պահպանվել և խորհրդանշական իմաստ է ունեցել: Ըստ ամենայնի, Աղթամարի տաճարը զարդարող նկարիչները մասամբ գտնվել են տեղայնացված այս կարգի ազդեցության տակ՝ «Խորհրդավոր ընթրիքի» փոխարեն նախապատվություն տալով «Օծում-Ուտնվա» թեմային: Հետաքրքրականն այն է, որ այդ նույն երևույթը դրսևորվել է նաև Վասպուրականի ձեռագրում և շարունակվել ընդհուպ մինչև 15—16-րդ դարերը: Այստեղ, բացառությամբ մի քանի դեպքի, «Խորհրդավոր ընթրիքը» փոխարինված է «Ուտնվա»-ով: Բայց այդուհանդերձ կան ձեռագրեր, երբ նկարիչները հարմարեցնելով տեղական սովորույթներն ու կանոնական կարգը «Խորհրդավոր ընթրիքին», կամ նրա գաղափարը, խորհրդանշական ձևով ուղղակի կապել են «Ուտնվա»-ի հետ: Այսպես, Մատենադարանի № 6365 ձեռագրում (15-րդ դար) «Ուտնվա» տեսարանի կոնքի (տաշտ) ցածի մասում պատկերված է ընթրիքի շրջանաձև սեղանը՝ վրան ձուկ և այլ ուտեստներ են (նկ. 2): Մատենադարանի № 5783 ձեռագրում ընթրիքի սեղանը Պետրոսի ուտքերի մոտ է: Այնպիսի տպավորություն է ստեղծվել, կարծես ուտքերը լվանալուն սպասող տասնմեկ առաքյալները նստած են այդ սեղանի շուրջը: Իսկ № 9841 ձեռագրում «Ուտնվա»-ի մեջ (վերին հատվածում) Հիսուսը վեր պարզած աջ ձեռքով բռնել է սկիհը՝ «Խորհրդավոր ընթրիքի» սեղանի խորհրդանշմամբ (նկ. 3):

Բերված օրինակները թեև պատկերագրական որոշակի սկզբունքի չեն պատկանում, բայց ուշագրավ են հորինվածքային խմբագրման իրենց տեղական բնույթով:

Վասպուրականի 14—15-րդ դարերի ձեռագրերում, ինչպես ասվեց, հազվադեպ է պատկերվել «Խորհրդավոր ընթրիք»-ը: Հայտնի է 2—3 օրինակ, որոնք սակայն չափազանց հետաքրքրական պատկերագրական լուծում ունեն: 14-րդ դարի ծաղկող Հովսիանի մոտ (ձեռ. Մատ. № 4818) հանդիպում է «Խորհրդավոր ընթրիք»-ի հնամենի այն տարբերակը, որ մեզանում հայտնի է «Ծորղորթի» և 1038 թվականի (Մատ. № 6201) ձեռագրերից: Ամբողջ էջի երկայնքով պատկերված ուղիղ սեղանի մոտ նստել են 12 առաքյալները. Հիսուսը ձախ կողմում է: Այս սխեմայի հնագույն մոտիվներից են նաև կապաղովկյան ժայռափոր եկեղեցիների որմնանկարները (10—11-րդ դարեր):

Սակայն ավելի հնամենի ձևերի արձագանք պետք է համարել Մատենադարանի № 316 ձեռագրի «Ընթրիք»-ը (նկ. 4):

Նկարն ամփոփվում է քառանկյուն, բազմերանգ շրջանակի մեջ: Կենտրոնում լրիվ բոլորածն սեղանն է: Բաց կանաչ երանգով ներկված բուսական մոտիվները նրա գորշ դարչնագույն մակերեսը ծածկում են հյուս-



Նկար 3

վածքաձև խաչով⁷: Չափից մանուշակագույն պարեգոտ հագին նստել է Հիսուսը. «Ուն՛ի ձե՛նջ մատնե՛լոց է գիս...» շշմջում է նա. Սեղանի շուրջը դասավորված ոսկեֆոն լու-

⁷ Նկարիչը չի հետևել ընդունված ձևերին՝ սեղանի վրա պատկերելով ձուկ, պանակներ և այլն: Այստեղ հյուսածո խաչը, հավանաբար, խորհրդանշում է ընթրիքի պահին հայտնված մատնության գաղափարը, այն կապելով ողբերգական զոհաբերության՝ խաչելության հետ: Բազմավանդակ արվեստագետ Լ. Ա. Դուրնովոն ժամանակին մեր ուշադրությունը հրավիրել է այն քանի վրա, որ Թալինի Սանդուխտ Կույս կոչված մատուռում կա այս մանրանկարի սեղանը հիշեցնող շրջանաձև քար՝ վրան բուսամոտիվ խաչաքանդակով: Այդ քարը տեղացիների համար ծառայել է որպես զոհասեղան: Եթե դա այդպես է, ապա առավել ևս հաստատվում է մեր միտքը խաչապատկեր սեղանը զոհաբերման գաղափարի կամ զոհասեղանի հետ համեմատելու կապակցությամբ:

սասպակներին Հիսուսին են նայում տառնմանկ գլուխներ⁸:

«Խորհրդավոր ընթրիք»-ում լրիվ բոլորածն սեղան հանդիպում է վաղ քրիստոնեական հուշարձաններում⁹: Սակայն ա-



Նկար 4

ռաքյալներին լուսասպակների մեջ վերցված միայն գլուխներով ներկայացնելը, հավանաբար, մեր նկարչի հնարամտումն է, ընդհանրացման նրա կարողության արգասիքը: Ըստ որում, լարված հայացքներով առանց մարմինների այդ գլուխները դիտողի մոտ ոչ միայն մարմինների պակաս

⁸ Միջնադարյան քրիստոնեական արվեստում «Խորհրդավոր ընթրիքը» հիմնականում պատկերվել է մի ընդհանուր սխեմայով: 12 առաքյալները լինում են զոգավոր սեղանի շուրջը. Հիսուսը նստում է ձախ կողմում, իսկ Հուդան՝ առաքյալների խմբում՝ ձեռքը պարզած դեպի ուտեստը: Այդ տեսակետից հայ արվեստում բնորոշ օրինակներ կարող են ծառայել «Մելիտիների» 1057 թվականի, «Մուղնու» և «Թարգմանչաց» ալևտարանների նկարները:

⁹ Նկատի ունենք մասնավորապես «Բարուլա» արեղայի 558 թվականի ալևտարանը:

զգալ չեն տալիս, այլ նաև ուժեղացնում են տպավորությունը՝ նկարին հաղորդելով անսովոր շարժում և հուզական հնչեղություն: Կատարվելիք դավանանքության լուրջ ներգործել է նրանց վրա, զգացվում է սարսափ, տարակուսանք ու այդ բոլորի հետ մեկտեղ ընդհանուր հարցում ուղղված ուսուցչին՝ «Ո՛ր իցէ, Տէր»:

Անտեսելով պատկերագրական ընդունված ձևերը, որտեղ Հուդան առաքյալների մեջ է, հեղինակը մատնիչին մեկուսացրել է ընդհանուր խմբից: Այդ դեպքում արդեն շեշտվում է թեմայի հիմնական առանցքը՝ Հիսուսի և Հուդայի փոխհարաբերությունը մարմնավորող անձների սուր միջադեպը: Դավանանք՝ մեկուսի է, որի դիմաց ամբողջանում է ուսուցչի և աշակերտների միասնությունը:

Մեր մանրանկարչության լավագույն նրմուշներից մեկը հանդիսացող այս աշխատանքը իր պայմանական-խորհրդանշական արտահայտչամիջոցներով ու ձևերով, իհարկե, որևէ առնչակցություն չունի վերածննդի շրջանի վարպետների գաղափարական նոր խնդիրներով հագեցված աշխատանքների հետ: Բայց մատնիչին մեկուսացնելու փորձը ինչ-որ չափով հիշեցնում է Ճորենցիայի XIV—XV դարերի վարպետների (Տադեոս Գադդի, Անդրեաս Կաստաներ, Կագիմո Ռոսելի, Դոմենիկո Գերլանդայ) մոտեցումը: Վերջիններս ցանկանալով շեշտել մարդու հոգեկան ապրումները, դրանց բախումներն ու հակադրությունները, սակայն կերպարների հոգեբանական լուծման համար չունենալով արտահայտման բավարար միջոցներ, դիմում էին արհեստական տեղաշարժերի, տվյալ դեպքում մատնիչին անջատելով ընդհանուր խմբից¹⁰: Որքան էլ դա զարմանալի թվա, մատնիչին ընդհանուր խմբից անջատելու փորձը, ինչպես տեսնում ենք, հանդիպում է 14-րդ դարի մեզ հետաքրքրող ձեռագրում ևս: Հայ նկարչի համար Հիսուսի կյանքի այդ դրվագը սովորական պատմություն չէր, այլ իր ժողովրդի կյանքի ու ճակատագրի հետ կապված, խոր ողբերգությամբ ու պայքարով ապեցուն երևույթ, որի նկատմամբ նա իր ուրույն վերաբերմունքն է դրսևորել:

Վասպուրականի մանրանկարներում քիչ չեն և այն դեպքերը, երբ ալևտարանական պատկերի այս կամ այն ձևը կապվում է

¹⁰ Գիտենք, որ առանց մեխանիկական նման տեղաշարժերի այդ դժվարին խնդիրը լուծեց վերածննդի հսկա Լեոնարդո դա Վինչին Միլանի սուրբ Մարկոս եկեղեցու հռչակավոր որմնակարում (1495—1497 թթ.):

պարականոն գրույցի հետ: Այսպես, Մատ. № 5324 ձեռագրի «Ավետմանի» մեջ Մարիամը ուղղակի կանգնած է այրվող խաբույկի վրա: Բոցի լեզվակները հալվում են նրա ոտքերին: Այս ուշագրավ մոտիվի բացատրությանը հանդիպում են շարականներում. «Վառեցար ի յարփույն և ոչ կիզար ըստ մորենույն, այլ ետոր զհացն կենաց կերակոր քանատրաց...»¹¹:

Մատենադարանի № 4922 ձեռագրում (1447 թ.) ուրացող Պետրոսին երդվեցնել են տալիս կրակի առջև: Այս մոտիվի ծագման թելերը ժողովրդական կենցաղի խորքն են գնում՝ ձուլվելով տեղական ավանդական, ընդհուպ մինչև հեթանոսական, պատկերացումների հետ: Բերված միայն այս մի քանի օրինակները ցույց են տալիս, որ ժամանակի փոփոխություններին և մյուս դպրոցներում ընդունված ձևերին հակառակ, Վասպուրականում շարունակվում են հարատևել ավետարանական պատկերագրության հմանների ու պարականոն մոտիվները: Այստեղ գրեթե յուրաքանչյուր նկարագարող մատյան ինչ-որ չափով ենթարկված է այդ միտումին:

Արդ, հետաքրքրական է իմանալ, թե ինչով է պայմանավորվել հատկապես հնի, ավանդականի նկատմամբ Վասպուրականցիների ունեցած այդ անսովոր հակումը, որն, ընդհանրապես, երևույթ էր 14—15-րդ դարերի հայ արվեստում:

1021 թվականին Վասպուրականի Սեմեքերիմ թագավորը ստիպված եղավ երկիրը հանձնել Բյուզանդական Կայսրությանը և ավագանու և բնակչության մի որոշ մասի հետ բնակություն հաստատել փոխարենը ստացած կայսրության արևելյան ճահանգներից մեկում՝ Սեբաստիայում: Այդ ճակատագրական քայլը նա կատարեց սելջուկյան վերահաս վտանգից խուսափելու համար: Բայց բյուզանդական լեգեոններն ևս անկարող եղան փրկելու վիճակը: 11-րդ դարի 40-ական թվականներին արդեն սելջուկները նվաճում են անիշխան երկիրը՝ ավերելով ու այրելով քաղաքներն ու գյուղերը, արտերն ու անտառները...

XIII դարի 30—40-ական թվականներին սկսվում են մոնղոլական աշխարհավեր նվաճումները: «Քարը քարի վրա չմնաց»,—գրում է Ն. Մառը¹². «Ետ շարվեց ողջ տնտեսական կյանքը»,—կարդում ենք Հ. Մանանյանի մոտ¹³:

Ժողովրդի վրա հատկապես ծանր անդրադարձավ այն բանը, որ XIV դարի սկզբներին Ղազան խանը պաշտոնապես ընդունեց իսլամական կրոն: Սովորական հալածանքներին այժմ ավելանում էր նաև կրոնականը: Ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք. «Զարացա ազգն Իսմայլի այնչափ, մինչև դարձուցին յիրեանց սնուտի յոյսն զամենայն ազգն նետողաց... եւ նեղեն զամենայն Քրիստոնեայք դառնալ ի պատիր յոյսն յիրեանց, զոմն նեղեն, զոմն տանջեն, զոմն սպանանեն, զոմն զինչսն յափշտակեն, և ոչ այնու շատացեալք, այլ և եղին ի վերա ամենայն Քրիստոնեիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի վերա ուսոց թիկանցն կտաւս սեաւս, զի որք տեսցեն զնոսա, ճանաչեսցեն եթէ Քրիստոնեայք են և հալոյեսցեն»¹⁴: Այդպիսի ծանր վիճակ էր ստեղծվել Վասպուրականում, ուր, հատկապես XI—XII և XIII դարի առաջին կեսի ընթացքում, մոտ 250 տարի, խոսք չէր կարող լինել մշակույթի բնականոն ընթացքի մասին:

Ժողովրդը դեռ չէր սթափվել մոնղոլական կործանարար հարվածներից, երբ պայթում է մի նոր, ավելի մեծ աղետ. 1386-ին սկսվում են Լանկ-Թամուրի արշավանքները: Հայտնի է, թե ինչպիսի բարբարոս դատաստան տեսավ Լանկ-Թամուրը Հանի բնակչության նկատմամբ: Մոտ 3.000 մարդու ժայռից ցած գլորեցին, իսկ 7.000 մարդու՝ մեկ օրում տանջամահ արին: Լանկ-Թամուրի մահից հետո (1405 թ.), ծայր են առնում ներքին գահակալական կռիվները: Սուր պայքար է բորբոքվում մանավանդ Ակ-Կոյանլու և Կարա-Կոյունլու թուրքմեն խոշոր ցեղերի միջև, որոնք գլուխ էին բարձրացրել դեռևս XIV դարի 2-րդ կեսին:

Այս բոլորից զատ Վասպուրականի բնակչության գլխից անպակաս էին համաճարակները, տվը, երաշտը, որոնք հազարավոր կյանք էին խլում, ամայի դարձնում գյուղերն ու քաղաքները: Հայաստանի թերևս ոչ մի շրջան այդպիսի ծանր ճակատագիր չունեցավ, ինչպես Վասպուրականը: Դիպուկ է արտահայտվել այդ աղիթով գրիչներից մեկը՝ «Աւերեալ քանդեաց զբազում տեղիս, և զբազումս գերեաց, նաև յերկիրն Վասպուրականի և Քաջբերունոյ կին և տղայ ոչ մնաց, այլ զամենայն առեալ

¹¹ Ծարակնոց. երաժշտական երգեցմունք հոգևորականը (կանոն չորրորդ կիրակեի աղոթագրից), Կ. Պոլիս, 1815, էջ 185:

¹² Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, Петербург, 1915, ст. 7.

¹³ Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, ст. 261.

¹⁴ Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Ժ-ի դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 47:

սապասկներից Հիսուսին են նայում տաքնմեկ գլուխներ⁸։

«Խորհրդավոր ընթրիք»-ում լրիվ բոլորածն սեղան հանդիպում է վաղ քրիստոնեական հուշարձաններում⁹։ Սակայն ա-



Նկար 4

ռաքյալներին լուսապասկների մեջ վերցված միայն գլուխներով ներկայացնելը, հավանաբար, մեր նկարչի հնարամտումն է, ընդհանրացման նրա կարողության արգասիքը։ Ըստ որում, լարված հայացքներով առանց մարմինների այդ գլուխները դիտողի մոտ ոչ միայն մարմինների պակաս

⁸ Միջնադարյան քրիստոնեական արվեստում «Խորհրդավոր ընթրիքը» հիմնականում պատկերվել է մի ընդհանուր սխեմայով։ 12 առաքյալները լինում են զոգավոր սեղանի շուրջը. Հիսուսը նստում է ձախ կողմում, իսկ Հուդան՝ առաքյալների խմբում՝ ձեռքը պարզած դեպի ուտեստը։ Այդ տեսակետից հայ արվեստում բնորոշ օրինակներ կարող են ծառայել «Մելիտինեի» 1057 թվականի, «Մուղնու» և «Թարգմանչաց» ավետարանների նկարները։

⁹ Նկատի ունենք մասնավորապես «Ռաբուլա» արեղայի 586 թվականի ավետարանը։

զգալ չեն տալիս, այլ նաև ուժեղացնում են տպավորությունը՝ նկարին հաղորդելով անսովոր շարժում և հուզական հնչեղություն։ Կատարվելիք դավանանքության լուրը ներգործել է նրանց վրա, զգացվում է սարսափ, տարակուսանք ու այդ բոլորի հետ մեկտեղ ընդհանուր հարցում ուղղված ուսուցչին՝ «Ո՞ր իցէ, Տէր»։

Անտեսելով պատկերագրական ընդունված ձևերը, որտեղ Հուդան առաքյալների մեջ է, հեղինակը մատնիչին մեկուսացրել է ընդհանուր խմբից։ Այդ դեպքում արդեն շեշտվում է թեմայի հիմնական առանցքը՝ Հիսուսի և Հուդայի փոխհարաբերությունը մարմնավորող անձերի սուր միջադեպը։ Դավաճանը՝ մեկուսի է, որի դիմաց ամբողջանում է ուսուցչի և աշակերտների միասնությունը։

Մեր մանրանկարչության լավագույն նմուշներից մեկը հանդիսացող այս աշխատանքը իր պաշտանական-խորհրդանշական արտահայտչամիջոցներով ու ձևերով, իհարկե, որևէ առնչակցություն չունի վերածննդի շրջանի վարպետների գաղափարական նոր խնդիրներով հագեցված աշխատանքների հետ։ Բայց մատնիչին մեկուսացնելու փորձը ինչ-որ չափով հիշեցնում է Ֆլորենցիայի XIV—XV դարերի վարպետների (Տադեո Գադդի, Անդրեաս Կաստաներ, Կագիմո Ռուելի, Դոմենիկո Գերլանդայ) մոտեցումը։ Վերջիններս ցանկանալով շեշտել մարդու հոգեկան ապրումները, դրանց բախումներն ու հակադրությունները, սակայն կերպարների հոգեբանական լուծման համար չունենալով արտահայտման բավարար միջոցներ, դիմում էին արհեստական տեղաշարժերի, տվյալ դեպքում մատնիչին անջատելով ընդհանուր խմբից¹⁰։ Որքան էլ դա զարմանալի թվա, մատնիչին ընդհանուր խմբից անջատելու փորձը, ինչպես տեսնում ենք, հանդիպում է 14-րդ դարի մեզ հետաքրքրող ձեռագրում ևս։ Հայ նկարչի համար Հիսուսի կյանքի այդ դրվագը սովորական պատմություն չէր, այլ իր ժողովրդի կյանքի ու ճակատագրի հետ կապված, խոր ողբերգությամբ ու պայքարով ալեցուն երևույթ, որի նկատմամբ նա իր ուրույն վերաբերմունքն է դրսևորել։

Վասպուրականի մանրանկարներում քիչ չեն և այն դեպքերը, երբ ավետարանական պատկերի այս կամ այն ձևը կապվում է

¹⁰ Գիտենք, որ առանց մեխանիկական նման տեղաշարժերի այդ դժվարին խնդիրը լուծեց վերածննդի հսկա Լեոնարդո դա Վինչին Միլանի սուրբ Մարկոս եկեղեցու հուշակավոր որմնակալում (1495—1497 թթ.)։

պարականոն գրույցի հետ: Այսպես, Մատ. № 5324 ձեռագրի «Ավետմանի» մեջ Մարիամը ուղղակի կանգնած է այրվող խաբույկի վրա: Բոցի լեզվակները հալվում են նրա ոտքերին: Այս ուշագրավ մոտիվի բացատրությանը հանդիպում են շարականներում. «Վառեցար ի յարիւնսն և ոչ կիզար ըստ մորենունսն, այլ ետոր զհացն կենաց կերակոր քանատրաց...»¹¹:

Մատենադարանի № 4922 ձեռագրում (1447 թ.) ուրացող Պետրոսին երդվեցնել են տալիս կրակի առջև: Այս մոտիվի ծագման թելերը ժողովրդական կենցաղի խորքն են գնում՝ ձուլվելով տեղական ավանդական, ընդհուպ մինչև հեթանոսական, պատկերացումների հետ: Բերված միայն այս մի քանի օրինակները ցույց են տալիս, որ ժամանակի փոփոխություններին և մյուս դպրոցներում ընդունված ձևերին հակառակ, Վասպուրականում շարունակվում են հարատևել ավետարանական պատկերագրության հմանքնի ու պարականոն մոտիվները: Այստեղ գրեթե յուրաքանչյուր նկարագրող մատյան ինչ-որ չափով ենթարկված է այդ միտումին:

Արդ, հետաքրքրական է իմանալ, թե ինչով է պայմանավորվել հատկապես հնի, ավանդականի նկատմամբ Վասպուրականցիների ունեցած այդ անսովոր հակումը, որն, ընդհանրապես, երևույթ էր 14—15-րդ դարերի հայ արվեստում:

1021 թվականին Վասպուրականի Սենեքերիմ թագավորը ստիպված եղավ երկիրը հանձնել Բյուզանդական Կայսրությանը և ավագանու և բնակչության մի որոշ մասի հետ բնակություն հաստատել փոխարենը ստացած կայսրության արևելյան ճահանգներից մեկում՝ Սեբաստիայում: Այդ ճակատագրական քայլը նա կատարեց սելջուկյան վերահաս վտանգից խուսափելու համար: Բայց բյուզանդական լեզոններն ևս անկարող եղան փրկելու վիճակը: 11-րդ դարի 40-ական թվականներին արդեն սելջուկները նվաճում են անիշխան երկիրը՝ ավերելով ու այրելով քաղաքներն ու գյուղերը, արտերն ու անտառները...

XIII դարի 30—40-ական թվականներին սկսվում են մոնղոլական աշխարհավեր նվաճումները: «Քարը քարի վրա չմնաց»,—գրում է Ն. Մառը¹². «Ետ շարվեց ողջ տնտեսական կյանքը»,—կարդում ենք Հ. Մանանյանի մոտ¹³:

Ժողովրդի վրա հատկապես ծանր անդրադարձավ այն բանը, որ XIV դարի սկզբներին Լազան խանը պաշտոնապես ընդունեց իսլամական կրոն: Սովորական հալածանքներին այժմ ավելանում էր նաև կրոնականը: Զեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք. «Զարացա ազգն Իսմայլիի այնչափ, մինչև դարձուցին յիրեանց սնոտի յոյսն զամենայն ազգն նետողաց... եւ նեղեն զամենայն Քրիստոնեայք դառնալ ի պատիր յոյսն իրեանց, զոմն նեղեն, զոմն տանջեն, զոմն սպանանեն, զոմն զինչսն յափշտակեն, և ոչ այնու շատացեալք, այլ և եղին ի վերա ամենայն Քրիստոնեիցս հարկս և նշանս նախատանաց՝ ի վերա ուսոց թիկանցն կտաւս սեւաս, զի որք տեսցեն զնոսա, ճանաչեսցեն եթէ Քրիստոնեայք են և հայհոյեսցեն»¹⁴: Այդպիսի ծանր վիճակ էր ստեղծվել Վասպուրականում, ուր, հատկապես XI—XII և XIII դարի առաջին կեսի ընթացքում, մոտ 250 տարի, խոսք չէր կարող լինել մշակույթի բնականոն ընթացքի մասին:

Ժողովրդը դեռ չէր սթափվել մոնղոլական կործանարար հարվածներից, երբ պայթում է մի նոր, ավելի մեծ աղետ. 1386-ին սկսվում են Լանկ-Թամուրի արշավանքները: Հայտնի է, թե ինչպիսի բարբարոս դատաստան տեսավ Լանկ-Թամուրը Հանի բնակչության նկատմամբ: Մոտ 3.000 մարդու ժայռից ցած գլորեցին, իսկ 7.000 մարդու՝ մեկ օրում տանջամահ արին: Լանկ-Թամուրի մահից հետո (1405 թ.), ծայր են առնում ներքին գահակալական կոիվները: Սուր պայքար է բորբոքվում մանավանդ Ակ-Կոյանլու և Կարա-Կոյունլու թուրքմեն խոշոր ցեղերի միջև, որոնք գլուխ էին բարձրացրել դեռևս XIV դարի 2-րդ կեսին:

Այս բոլորից զատ Վասպուրականի բնակչության գլխից անպակաս էին համաճարակները, սովը, երաշտը, որոնք հազարավոր կյանք էին խլում, ամառի դարձնում գյուղերն ու քաղաքները: Հայաստանի թերևս ոչ մի շրջան այդպիսի ծանր ճակատագիր չունեցավ, ինչպես Վասպուրականը: Դիպուկ է արտահայտվել այդ առիթով գրիչներից մեկը՝ «Աւերեալ քանդեաց զբազում տեղիս, և զբազումս գերեաց, նաև յերկիրն Վասպուրականի և Քաջբերունոյ կին և տղայ ոչ մնաց, այլ զամենայն առեալ

¹¹ Ծարակնոց. երաժշտական երգեցմունք հոգևորականը (կանոն չորրորդ կիրակեի աղոթագրից), Կ. Պոլիս, 1815, էջ 185:

¹² Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, Петербург, 1915, стр. 7.

¹³ Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 261.

¹⁴ Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, Ժ-ի դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 47:

տարաւ»¹⁵։ Այն պահին, երբ ժողովուրդը ենթարկվում է ֆիզիկական ոչնչացման, երբ անդառնալի կորստյան առջև է կանգնում դարերի ընթացքում ստեղծված նրա մշակույթը, նա կարծես տարերայնորեն հակապայքարի է ելնում ի հայտ բերելով ներքին անհաղթահարելի դիմադրողականություն՝ հանուն ազգային ավանդների պահպանման ու հավատի¹⁶։ Մեր կարծիքով Վասպուրա-


¹⁵ Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 419։

¹⁶ Հանուն հավատի կատարվող անձնագոհության գաղափարն է խորհրդանշում «Աքրահամի զոհաբերության» թեման, որը չնայած XIV—XV դարերում դուրս էր եկել կանոնական նկարացանկերից, բայց Վասպուրականում շարունակվում է պահպանվել։ Հավատն այն ժամանակ ենթադրում էր և՛ լեզուն, և՛ մշակույթը, և՛ ազգը։ Այդպիսի գաղափարը պետք է հուզեր Վասպուրականի նկարիչներին, պայմանավորելով զոհաբերության թեմայի գոյատևությունը։ Վասպուրականում դարեր շարունակ հանուն հավատի նախատեսվել են ոչ միայն սովորական հավատացյալներ, այլև՝ եպիսկոպոսներ ու, նույնիսկ, կաթողիկոսներ։

կանի մանրանկարներում ավանդական ձևերի պահպանման հիմնական շարժառիթներից մեկը քաղաքական այդ ծանր վիճակից բխող հանգամանքներն էին, նրա կործանարար հետևանքներից անցյալի սովորույթները փրկելու և վերականգնելու ժողովրդի ձգտումը։

Քաղաքական պարագայից զատ, մասամբ թերևս պայմանավորված դրա հետ, Վասպուրականում դրսևորվող հին սովորույթների պահպանման գործում, կարծում ենք, ինչ-որ չափով դեր է խաղացել նաև վասպուրականցիների և աղթամարցիների մոտ ավանդական-կրոնական սովորույթների անաղարտ պահպանման ձգտումը։ Իսկ վերջինս, բնականաբար, իր ազդեցության շրջանակների մեջ պետք է ընդգրկեր ոչ միայն ծիսական արարողություններն, այլև նաև նիստ ու կացի, գեղագիտական պատկերացումների և ստաջին հերթին պատկերվող թեմատիկայի և նրանց առանձնահատկությունների որոշումը։ Թերևս այս հանգամանքները նույնպես նշանակություն են ունեցել Վասպուրականի մանրանկարներում հնավանդ ձևերի պահպանման համար։





Օ. Ա. ԵԳԱՆՅԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Գանձասարի վանքը երկար դարեր եղել է ոչ միայն Աղվանից կաթողիկոսների աթոռանիստ, այլև հայ գրչության արվեստի նշանավոր կենտրոն, ուր ԺԵ—ԺԸ դարերի ընթացքում ընդօրինակվել են բազմաթիվ մետրոպատառ մատյաններ: Պահպանված ու մեզ հասած այդ մատյաններից 12-ը (№№ 38, 1923, 2277, 2561, 3497, 3542, 3971, 4004, 6513, 8504, 8689, 9923) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ 1-ը (№ 2273)՝ Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի գրատանը: Գանձասարում գրված մի ձեռագիր էլ («Գիրք աղօթից և տաղք», ժամանակ՝ 1713, գրիչ՝ Յակոբ Երեց) եղել է Գալուստ Ծերմազանյանի անձնական հավաքածուի մեջ (№ 27), իսկ մեկ ուրիշը («Աւետարան», ժամանակ՝ 1632, կազմող՝ Պօղոս արեղայ վանեցի)՝ Գանձակի ս. Հովհաննես եկեղեցում (№ 7):

Որպես կաթողիկոսական նստավայր և գրչության արվեստի կենտրոն, Գանձասարի վանքը ունեցել է նաև իր գրատունն ու գրչագիր մատյանների հավաքածուն: Թե ինչ մատյաններ է բովանդակել հավաքածուն և դարերի ընթացքում քանակական ինչ փոփոխություններ է կրել, դժվար է ասել: Փաստ է, սակայն, որ անցյալ դարի վերջին քառորդին այդ հավաքածուից մնացել էին ստանձին փշրանքներ միայն, որոնց և անդ-

րադարձել են Մեսրոպ արքեպ. Սմբատյանցը, Մակար եպս. Բարխուդարյանը և Հակոբ Թովնյանը: Այսպես.

Ա. Մեսրոպ արքեպ. Սմբատյանց, Եկարագիր սուրբ Կարապետի վանից Երևջակայ, Տփլիս, 1904, էջ 125—126՝ «Ի Գանձասարայ—ի 1868 ամի ցուցակի».—Մ. Սմբատյանցի կողմից 1868 թվականին կազմված սույն ցուցակի ուր գտնվելը մեզ հայտնի չէ և չգիտենք, թե քանի ձեռագիր է բովանդակել: Այստեղ այդ ցուցակից հիշատակվում են միայն Երևջակում գրված թվով 6 (№№ 1—6) ձեռագրեր: Այդ 6 ձեռագրերից Մ. Բարխուդարյանը տեսել և արձանագրել է 1-ը (№ 4), այն էլ խիստ քայքայված վիճակում, իսկ Հ. Թովնյանը ոչ մեկը չի տեսել: Արձանագրված 6 ձեռագրերից այսօր որոշակիորեն միայն 1-ն է (№ 6) գտնվում Մաշտոցի անվան Մատենադարանում: Այն նախ մուտք է գործել Գևորգյան-ճեմարանի հավաքածուն (№ 51), ապա 1907 թվականին փոխանցվել է ջմիածնի Մատենադարան («Գևորգյան» հավաքածու № 1195): Մնացած հինգ ձեռագրերի ուր գտնվելը մեզ հայտնի չէ: Բացակայող ձեռագրերն են.

№ 1. «Աւետարան» գրեալ ի թիւն ՌԺԽԴ (1695), ի գիղաքաղաքն Ծօնօթ, ի հայրապետութեան տեսուն Նահապետի»:

№ 2. «Գիրք ստորագրութեանց (ստորո-

գուրեանց) Արիստոտելի՝ գրեալ ի 17 յոթելեանի և 8 թոյ, որ է թիմն հայոց ՊԾԸ (1409), ի Կոքոս վանս, ընդ հովանեաւ սուրբ Նշանին Հազարութիւրք անուանեալ»:

Ո՞ր 3. «Անտարան» գրեալ ի Պօղոս գրչէ, յերկիրն Ծախարունու ձոր, ընդ հովանեաւ Սուրբ Մարտիրոս վանացն... յառաջնորդութեան Եսայեայ վարդապետի, որ նորոգեաց զՍուրբ Կարապետն ի հիմանց... ի թագաւորութեան փոքր Ծախապատին, ի թիմն ՌԾԱ (1652)»:

Ո՞ր 4. «Յայսմատուրք» գրեալ ի թիմն ՌԾԺԲ (1663), ի Ծօնօք, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին... Յիշեցէք զվանահայրն Բիստու Սուրբ Նշանին... որ մերձ է գեղջն Տևու»:

Ո՞ր 5. «Թուղթ» Թօմայի Ագոյիմացոյ՝ գրեալ լամի տետուն 1345 և Հայոց ՉՂԴ, ի վերին վանքն Քոնոյ... ձեռամբ Ֆրէր Յակոբայ...»:

Ա. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԳԱՆՁԱՍԱՐԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Հստ Մ. Սմբատյանի 1868 թ. ցուցակի)

Սմբատյան 1868	Բարխուդար. 1895	Վերջին նմարան	«Վերջին» հավաքածու	Մասնա- դարան
1	—	—	—	—
2	—	—	—	—
3	—	—	—	—
4	1	—	—	—
5	—	—	—	—
6	—	51	1195	3616

Բ. Մակար եպս. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 172—180՝ «Գանձասարի վանք».— Մ. Բարխուդարյանը Գանձասարի վանքում տեսել և արձանագրել է միայն 3 ձեռագիր՝ 1 «Յայսմատուրք» (№ 1), 1 «Սարգիս Ծնորհայի» (№ 2) և 1 «Մեկնութիւն Նարեկի» (№ 3): Այս ձեռագրերից Մ. Սմբատյանը տեսել և արձանագրել է միայն «Յայսմատուրք»-ը (№ 1), իսկ Հ. Թովմյանը ոչ մէկը չի տեսել և չի արձանագրել: Այդ 3 ձեռագրերից այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում առկա են միայն 2-ը (№№ 2, 3), որոնց ստուգությունը, սակայն, թեական է: Այդ ձեռագրերը Մատենադարան են մուտք գործել 1910—1915 թվականների ընթացքում՝ անհայտ ուղիներով: Բացակայում է № 1-ը («Գրչագիր Յայսմատուրք, գրուած թղթի վերայ... բոլորսած և ոչնչացած է»), որը հավանաբար չի պահպանվել:

Բ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԳԱՆՁԱՍԱՐԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Հստ Մ. Բարխուդարյանի 1895 թ.
ցուցակի)

Բարխուդար. 1895	Սմբատյան 1868	Մասնա- դարան
1	4	—
2	—	3780
3	—	4383

Գ. Հակոբ Թովմյան, ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 44—45՝ «Գանձասարի գրչագրերը».— Ցուցակում 1—30 թվահամարների ներքո խիստ համառոտակի արձանագրված են 30 ձեռագրեր, որոնցից և ոչ մէկը Սմբատյանցն ու Բարխուդարյանը չեն տեսել ու չեն նկարագրել: Արձանագրված 30 ձեռագրերից այսօր որոշակիորեն Մաշտոցի անվան Մատենադարանում են գտնվում միայն 14-ը (№№ 1, 4, 7, 8, 9, 12, 13, 15, 19, 20, 24, 25, 27, 28), իսկ մնացած 16-ի (№№ 2, 3, 5, 6, 10, 11, 14, 16, 17, 18, 21, 22, 23, 26, 29, 30) հետագա ճակատագիրը մեզ հայտնի չէ, նշենք միայն, որ պահպանվել են բացակայող № 18 և № 29 ձեռագրերի հիշատակարանները, որոնք մայր ձեռագրերից անջատվել են անցյալ դարի 70-ական թվականներին Խաչիկ Դաղյանի ձեռքով և որոնցից 1-ը (№ 18-ի հիշատակարանը), որպես առանձին միավոր, նկարագրված է նույն ցուցակի «ժողովածու յիշատակարանաց» բաժնում № 39-ի տակ (էջ 35): Բացակայող այդ 2 ձեռագրերի հիշատակարանները Մաշտոցի անվան Մատենադարանի «Պատուիրակների ֆոնդում» գրադեցնում են հերթական 869 և 1017 թվահամարները:

Առկա 14 ամբողջական ձեռագրերից 5-ը (№№ 7, 12, 15, 25, 28) էջմիածին են տեղափոխվել 1885—1905 թվականների ընթացքում և մտել «Վերջին» կոչվող հավաքածուի մեջ, այդ թվում 1-ը (№ 12) «ընդ ձեռն գեր. առաջնորդի Արցախոյ Կարապետ եպս.-ի», 8-ը (№№ 1, 4, 8, 9, 19, 20, 24, 27)՝ 1910—1915 թվականներին, իսկ 1-ը (№ 13), որը Գանձասարից նախ տարված է եղել Հաթերք, ապա՝ Լճենի ու Ստեփաննոսի եկեղեցին, 30-ական թվականներին ձեռք է բերել Երևանի Գրական թանգարանը և 1938 թվականին փոխանցել Մաշտոցի անվան Մատենադարան: Ինչ վերաբերում է բացա-

կայող № 18 և № 19 ձեռագրերի հիշատակարաններին, ապա դրանք, առկա № 19 ձեռագրի հիշատակարանի հետ միասին, որը ի միջի այլոց նույնպես խաչիկ Դադյանի ձեռքով անջատված է եղել մայր ձեռագրից և նկարագրված է նույն ցուցակի «Ժողովածու լիշատակարանաց» բաժնում № 35-ի տակ (էջ 34), էջմիածին են մուտք գործել 1903 թվականին՝ խաչիկ Դադյանի ձեռագրերի հետ միասին: Ավելորդ չի լինի նշել, որ առկա № 19 ձեռագրի 2 մասերը երկար տարիներ պահվում էին անջատ-անջատ, բուն մասը՝ № 3696-ի, իսկ հիշատակարանը՝ № 9379-ի տակ: Միայն վերջերս հնարավոր եղավ նշտել դրանց ինքնությունը և միացնել իրար:

Ստորև տալիս ենք բացակայող 16 ձեռագրերի նկարագրությունը այնպես, ինչպես արձանագրված են Թովմյանի ցուցակում.

2. «Աւետարան, կոստղած, բոլորգիր, անլիշատակարան»:

3. «Աւետարան, կոստղած, բոլորգիր, անլիշատակարան»:

5. «Աւետարան, գրուած ի թագաւորութեանն Լւոնի»:

6. «Աւետարան, ի թիւն Հայոց Ռի (1571), ի դոտն ա. յաթոռիս յԱմենափրկչի և ընդ հովանեաւ ա. Աստուածածնին, ի յերկիրս Խաչեան, ի հայրապետութեան տեսոն Գրիգորիսին՝ որդի Մէհրապ պեկին, իշխանութեան Շահ Թահմասին»:

10. «Կանոնագիրք, մեծադիր, բոլորգիր»:

11. «Յանկ Աստուածաշնչոց»:

14. «Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու»:

16. «Աւետարան, փոքրադիր, բոլորգիր, թուական ՊԶԷ (1438), ստացող՝ Վարդան քահանայ, ոսկեշար և գեղեցիկ նկարներով»:

17. «Աստուածաշունչ, մագաղաթից, բոլորգիր»:

18. «Քարոզգիրք, բոլորգիր»:

21. «Մաշտոց, ճօտրգիր»:

23. «Քերականութիւն, ճօտրգիր, ՊԽ (1391)»:

23. «Ներածութիւն Պորփիրի»:

26. «Բուն Մաշտոց, բոլորգիր»:

29. «Մեկնութիւն Սաղմոսաց, ճօտրգիր»:

30. «Գիրք ստափնութեանց և մոլորութեանց, ՌԾԻԹ (1680)»:

Գ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԳԱՆՁԱՍԱՐԻ ՁԵՌՆԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Հ. Թովմյանի 1900 թ. ցուցակի)

Թովմյան 1900	Գրական թանգարան	Մատենադարան	
		Գեորգյան	Արդի
1	—	—	4185
2	—	—	—
3	—	—	—
4	—	—	4176
5	—	—	—
6	—	—	—
7	—	990	2825
8	—	—	4055
9	—	—	4048
10	—	—	—
11	—	—	—
12	—	368	3196
13	1223	—	7767
14	—	—	—
15	—	1033	3555
16	—	—	—
17	—	—	—
18	—	—	Պ869
19	—	—	3696
20	—	—	4051
21	—	—	—
22	—	—	—
23	—	—	—
24	—	—	3468
25	—	1053	2449
26	—	—	—
27	—	—	3971
28	—	1038	3606
29	—	—	Պ1017
30	—	—	—

Դ. 2արձանագրված ձեռագրեր.—Բացի վերոհիշյալ ձեռագրերից, Մաշտոցի անվան Մատենադարանում առկա են ևս 5 ձեռագրեր (№№ 2399, 3140, 3829, 4411, 9150), որոնք չեն արձանագրված ոչ Սմբատյանցի, ոչ Բարխուդարյանի և ոչ էլ Թովմյանի մոտ: Առաջին ձեռագիրը (№ 2399) էջմիածին է տեղափոխվել 1885 թվականին և մտել «Գեվորգյան» հավաքածուի մեջ (№ 369), երկրորդ, երրորդ և չորրորդ ձեռագրերը (№№ 3140, 3829, 4411)՝ 1910—1915 թվականներին ընթացքում, իսկ վերջինը (№ 9150)՝ 1903 թվականին Խ. Դադյանի ձեռագրերի շարքում: Այն Խ. Դադյանի ձեռքով անջատված է մայր ձեռագրից և որպես առանձին միավոր նկարագրված Թովմյանի ցուցակի Բ մասի «Յիշատակարանք ձեռագրաց» բաժնի № 10-ի տակ (էջ 29): Նշենք նաև, որ № 4411 ձեռագիրը 1818 թվականին Չարեքի վանքից Գանձասար է բերված ժամանակի վանա-

հայր Բաղդասար վրդ. Զալալյանցի ձեռքով: Ամփոփելու դեպքում կարող ենք ասել, որ Գանձասարի նախկին գրատան ձեռագրերից մեզ հայտնի են 43-ը, որոնցից 22-ը (և

2 պատահիկ) այսօր գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մնացած 21-ի (բացի 2-ի հիշատակարաններից) ուր գտնվելը հայտնի չէ: Այսպես.

№№ ը/կ	Ըստ ցուցակների	Զանակ	Առկա	Բացակա
1	Ըստ Մ. Սմբատյանցի	6	1	5
2	Հավելյալ Բաբխուդարյանի մոտ	2	2	—
3	Հավելյալ Թոփճյանի մոտ	30	14(+2)	16(—2)
4	Չարձանագրված	5	5	—
Ընդամենը		43	22(+2)	21(—2)

Ստորև տալիս ենք առկա ձեռագրերի հին և նոր թվահամարների հակադարձ համեմատական տախտակը, որը ամփոփում է մեր ողջ շարադրանքը:

Դ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԳԱՆՁԱՍԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ
ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի)

Մատենադարան		Գրական թանգարան	Գևորգյան ձեռագրան	Չարքի վանք	Սմբատյանց 1868	Բաբխուդար. 1895	Թոփճյան	
Արդի	«Գևորգ- յան»						Գանձա- սար	Հիշատա- կարանք
2399	364	—	—	—	—	—	—	—
2449	1053	—	—	—	—	—	25	—
2825	990	—	—	—	—	—	7	—
3140	—	—	—	—	—	—	—	—
3196	368	—	—	—	—	—	12	—
3468	—	—	—	—	—	—	24	—
3555	1933	—	—	—	—	—	15	—
3606	1038	—	—	—	—	—	28	—
3616	1195	—	51	—	6	—	—	—
3696	—	—	—	—	—	—	19	35
3780	—	—	—	—	—	2	—	—
3829	—	—	—	—	—	—	—	—
3971	—	—	—	—	—	—	27	—
4048	—	—	—	—	—	—	9	—
4051	—	—	—	—	—	—	20	—
4055	—	—	—	—	—	—	8	—
4176	—	—	—	—	—	—	4	—
4185	—	—	—	—	—	—	1	—
4383	—	—	—	—	—	3	—	—
4411	—	—	—	+	—	—	—	—
7767	—	1223	—	—	—	—	13	—
9150	—	—	—	—	—	—	—	10
9869	—	—	—	—	—	—	(18)	39
91017	—	—	—	—	—	—	(29)	—

ՀԱՌԻԾԻ ՎԱՆՔԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազարանոց հավաքածուի բաղկացուցիչ մասերից մեկն է նաև Հատիճի վանքի հալերեն ձեռագրերի հավաքածուն, որը ներկայումս ամփոփում է ԺԳ—ԺԸ դարերում ընդօրինակված տարբեր բովանդակությամբ 23 ձեռագրեր:

Թեև Հատիճի վանքը հայոց հինավուրց վանքերից է և պատմական առանձին ժամանակահատվածներում (X—XI, XII—XIII) եղել է գործող մենաստան¹, սակայն իր հեղինակուհի անկատարի բերումով՝ հայ եկեղեցու և հայ մշակույթի կյանքում առանձին դեր չի կատարել: Այդ օրերից պահպանված և մեզ հասած միակ գրական հուշարձանը Հովհան Ոսկեբերանի Եփեսացոց թղթի մեկնությունն է, որը 1219 թվականին Հատիճի վանքում ընդօրինակել է Հովհաննես գրիչը և նվիրաբերել նույն վանքին (Մատենադարան, № 1382):

Բացառված չէ, անշուշտ, որ Հատիճի վանքում գրված լինեն նաև այլ ձեռագրեր և վանքը ունեցած լինի իր գրատունն ու ձեռագիր մատյանների իր հավաքածուն: Սակայն, ձեռագրերի ներկա հավաքածուն ոչ մի առնչությամբ չունի վանքի նախկին միաբանական կյանքի հետ և կազմված է բացառապես 1830 թվականից հետո, երբ, գրեթե վեցդարյա ընդմիջումից հետո, Ստեփաննոս եպս. Նաժակնյանի և հատկապես նրա հաջորդ Պողոս վրդ. Զալլադյանի ջանքերով կրկին կենդանություն են ստանում Սարգիս Ծոցի հիմնադրած ս. Գրիգորի տաճարն (X դ.) ու Զաքարե Ամիրսպասալարի կառուցած ս. Աստվածածին կաթողիկեն (1201 թ.)²:

Ասածից հետևում է, որ Հատիճի վանքի ձեռագրական ներկա հավաքածուն, մինչև էջմիածին տեղափոխվելը, ունեցել է ընթացմանը 80 տարվա կյանք (1830—1910):

Հավաքածուի 23 ձեռագրերից 2-ը (№№ 2674, 2853) էջմիածին են տեղափոխվել 1880 թվականին՝ Գևորգ Դ-ի կարգադրությամբ³, 1-ը (№ 3946)՝ 1903 թվականին Նաչիկ Դադյանի հավաքածուի կազմում

(№ 34)⁴, իսկ մնացած 20-ը (№№ 2483, 2484, 2665, 2666, 3426—3428, 3630, 3633, 3709, 3711—3715, 3846—3850)՝ 1910-ին, ժամանակի վաճառատու Երեմիա վարդապետի միջոցով:

Նշված ձեռագրերից 15-ը բանասիրությանը հայտնի են Մեսրոպ Տեր-Մովսիսյանի՝ «Արարատ» ամսագրում լույս ընծայած «Նոր ստացված ձեռագրեր» հոդվածից⁵: Այդտեղ Մ. Տեր-Մովսիսյանը խոսելով 1910 թվականին էջմիածին մուտք գործած նոր ձեռագրերի մասին, գրում է. «Հատիճայի վանքի ձեռագրերը թվով 20 հատ էջմիածին բերավ վաճառատու Երեմիա վարդապետը. սոցանից 13-ը Ավետարան, 7-ը՝ եկեղեցական ծիսական այլ գրքեր» և, ապա, 3—5 և 7—17 թվահամարների տակ տալիս է մուտք գործած ձեռագրերից 15-ի նկարագրությունը (տե՛ս կից տախտակը):

Բացատրության կարգով նշենք, որ 8 թվահամարը թյուրիմացաբար կրկնված է. այն պայմանականորեն նշանակում ենք 8ա, 8բ, իսկ 1, 2, 6 թվահամարների տակ նկարագրված են Թավրիզից (№ 1), Կարսից (№ 2) և Երևանից (№ 6) բերված ձեռագրեր:

Թե ում են պատկանել նշված ձեռագրերը նախքան Հատիճի վանքի հավաքածուի մեջ մտնելը, գրեթե ոչինչ հայտնի չէ: Ստորև բերում ենք ձեռագրերի մեջ պահպանված անունների ցանկը.

Աբրահամ վրդ., 1836 թ.—1 (№ 3633):

Հովակիմ և Հովհաննես եղբայրներ, Ադեքսանդրապոլ, 1848 թ.—1 (№ 3712): Նշվիրել են Հատիճի վանքին:

Հովհաննես վրդ. Դարաշամբեցի, Կարսի առաջնորդ, 1799 թ.—1 (№ 3849): Գնել է Ղոշավանքի միաբան Սարգիս վարդապետից և նվիրել նույն վանքին:

Սարգիս վրդ., միաբան Ղոշավանքի, 1799 թ.—1 (№ 3849): Վաճառել է Հովհաննես վրդ. Դարաշամբեցուն:

Սարգիս վրդ. Ծիրակավանքի, 1812—1820 թթ.—1 (№ 2853): Նվիրել է ս. Հովհաննես Մկրտչի տաճարին:

Վարդաբլուր գյուղ, Լոռի—1 (№ 3850):

¹ Արեւ արք. Մխիթարյան, Պատմություն Հատիճոյ Ի Թիբակ, Տիփլիս, 1856: Տե՛ս նաև՝ Ղևոնդ Ալիշան, Ծիբակ, Վենետիկ, 1881, էջ 157—164:

² Անդ, էջ 42—45:

³ Ձեռագրերի վրա կան համապատասխան մակագրություններ:

⁴ Հակոբ Թոփճյան, Ցուցակ ձեռագրաց Դադեան Նաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898:

⁵ «Արարատ», 1910, № 6, էջ 536:

⁶ Անդ, № 6, էջ 535—537, № 7, էջ 623—626:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ՀԱՌԻԺԻ ՎԱՆՔԻ ԶԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

№№ ը/կ	«Արարտ» 1910	Խ. Դաղյան	Մատենադարան		№№ ը/կ	«Արարտ» 1910	Խ. Դաղյան	Մատենադարան	
			«Գևորգյան	Արդի				«Գևորգյան	Արդի
1	—	—	1375	2483	13	7	—	1361	3711
2	—	—	1377	2484	14	8ա	—	1362	3712
3	3	—	1357	2665	15	8բ	—	1363	3713
4	5	—	1359	2666	16	9	—	1364	3714
5	—	—	82	2674	17	12	—	1367	3715
6	—	—	84	2853	18	10	—	1365	3846
7	16	—	1371	3426	19	11	—	1366	3847
8	—	—	1373	3427	20	13	—	1368	3848
9	—	—	1374	3428	21	14	—	1369	3849
10	17	—	1372	3630	22	15	—	1370	3850
11	—	—	1376	3633	23	—	34	—	3946
12	4	—	1358	3709					

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Եթովպիայի եկեղեցու պատրիարքի ընտրության առթիվ	3
Վեհափառ Հայրապետի քարոզը Փրկչի հրաշափառ սուրբ Հարության տոնի առթիվ Մայր տաճարում	4
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	8
Փրկչի հրաշափառ և սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի և նվիրապետական Աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները	11
Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր տաճարում՝ Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ	14
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ	15
Հատընտիր հատվածներ Ավագ շաբաթվա շարականներից	18
ԶԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱՅՈՐԹՅԱՆ—Զատիկի տոնը ըստ հնագույն ավանդությանց	23 ✓
ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐԹՅԱՆ—Հայոց Հայրապետների շիրիմների մասին	25 ✓
ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱՅՈՐԹՅԱՆ—Հովհան Մանդակունուն վերագրվող շարականները	31 ✓
Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ—Հասարակ օրերի կանոնագրությունները	37 ✓
Հ. ՀԱՅՈՐԹՅԱՆ—Ավետարանական պատկերագրության առանձնահատկությունները՝ վասպուրականում	52 ✓
Օ. Ա. ԵԳԱՆՅԱՆ	
Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն	59 ✓
Հատիճի վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն	63 ✓

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱՇԻՆ «ԷՋՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 1/IV 1971 թ.: Ստորագրված է տպագրության 3/V 1971 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 231:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1971 թ.